





3. Եզրե  
Մարմար պու

Ա. Ո Չ Ե Ր Ն  
ՀԱՐՑՈՒՄԱՆԻ ՓԻՒՆ

4. Ենի  
Անջուղի  
2. Բայազիդ պու



Ա. Ռ Զ Ե Ա Ն

ՃԱՐՏԱՍՈՎԱՆՈՒԹԻՒՆ

Հ Ա Մ Ա Ռ Օ Տ Ե Ա Լ

Ի Հ. Ե Կ Ո Ւ Ա Բ Դ Պ Վ Ա Հ Հ Ա Յ Ա Խ Ա Վ Ի Ջ

Ի Մ Ի Ւ Թ Ա Մ Ե Ա Ն Ո Ւ Խ Ե Ն


A 1  
1.5-030  
~~3153~~

ԵՐՐԱՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

Վ Ե Ն Ե Տ Ի Կ

Ի ՏՊԱՐԱՆԻ Մ Ի Ւ Թ Ա Ր Ե Ա Ն

1866





## ՅԱՐ Ա. Զ Ա. Բ Ա. Ն

Որ մինչև յայտմ հուտորականին կանոնաց կա-  
զին աւանդիչք յազգիս , քանզի կէտ առաջի Եղեալ  
էր նոցա 'ի ծայր արուեստին ածել զհամբակս ,  
ու էր մարթ նոցա 'ի սուզ մատենի վարժապե-  
տել :

Այլ քանզի ստուարութիւն դրոց խրտուցանե  
զբազումս՝ որք ու 'ի գագաթն արուեստին վերա-  
նալ ցանկան , ոչ անօգուտ թուի զկարեսրագոյնս  
'ի կանոնաց նորա համառօտել , որով կիսոց զիւ-  
րեսին վերելք բարձու աաճարին , նախ 'ի զիրս  
յայս կրթեալ , և աստի ապա 'ի վարժս բարձրա-  
գոյն դասուն անցեալ . իսկ այլոց , որք առ ստորո-  
տովքն եւեթ գեգերել կամին , մարթ իցէ գէթ  
աղօտաբար զգեվեցկութիւնս նորա նկատել : Ամին  
էրի որպէս զքերականութեանն , նոյն փոյթ Եղե-  
մեղ և զգուռն ճարտասանութեան կազմել զիւ-  
րամատանելի ամենեցուն Առձեռն մատենիւս , առ  
հեշտի համբակաց և վարժապետաց :

Վասն որոց մի ոք մեղադրեսցէ զմեղ իբր օտա-  
րին վաստակաց յափշտակող , աւսանելով 'ի ամա-

բազում ինչ յերկուց առաջնոցն մերոց հսկառ,  
բայց ժողովեալ. քանիզի մեզէն իսկ խոստովանիմք.  
զի դըեթէ զնոյն նոցին բանս հոգացաք համառօ-  
տել. և զքերթողականին իսկ կանոնա 'ի դազզիա-  
կան քերականէն 'ի կիր առեալ, որ նախ առաջին  
զայնցանէ գրեաց: Զի ոչ ինչ տեօթ համարիմք  
զհոգեկցորդ և զուսումնակից եղբարցն մերոց և  
զվարժապետաց ձոխութիւնս 'ի կիր առնուլ, ըզ-  
մատենազրի անուսն ոչ թեկն ածելով:

Արածեմք եւեթ զուսուցիս մանկաւոյ, ըսուլ  
զթերին համառօտութեանս, և վերլուծանել  
համբակաց զօրինակս ձեռց ածեալս ոյսր առ 'ի  
նախնեաց, և տալ նոցա 'ի միա առնուլ՝ թէ որ-  
պէս մարթէր զնոյն բանս պարզաբար առանց ձար-  
տասանական ձեռց առել, և թէ յորում օրինա-  
կացն իւրաքանչիւր իցեն զեղեցկութիւնք, զոր  
ոչ էր մարթ առնել մեզ առանց ստուարացու-  
ցանելոյ զմատեանս:

# Ա. Ո. Զ Ե Ո. Ն

## Ճ Ա. Ր Ց Ա. Ս Ա Կ Ա Խ Ո Ւ Թ Ի Ի Ն

—♦♦♦—

### Գ Ա. Ա.

Ընդհանուր պիտելիք զնարտասանութենէ :

Հ. Զինչ է ճարտասանութիւն .

— Արուեստ բարւոք խօսելոյ :

Հ. Քանի՞ ինչ կարեւոր են առ բարւոք  
խօսել .

— Երեք . պարզութիւն , վայելչութիւն ,  
զօրութիւն :

Հ. Զիարդ յօրինի պարզութիւն 'ի խօսս .

— Պարտ է զսեփական զաղգային ըդ-  
նախնի ընտիր մատենագրաց զրառս ըստ  
բնիկ նշանակութեան , և զնոցին եղանակս  
բանից 'ի կիր արկանել , և մի զեկամուտս ,  
զնորահնարս և զանսովորս :

Նմին իրի սլարտ է ճարտարախօսի յա-  
ճախել 'ի վերծանութիւն քաջաց մատենա-  
գրաց , և ներկուռ 'ի բնիկ բարբառն զոլ :

Հ. Ալա ուրեմն ոչ է մարթ ճարտարել

բառս արտաքոյ այնոցիկ՝ որ առ մատենադիրս գտանին .

— Մարթ իսկ է ըստ պատշաճի յօրինել ածանցականս և բարդել, այլ խնայելով և բազում զգուշութեամբ ըստ քերականական խիստ կանոնաց :

Հ. Եւ իցէ բաւական առ ՚ի պարզութիւն երկիւղած նմանութիւն նախնեաց ՚ի բառս և յեղանակս բանից .

— Ամենեին ոչ . զի այդ նիւթական և թէ պարզութիւն . այլ կարենորագոյն ևս խնդրի պարզութիւն խմաստից . վասն որոյ պարտ է ճարտարախօսին քաջ Երկնել ՚ի մտի զիմաստս, և ապա ձնանել : Զի եթէ որ խօսին՝ ոչ քաջ ըմբռնիցէ զիմաստս, անհնարին է թէ պարդ իմացուցէ զայն որում խօսին :

Առ այս կարենոր է զգուշանալ և ՚ի կարի համառօտութենէ ՚ի բացատրելն զիմաստս, և ՚ի հակառակէն այնորիկ յաւելորդ շատախօսութենէ :

Հ. Կարիցնս օրինակաւ պարզաբանել ինձ դվարդապետութիւնդ .

— Բուղանդայ կամելով ասել և թ վասն եպիսկոպոսին Դանիէլի, թէ յաւուրս ձմերայնոյ խորհէր զնալ ուրեք ընդ ձիւնախաղաղ լերինս, այսպէս բազմաբանութեամբ տնիմանալի առնէ զբանն . « Յաւուրս ձմերայնոյն՝ յորժամ՝ կուտեալ դիղեալ մեծութիւն բազմութեան թանձրութեան ձեանց, կուտակեալ հիւսեալ

ձեանց 'ի վերայ ձմերային լերանց , յայն-  
պիսի լերանց վերայ , ընդ այնպիսի ժա-  
մանակի կամմեր ուրեք երթալ 'ի պէտս  
ճանապարհի :

Հ . Զի՞նչ թերութիւն գտանես 'ի բանիս .  
Եւ հանզեան ընդ վարսագեղ ծառովնե ,  
որ շուր մեծ 'ի պարտիզի անդ գործէր :

— Մարթի բառիցն ընտիրս գու և զբնիկ  
նշանակութիւն խրեանց պահել , և իմաս-  
տիցն յերկարանչիւրոց ևս ծայրայեղ խո-  
տորմանց հեռի կալ՝ յաւելորդաբանութե-  
նէ , և 'ի կարի համառօտութենէ , այլ երկ-  
դիմութեամբ միոյ 'ի բառիցն կորուսանել  
զպարզութիւն . որպէս բառդ շուր աստա-  
նօր՝ զվայելութիւն և զհովանի անխտիր  
նշանակելով :

Մարթէ յաճախագոյն ևս 'ի յոռի շարա-  
գրութենէ բառից կորուսանել բանին ըզ-  
պարզութիւն . վասն որոյ պարտէ ճարտա-  
րախօսի յիշել միշտ զտո 'ի նախնեացն ա-  
ւանդեալ սահման քերականութեան , զի  
« Քերականութիւն է հմտութիւն , որք 'ի  
քերթողաց և 'ի շարագրաց իբրու բա-  
զում անգամ ասացելոց » . այսինքն է  
զի ոչ զամենայն եղանակո բանից նախ-  
նեաց օրէն է 'ի կիր արկանել , այլ զյա-  
ճախագոյն առ 'ի նոցանէ 'ի կիր արկեալո :

Հ . Զիարդ վայելու և զօրաւոր յօրինին  
ճառք .

— Ոչ է մարթ համառօտիւ զպատասխա-  
նի առնել հարցուածոյդ . զի դա հարկ առ-

Նէ ինձ զամենայն աղջս աղջս հանդիսից  
ճարտասանութեան առաջի առնել, և զիւ-  
րաբանչիւր նոցա պատշաճեալ ձեւս առ ՚ի  
զարդ և զօրութիւն, և զքերթողականին  
իսկ փոքր ՚ի շատէ տալ զկանոնս:

### ԴԱՍ Բ

Երեք աղջք ճարտասանութեան. — Յառաջարա-  
նութիւն. — Առաջարկութիւն. — Բաժանումն:

Հ. ՚Քանի աղդ են ճարտասանութեան.  
— Երբեակ. կացրդական, բաղխոհա-  
կան, ատենական:

Հ. Զի՞նչ է կացրդականն.

— Պարսաւ կամ գովեստ զիրաց ինչ.  
վասն որոյ կացրդականք են ներբողեան և  
դամբանական ճառք, և որ ՚ի ծնունդս, ՚ի  
հարսանիս, կամ որ ՚ի շնորհակալութիւն  
և յուրախակցութիւն յօրինին:

Հ. Զի՞նչ է բաղխոհականն.

— Համոզել զոր յօդտակարն և խորշե-  
ցուցանել ՚ի վեասակարէն. վասն որոյ  
բաղխոհականք են ամենայն խրատական  
և յորդորական ճառք, և որովք ճարտա-  
րախօսք երբեմն վարէին յատեանս տես-  
չութեան իրաց աշխարհին:

Հ. Զի՞նչ է ատենականն.

— Ամբաստանութեան կամ ջատագո-  
վութեան ճառ, որպէս որ յատենի ՚ի լուր  
դատաւորաց ճառին:

Հ. Առ ինչ զանազանութիւնս այս է պիտանի:

— Առ ՚ի սահմանել զկէտ նպատակի ճարտարախօսին. զի ՚ի կացրդականն և ՚ի բաղխոհականն առաւել ջանալի է նմա զկամսն և զսիրտ շարժել, իսկ յատենականն հաւանեցուցանել զմիտու. և ըստ այնմ պատշաճի զձես ճարտասանականս ՚ի կիր արկանել, և համեմատ առաջարկութեան զոհ ճառին յերիւրել:

Հ. Իցեն ինչ որ այս ամենայն աղզի աղզի ճառից անխտիր պատշաճիցին.

— Այս ամենայն իրօք. և այսորիկ են վեցեակ մասունք ճառին, որ են՝ յառաջարանութիւն, առաջարկութիւն, պատմութիւն, ցուցումն, յորդոր, և վերջարանութիւն:

Իբր ոչ եթէ այս ամենայն մասունք յամենայն ճառս անհրաժեշտ կարեւորք իցեն, այլ ՚ի կարդաւոր ճառս այսորիկ առաւելագոյն մասամբ մտանեն:

Հ. Զի՞նչ է յառաջարանութիւն.

— Պատրաստել զմիտու ունկնդրաց ՚ի լուր բովանդակ ճառին:

Հ. Զի՞նչ կարեւոր է յառաջարանին.

— Նախ զի անդստին ՚ի բնէ ճառին առեալ իցէ, և քաջ ընդ նմա կցորդեալ. վասն որոյ խրատէ կիկերոն՝ խորհել նախ զբովանդակութիւն ճառին, և ապա յօրինել զյառաջարանն:

Երկրորդ՝ առաւելագոյն զգուշութեան

պէտք են 'ի յառաջարանին առ 'ի բաց բացարութիւն իմաստից և 'ի բարւոք շարադրութիւն . զի 'ի սկզբան անդ ունկնդրացն միտք և լսելիք գեռ անխոնջք՝ զիւրաւ ստղտանիցեն զթերութիւն : Դարձեալ և 'ի հակառակէն առաւել քան ամենայն ուրեք 'ի յառաջարանելն խուսելի է 'ի պահունանաց . զի ինքնազարդ պարզութիւն կարեւոր հանգամանք են յառաջարանութեան :

Երրորդ՝ պարտ է յառաջարանութեան լինել հանդարտ և մեզմ, եթէ ոչ դէպք ինչ անակնկալ պատճառս տացեն յանկարծական յառաջարանութեան . այլ յայնժամ պարտ է զընթացս բովանդակ ճառին պատշաճել նմին, ապա թէ ոչ նուազեալ անկանի բանն :

Չորրորդ՝ մի ինչ 'ի զօրաւոր փաստից յիշատակեսցի 'ի յառաջարանին . զի այն ապա 'ի բնիկ տեղւոջն ոչ ինչ աղդեսցէ :

Հինգերորդ՝ պարտ է յառաջարանին համեմատել չափոյ երկայնութեան ճառին և գեղեցկութեան . որպէս զի մի դուռն քաղաքին գեղեցկագոյն քան զքաղաքն իցէ, կամ քաղաքին վտանգ առաջի կայցէ փախչելոց 'ի բաց, ըստ ծաղրական Դիոզինեայ առակին :

Հ. Զինչ է առաջարկութիւն .

— Պարտ է ճարտասանին յաւարտ յառաջարանութեանն առաջի առնել զարածառոս ճառիցն . և այն կոչի առաջարկութիւն :

Եւ պարտ է առաջարկութեան գոլ բացայայտ և ճիշդ, որովհետեւ խմացուած բռվանդակ ճառին յայն հաստատեալ է :

Եթէ պատճառք ճառին քաջածանօթք իցեն, մարթ է նորաձեւ իմն զառաջարկութիւնն առնել առ ՚ի զարթուցանել զլոելլու . զոր օրինակ Աէնիէրի ՚ի ճառել զատուածութենէ Փրիստոսի, այսպիսի յօրինէ առաջարկութիւն .

« Եթէ Փրիստոս չէր աստուած, ամպարը տագոյն քան զամենայն մարդիկ գտանէր » :

Ոզնէ բազում ուրեք և բաժանումն ՚ի ուարզութիւն առաջարկութեանն և ճառին :

Հ . Ո՞ր իցեն կանոնք բաժանման .

— Նախ՝ զի մի մին ՚ի մասանց բովանդակեսցի ՚ի միւսն, այլ իսկապէս զանազանեսցին ՚ի միմեանց :

Երկրորդ՝ զի մասունքն ՚ի միասին բռվանդակեսցեն զառաջարկութիւնն :

Երրորդ՝ զի մի բազմամասն իցէ բաժանումն, այլ գուն ուրեք աւելի քան զերիս մասունս :

Չորրորդ՝ զի մի արուեստակեալ իցէ բաժանումն, այլ ՚ի բնէ առաջարկութեանն յառաջ ածեալ :

Այս ամենայն պայմանք քաջ պահին ՚ի բաժանմանն՝ զոր Մասիսիոն առնէ ՚ի ճառն չարչարանաց փրկչին . զի զրնաբանն՝ « Ամենայն ինչ կատարեալ է », բաժանէ,

յերիս այսպէս . քանզի կատարեցաւ ար-  
դարութիւն առ ՚ի յԱստուծոյ , չարութիւն  
առ ՚ի մարդկանէ , և սէրառ ՚ի ՚Քրիստոսէ :

### ԴԱՍ Գ

Պատմութիւն . — Յուցումն ՚ի ներբին տեղեաց . —  
Աահման . — Թուումն մասանց և Ստուգարա-  
նութիւն :

Հ . Զինչ է պատմութիւն , զոր երրորդ  
մասն ճառի ասացեր .

— Պատմութիւն ՚ի դատասացութիւնս  
առաւելապէս ունի զտեղի , և է մի ՚ի կա-  
րեորագոյն և ՚ի դժուարին մասանց ճա-  
ռին . զի պարտ է անդ ճարտասանին զա-  
մենայն ինչ ասել ճշմարտութեամբ , և մի  
ինչ յեղծումն իւրոյ դատին :

Պարտ է նմա անդստին արկանել զհի-  
մունս ցուցակութեանց ճառին , պարզելով  
զհանգամանս նպաստամատոյցս իւր , և  
տկարացուցանելով զհակառակորդին :

Ի բացայայտութիւն պատմութեան ընդ  
նախասացեալ պայմանս ինդրին և առա-  
ւելագոյն խնամք՝ ՚ի ճշգրտապատում առ-  
նել զանձինս , դժամանակ , զտեղի և զայլ  
կարեոր հանգամանս :

Պարտ է դարձեալ հաւանական յօրինել  
զպատմութիւնն , և համառօտ՝ առանց ա-  
ւելորդ հանգամանաց :

Ի վարդապետական ճառս զտեղի պատ-

մութեանն ունի բացատրութիւն իրացն ,  
զորմէ ճառըն են :

Հ . Զի՞նչ է ցուցումն , զոր չորրորդ մասն  
ճառի ասացեր .

— Հերքել ինչ կամ հաստատել փաս-  
տիւք : Քանզի պարտ է ճարտասանին յետ  
՚ի ներքս ածելոյ զառաջարկութիւնն՝ ցու-  
ցանել զայն , գտանելով փաստսզօրաւորս ,  
և բարւոք կարգաւորելով զգտեալսն :

Հ . Ուստի խնդրելի են փաստք .

— Տեղեաց , ուր փաստիցն զիւտք են ,  
կէսք կոչին ներքինք և կէսք արտաքինք ,  
ոմանք հասարակք և այլք յատուկք :

Հ . Ո՞ր իցեն ներքինք :

— Ներքին տեղիք են , որ 'ի ընէ առա-  
ջարկեալ իրացն տան ապացոյցս . որպի-  
սիք են՝ սահման , թուումն մասանց , ստու-  
զաբանութիւն , լծորդք , սեռ և տեսակ ,  
պատճառ և դործ , նմանութիւն և աննմա-  
նութիւն , բաղզատութիւն , հակազրու-  
թիւն , նախընթաց և հետեւորդ և յարա-  
կից հանգամանք :

Հ . Զի՞նչ է սահման .

— Սահմանն է բան բացայայտիչ ընու-  
թեան իրին . որ ըստ իմաստասիրաց հա-  
մառօտ կազմի՝ բաղկացեալ 'ի սեռէ և 'ի  
տեսակէ . որպէս սահման մարդոյ՝ կենդա-  
նի բանական :

Բայց ըստ ճարտասանից ոչ 'ի սեռէ և 'ի  
տեսակէ՝ այլ 'ի դործոց և 'ի պատճառաց և  
յայլոց հանգամանաց կազմի ընդարձակա-  
զոյն , և կոչի ստորագրական սահման :

Այսպէս Ասկերերան ստորագրէ զարձաւակը .

\* Չիք և շիք ինչ անխմաստագոյն քան դրնչիցն ծառայ . թուի թէ իշխեսցէ , և իշխան ՚ի զլուխ ունի . թուի թէ տէր իցէ , և ծառայութիւն հարկանէ . կապանս վարակէ զանձամք , և ուրախ է . զրգէ զգաղանն , և բերկրի . ՚ի գերութեան՝ վարեալ , ցնծայ և խայտայ . շուն կատաղի տեսանէ ՚ի վերայ դիմեալ ոգւոցն , և յանհոգս է . զոր պարտ էր խառանել և սովամահ առնել , առատացեալ յանխընայ՝ շանի առ կուրծսն կուտէ , զի ևս քան զեօ ՚ի վերայ խաղայցէ և ահազինս լինիցի :

Հ . Զինչ է թուումն մասանց .

— Չե բանի՞ որով ճարտասանն դիւրաքանչիւր մասանց իրիք ասէ որ ինչ զրուցրէն է իմանալ :

Արագէս Նարեկացւոյն զեղեցիկ հատուածն , յորում զհոգւոյն նաւակոծութիւն՝ այլաբանաբար նկարագրէ .

\* Ուստի նաւն ՚ի բաղխմանէ վայրենի ալեացն խորտակեցաւ . թեոցն ձեռնարկութիւն քայլայեցաւ . կայմն ամբարձման ՚ի կայից իւրոց խլեցաւ . առագաստին թոշարան յանկարկատելի ծուէնս պատառեցաւ . շինուածոյն շուք անզարդեցաւ , առասանիք ձգողականաց խզեցաւ , տեսաբան զիխոյն դիտակի խոնարհեցաւ , ապաւանդակին պարան կտրեցաւ , ապաւինութիւն խարսխին լուծաւ ,

լուծք ստուարք ամոլիցն կցորդութեան  
բաժանեցան, սամիք ուղղչացն հետոց  
գալարեցան, լաստ հիմանն հաստարա-  
նի ընկղմեցաւ, ղեկացն կառուցմունք  
անդրէն սուզան, շուոցն յարմարութիւն  
սլակասեցան, ողնափայտին պատսպարան  
խկոյն ընկաւ, կապարանք դստին հաս-  
տուածոյ յօշոտեցաւ, գոզք ամփոփման ծո-  
ցոյն կազմածոյ անարգեցան, խելք շըր-  
թանցն եղերաց խախտեալ ոստեաւ,  
պաղպաջունք բաղմականացն անկեալ բար-  
ձաւ, վանդակասպատին վայելչութիւն յա-  
տակեցաւ, գահաւորակին հանգստարան  
շփոթեցաւ, մածմունք տախտակաշարք՝ի  
միարանութեանց միմեանց անջատերան,  
հեղոյաք պնդման ըևեռացն քարշեցան.  
արգասիք իրին յիշատակարան ողբոց ինձ  
նմանեցաւ: ‘Եաւուզիզն հանդէալ նաւին  
դեղերեալ ողբայ, ձեռն՝ի ծնօտի եղեալ  
արտասուաց գետս իջուցանէ»:

Հ. Զինչ է ստուգարանութիւն.

— Ստուգարանութիւն է, ըստ ճարտա-  
սանից, ’ի նշանակութենէ անուան ածել  
զհաստատութիւն. զոր օրինակ՝ Պարտ է  
իմաստասիրի սիրող զոլ իմաստութեան:

Բստ այսմ է և Արիզեայ ստուգարա-  
նութեամք անուան առն իւրոյ պարստաելն  
զնա. « Ան դիցէ տէր իմ զսիրտ իւր՝ի վե-  
րայ առն ժանափ Նարազայ, զի ըստ ա-  
նուան նորա և ինքն է. Նարազ անուն  
նորա, և անզգամութիւն ընդ նմա»:

Եւ Ասկերերան այսպէս պարսաւէ ըղիւն կատակառութիւն .

« Եւ զի ուսանիցիս , միտ դիր . և անուն իսկ խեղիատակութեանն յանդիմանիչ է կատականացն . յայտ է թէ չէ առողջ և կատակն . նախ ինքն իսկ ՚ի յանձնէ կատակի , զի հարկ լինի եւ զերեսն ծռել , և զրերանն և զաշսն այլայլել : Զի հարկ է նմու այնուհետեւ և գկերակարանս և ըզծազր և զզնացս փոփոխել , և հտպտել , և ամենեցուն նմանել , և ազգի աղզի պարսաւանս հնարել իմանալ . և հեռի են ՚ի քրիստոնէից գուսանական բանք » :

### ԴԱՍ Դ

Լծորդք . — Աւու և տեսակ . — Պատճառք և զործք .  
— Նմանութիւն և աննմանութիւն . — Բաղզա-  
տութիւն :

### Հ . ԶԻՆԸ ԵՆ ԼԾՈՐԴՔ .

— Լծորդք են՝ որք անդստին՝ ինմին բա-  
ռէ ածանցեալ՝ իբր թէ լծորդին ընդ ար-  
մատոյն : Այդ որպէս ՚ի ստուգարանութե-  
նէ անուան , այսպէս և ՚ի լծորդ բառից  
կամ յածանցականաց առնուն ճարտա-  
սանք զհաստատութիւն . զոր օրինակ  
« Մարդ եմ , և զմարդկայինս յինէն ոչ  
օտար համարիմ » :

Բատ այսմ և Ասկերերան ասէ .

« Եւ քանզի սրբութիւն արար զնա մեղաց

մերոց, կացցուք մնասցուք սուրբք, և մի  
ինչ կալցուք աղտ յանձինս. այլ զգ եղն  
և զվայելցութիւնն զոր զգեցոյց մեզ՝ պա-  
հասցուք անարատ, զի ոչ ինչ գտանիցի  
աղտ և խորշ կամ թէ այլ ինչ այնպիսի ։

Հ. Զինչ է սեռն և տեսակ.

— Անո կոչի բոլոր ինչ, որ պարունակէ  
ընդ իւր և բաղում մասունս այլատեսակս.  
և տեսակ, որ պարունակէ ընդ իւրեւ բա-  
ղում անհատս։ Արդ է ուրեք զի ճարտա-  
սանն զհանգամանս պատշաճեալս սեռին  
կամ տեսակի հասարակաբար նկատեալ,  
ապա զառաջարկութիւնն որ ընդ նորօք բո-  
վանդակի՛ ՚ի վերայ ածէ։ Ըստ այսմ Եղի-  
շէ վարդապետ առ ՚ի ներբողել զհրաշալի  
արգասիս աստուածսիրութեան ՚ի սուրբ  
Վարդանանս, նախ զսիրոյն Աստուծոյ  
հասարակաբար յօրինէ ներբող, և ապա  
յառաջարկութիւն մատչի .

« Անձ է սէրն աստուծոյ քան զամենայն  
մեծութիւն երկրաւոր. և այնպէս աներ-  
կիւղա առնէ զմարդիկ՝ իրրեւ զանմարմին  
զօրս հրեշտակաց. որպէս անդստին ՚ի  
սկզբանէ է տեսանել զբաղումս բաղում  
անդամ ՚ի բաղում տեղիս։ Վարդիկ, որ  
սիրովն Աստուծոյ իրրեւ զինու վառեալք  
էին, ոչ ինչ խնայեցին զանդիտելով իր-  
րեւ զանարի, զոլով վատասիրար, կամ  
՚ի մահ անձանց, կամ յափշտակութիւն  
ընչից, կամ ՚ի խողխողումն սիրելեաց,  
կամ ՚ի զերութիւն ընտանեաց, ելանել

՚ի հայրենի երկրէն և անկանել ՚ի սորրեկութիւն յօտարութեան։ Որպէս յայսմժամանակի տեսաք աչօք մերովք զի ըդնոյն նահատակութիւն նահատակեցաւ և աշխարհօ Հայոց ։ Քանզի իբրև ետես մեծնվարդան և այլն։

Հ. Ո՞րպէս ՚ի օգատճառաց կամ ՚ի գործոց մարթ իցէ առնուլ ապացոյց։

— Քաղում ուրեք ճարտասանն ՚ի հանգամանաց պատճառին զլաւութիւն կամ զյուսութիւն գործոյն առնու ցուցանել, և կամ զհակառակն ։ Այսպէս Սարգիս վարդապետ կուտակութեամբ եղեռնական գործոց ագահութեան պարսուէ դախտն։ Ա Սակայն արմատ ամենայն չարեաց արծաթսիրութիւնն է, ըստ առաքելոյն, և ագահութիւն։ Վասն զի շիք և շիք ինչ չարիք, որ ոչ ՚ի սոցանէ ծնանին։ առելութիւն մարդկան, խռովութիւն, և պատերազմ առ աղդակիցս, պոռնկութիւն և գողութիւն և սպանութիւնք, և այլ ևս անթիւ վեասք՝ զորս ով ոք կարէ թուել։ Զի եթէ, զտէրն ամեղերաց և զարարիչն արարածոց ՚ի վաճառ էած այս ախտ և ետ ըսպանանել, զինչ այլ ինչ մնայ ՚ի չարեաց՝ զոր ոչ կարիցէ գործել։ Եւ եթէ զառաքեալն՝ դիմիատոսի ընտրութեանն արժանաւոր՝ այնպէս վազվաղակի զերի առեալ տարաւ, և զթիւն պակասեցոյց, և յահաւորսն զնայանդ գնեցոյց, ապա ով ոք կարէ կալ առաջի բուռն զօրութեան նորա ։

Գարձեալ և 'ի զիրս խմաստութեան .

« Բնդ որոց թէ ընդ զեղն զտարձացեալք  
զնոսա առառածածս կարձիցեն , զիտաս-  
ցեն թէ որչափ ևս նոցա տէրն առաւել  
լաւ է . զի որ զեղեցկութեան արարչա-  
պետն է՝ նա հաստատեաց զնոսա : Ասկա  
թէ ընդ զօրութիւնս և ընդ ազդեցու-  
թիւնս զարմանայցեն , խմասցին 'ի նոցա-  
նէ՝ որչափ ևս որ կազմեացն զնոսա ա-  
ռաւել զօրաւոր է :

Հ . Մարթ իցէ և 'ի նմանութենէ կամ  
յաննմանութենէ ցուցանել ինչ .

— Այս ամեննեին . բայց 'ի յոյզո կրից  
դուն ուրեք վարի ձեօ այս . և ոչ երբէք  
օրէն է յանձանօթ իրաց առնուլ նմանու-  
թիւն կամ աննմանութիւն : Որինակ իմն  
յնսկերերանէ վասն նմանութեան .

« Զտեսաննս և զմարմնոց իսկ զաշս . յոր-  
ժամ հանապաղ ընդ ծուխ գայցեն , ար-  
տօսր բերեն . եւ յորժամ 'ի խազաղ օգս  
և 'ի մարզս և յաղրիւրս և 'ի դրախտս  
զրօսնուցուն , առողջագոյնք և քաջա-  
տեսք : Նոյնպէս և մտացն ակն եթէ յեղ-  
տիւրս հոգեւոր բանիցն ճարակիցի , սուրբ  
յստակ և քաջատես լինի . իսկ եթէ ընդ  
ծուխ ինչ աշխարհի իրացս դայցէ , բժա-  
րեր արտօսրալից լինիցի , և զազդի աղ-  
զի լալիւնս լայցէ և աստ և անդ » :

Այլ օրինակ 'ի Լամբրոնացւոյն .

« Ոչ է այս արութիւն զինուորի՝ յիւր ա-  
պարանս թուր շողացուցանել , և զօդ

հարկանել . այլ որ 'ի հանդիսի տեղին ի-  
ջանէ , և ընդդէմ ախոյեանին կայ . 'Առյու-  
ղէս իմա , զի չէ ուզիղ մարտ հոգեոր'  
որ 'ի Չորոյ զետ նստի , և զիս 'ի Կիլի-  
կիտ յաշաղէ » :

« Եւ արդ աղէ ասա . ճարտարախօսն ոչ  
զվերջին բանսն փութայ առաւել յօրի-  
նել , զի գովեալ դրուատեալ մեկնիցի :  
Եւ սպասաւորն վերջին նուազաց կարի  
սպատկառ կայ , զի մի սպարսաւ լիցի : Եւ  
նահատակն եթէ ոչ զվերջին մարտն ա-  
ռաքինազոյն ցուցանիցէ , ոչ ապաքէն  
ամենայն աշխատութիւնն անօգուտ է :  
Եւ նաւավարն եթէ յամենայն ծովուն ըդ-  
գուշանայցէ , և մօտ 'ի նաւահանդիստն  
իրիցէ զնաւն կամ բախիցէ , ոչ ապա-  
քէն զառային վաստակն կորոյս . Եւ  
բժիշկն եթէ թեթևացուցանիցէ զցաւ հի-  
անդին , և յորժամ մօտ 'ի կատարեալ  
առողջութիւն ածիցէ , յայնժամ զեղծցի ,  
ոչ ապաքէն զամենայն ջանն կորոյս :  
Այսնպէս և որ զառաքինութեան կատա-  
րումն ընդ սկզբանն ոչ միաբանեն , եղ-  
ծանին և կորուսանեն զամենայն : 'Առյու-  
ն 'ի կառամարտիկսն , որք 'ի զիսոյ աս-  
պարիզացն սկնդակաղմ զերիվարսն ար-  
ձակեն , և յետոյ մեղկիցին ինչ և ծու-  
լանայցեն , ոչ պարզեացն հասանեն , և  
ոչ 'ի տերանցն ճանաշին » . Ասկեր :

Իսկ յաննմանեաց այսպէս ածէ հաս-  
տատութիւն Սարզիս վարդապետ .

Զոր օրինակ առանց Քրիստոսի չկարէ  
որ արդարագործութիւնս առնել, զոր և  
ինքն իսկ ասաց՝ առանց իմ ոչ ինչ կա-  
րէր առնել, նոյնպէս և ոչ առանց սա-  
տանայի մեղս գործէ ոք :

Հ. Զի՞նչ է 'ի բաղդատութենէ ցու-  
ցումն .

— Յորժամ ճարտասանն 'ի մեծէ ըդ-  
փորբն , կամ 'ի փոքուէ զմեծ և կամ 'ի  
հաւասարէ զհաւասար յառաջ ածէ . զոր  
օրինակ .

« Եթէ առ Աստուածն իւր սուտ գտաւ,  
առ ո՞ որ 'ի մարդկանէ դա արդար գտա-  
նիցի » . Եղիշ . պատմ :

Երկրորդին օրինակ .

« Եթէ մեր հեռագոյնս 'ի ձենց՝ միայն 'ի  
լսելն այսպիսի ընկալաք յանձինս մեր  
սուդ դառնութեան . ապա ո՞րչափ ևս ա-  
ռաւել գուք հազորդեալքդ 'ի չարչարանս  
ընդ հօտից ձերոց » . Յովհ . կար :

Օրինակ Երրորդին .

« Համարիք , եթէ այն գալիլիացիք եղեն  
մեղաւոր քան զամենայն գալիլիացիս , զի  
զայնպիսի անցս կրեցին . ոչ , ասեմ ձեզ .  
այլ եթէ ոչ ապաշխարիցէք , ամեներին  
նոյնպէս կորնչիցիք » . Ղոկ . Ժ. 42:

## ԴԱԼՈՒ Ե

Հակաղը ու թիւն . — Կամբարէնթաց և հետեւորդ և  
զօրակից հանգամաննք . — Արտագին աւղիք :

Հ . Զինչ է ՚ի հակաղը ութենչ ցուցումն :

— Ճարտասանին բազում ուրեք զներ .  
Հականս առ միմեանս կացուցանելով , յաւ-  
ելու զօրութիւն մեծ ՚ի բանս . զոր օրի-  
նակ . « Որ ինքն խր չար է , այլում բարի  
ոչ կարէ լինել , և որ ինքն բնդ խաւար  
զնայ , այլում ոչ առաջնորդ է ճշմարտու-  
թեան լուսով : Որովէս զի չիք յանիրա-  
ւութենչ արդարութիւն , այսովէս ՚ի սր-  
տութենչ ճշմարտութիւն » . Եղիշ . պատմ :

« Չեկաց դահիճ առընթեր՝ զկողս քերել  
առ ՚ի զոհս մատուցանելոց ՚ի հարկէ . այլ  
հասեալ կայ ՚ի վերայ սաստիկ ցանկու-  
թիւն ընչից և ագահութիւն , և փորէ  
զաշս : Ոչ ոք ՚ի զօրականաց արկ զմեզ ՚ի  
խարոյէ և կացոյց ՚ի վերայ կասկարա-  
յից . այլ մարմնաց բոցն բորբոքեալ առա-  
ւել բան զայս այրէ զողիս : Չկայ մօտ  
թաղաւոր՝ բազում պարզե խոստացեալ  
առ ՚ի զերծուցանել , ՚ի մօտ կան մոլե-  
կան փառք , որ չար բան զայն խոտր-  
զեն » . Ասկեք :

Եւ Եղիշէ ՚ի խրատն միանձանց .

Հիւ արդ ես տեսանեմ՝ ի մերում աշխարհ-  
հիս և ոչ զոր ազատեալ յայսօլիսի աղե-  
տից։ Յետո ընդդէմ ընթերցաք զգեղեցիկ  
զրեալոն։ Ի պատճառս ուխտաւորութեան  
հեռացաք ի սուրբ ծնողացն, և արարաք  
բաղում հարս օտարուախս, զորս պատուե-  
լոց արժանի էր՝ անարզեցաք, և յորս ոչն  
ունէաք իշխանութիւն զնել մեծարանս,  
զախտ աղետից մերոց յոյժ ծախեցաք։ Ա-  
զատեցաք ի հարկաց արքունի՝ զորս ա-  
ռանց մեղաց էր հարկիլն, և մոտաք ընդ  
հարկաւ ստացուածոց՝ որ լի են անառոկ  
ազահութեամբ։ Չելուք յանկողինս սուրբ  
հարսանեաց, և արարաք մեզ բարձրագա-  
հոյս առաւել քան զաշխարհի . . . Կօշիկը  
ուից մերոց յանդիմանեն զմեզ եթէ ոչ  
են սուրբ ճանապարհը մեր։ Հանդերձը  
մեր աղաղակեն զգործոց ձեռաց մերոց,  
եթէ մերկ եմք յերկնաւոր զգեստուց։ Ե-  
րիվարք մեր ցուցանեն մեզ, եթէ ոչ եմք  
յափշտակելոց ընդ առաջ տեառն ի վերաց  
օդոց։ Շինուածք աղարանից մերոց յայտ  
առնեն, եթէ ոչ ունիմք մեք տաճար ա-  
ռանց ձեռագործի յերկինս, յոր մտանե-  
լոց են ամենայն դասք սոսկացելոցն յեր-  
կրաւոր ախտից։ Կայուածք անդաստանաց  
մերոց կշտամքեն զմեզ, եթէ շիք մեր բա-  
ժին ի մինակսն երկնաւորս։ Մրգուզք ան-  
յագք եղաք ի կերակուրս, և առանց չա-  
փոյ արբարք զինի պղասրիչ խորհրդոց և  
մտաց։ Խոր ի քուն ննջեմք ամեներեան,

և երազ թուի մեզ ճշմարտութիւնն . կա-  
փուցեալ են աչք մտաց մերոց 'ի տեսա-  
կան խորհրդոց , և անյագ պազչոտեալ  
հայել 'ի կեանս աշխարհիս : Արգելեալք  
զլսելիս 'ի սուրբ ընթերցուածոց , և ուն-  
կընդիր եմք բառաշման խաշանց մերոց :  
Ոչ եկն մեզ հոտ անոյշ 'ի Հոգւոյն սրբոյ ,  
վասն զի սիրեցաք մեք զիւղ ախտա-  
լից աշխարհիս : Ոչ ճաշակեցին քիմք ո-  
գւոց մերոց զկերակուր երկնային , վասն  
զի պարարեցաք զանձինս մեր 'ի զանա-  
զան խորտիկս : Մութ է գոյն զիմաց  
մերոց , վասն զի ոչ զուարթացան երեսք  
մեր 'ի խորհուրդս սրբութեան : Յաւալից  
են անդամք մարմնոց մերոց , վասն զի յա-  
ռաջ քան զմարմինս՝ զոգիս ախտացու-  
ցաք : Գերեզմանաց բռելոց նմանեցաք  
յանձինս մեր , վասն զի ունայն եմք 'ի  
շնորհաց սուրբ Հոգւոյն . վասն այսորիկ և  
ամենայն չարիք հասին յաւուրս մեր :

Հ . Զի՞նչ է 'ի նախընթաց և հետեւորդ  
և 'ի յարակից հանգամանաց ցուցումն .

— Բազում ուրեք 'ի հանգամանաց աս-  
տի յայտնի կամ հաւանական ապացոյցս  
առնու ճարտասանն . զոր օրինակ 'ի ծա-  
զել արեգական՝ հարկ է զի իցէ տիւ , և  
եթէ տիւ է՝ հարկ է թէ ծազեալ իցէ ա-  
րեգակն :

Այսպէս քաջն վարդան զյոյս օդնա-  
կանութեան առ 'ի յԱստուծոյ հաստատէ  
'ի նախընթաց հանգամանաց .

ՅԵՐԿՈւՍ և յերիս կռիւստէրինքնին մեծաւ  
զօրութեամբ օդնեաց մեղ . որպէս զի զա-  
նունքաջութեան ժառանգեցար , և զզօրսն  
արրունի շարաչար հարաք , և զմոգսն ան-  
ողորմ սատակեցար , և զսլզութիւն կռա-  
պաշտութեանն 'ի տեղեաց տեղեաց սրբե-  
ցաք , զանօրէն հրաման թագաւորին եղ-  
ծաք ապականեցաք , զխռովութիւն ծովուն  
ցածուցաք . լեռնացեալ ալիքն դաշտա-  
ցան , բարձրագէզ փրփուրն սպառեցաւ ,  
զագանացեալ սրտմութիւնն դադարեաց :  
Որ 'ի վերայ ամպոց որոտայր , նկուն ե-  
ղեալ քան զսովորական ընութիւնն 'ի վայր  
գտաւ ընդ մեղ խօսելով :

Խոկ յարակից հանգամանք թէոլէտ և  
ոչ համօրէն 'ի միասին , այլ ստէպ 'ի ճահ  
պատահեն ճարտասանին . և են ութ այսո-  
քիկ՝ ԱՌ, ԶԲՆԸ, ԱՌԸ, ԻՌ, Քանիցո , ԸՆ-  
ՂԷՐ , ԱՌՊԷՍ , ԵՌԲ :

Զբազումս յայսցանէ վայելուչ 'ի կիր  
արկանէ խմաստունն 'ի բանս յայս .

Ա Մինչդեռ խաղաղութեանն պատեալ էր  
զամենայն , և այն ինչ զիշերն իւրով ա-  
րագութեամբն ընդմիջէր , ամենազօր բան  
քո յերկնից յաթոռոց արբունեաց սաս-  
տիկ պատերազմող 'ի մէջ սատակման եր-  
կրին հասանէր : Առւսեր պողովատիկ զա-  
նաշառ հրամանդ քո բերեալ և 'ի մէջ ան-  
ցեալ , զամենեսին լնոյր մահուամբ . անդ  
առ երկնիւք քերէր , և այսր յերկիր հա-  
սանէր : Յայնժամ վաղվազակի ցնողք ան-

Հնարին երազոց խռովիցուցանելին զնուսա , և արհաւիրք անկարծք 'ի վերայ հասանելին : Եւ այլ որ սպառութ անկեալ կիսամահ , վասն որոյ պատճառանաց մեռանէր՝ յայտ առներ : Զի երազոցն խռովիցուցեալ զնուսա , զնոյն յառաջագոյն զուշակէին . զի մի յանդէտս , վասն որոյ չարաշարն առնջէին , կորնչիցին :

Հ . Ո՞ր են արտաքին տեղիք .

— Իսկ արտաքին կոչին տեղիք՝ Օրէնք , Համբաւ , Արձանազիրք , Երդումն , և Վրեայք , յորոց մարթ է ճարտասանին քաջ հաստատութիւն ածել բանիցն :

Հ . Զիարդ պարտ իցէ զփաստո կարգաւորել .

— Պարտ է հզօրագոյն վաստիւ իւիք զբաւել նախ զմիտս , և ապա տակաւ 'ի տկարագունից 'ի հզօրագոյնս անցանել , յաւելեալ զիւրաքանչիւթ պատշաճ օրինակս և վկայութիւնս : Ո՞մ խառնակել զտարասեռ վաստո ընդ միմեանս , այլ ուրոյն զպատշաճն և զօդտակարն և զիրաւացին կարգել , հերքելով զհակառակորն :

## ԴԱՍ 2

Յորդոր . — Վերջաբան :

Հ . Զի՞նչ է յորդորն , զոր հինգերորդ մասն ճառի ասացեր .

— Հարտասանին ոչ միայն պարտք են խելամտեցուցանել զունկնդիրս, այլ և զկամսն յորդորել կրիցն յուզմամբ :

Հ. Ո՞ր են զլիսաւորք՝ի կիրս, զոր պարտէ ճարտասանին յուզել ըստ պատշաճի :

— Աէր և ատելութիւն, բարկութիւն և հեղութիւն, խնդութիւն և տիսրութիւն, երկիւղ և քաջալերութիւն, կարեկցութիւն և միսիթարութիւն :

Հ. Ո՞րպէս զմի մի ՚ի կրից այտի մարթիցէ զարթուցանել .

— Զաէր՝ նկարագրութեամբ զեղեցիկ հանգամանաց անձին կամ իրաց, զոր պարտն իցէ սիրելի ընծայեցուցանել. և դարձեալ յուսով առ ՚ի նմանէ բարեացն և օդափս : Իսկ զատելութիւն ՚ի հակառակէն՝ նկարագրութեամբ յուռութեանց նորա, և երկիւղիւ առ ՚ի նմանէ չարեացն :

Զբարկութիւն՝իշատակաւ թշնամանացն կրելոց . իսկ զհեղութիւն՝ անկեղծ խոստավանութեամբ յանցանաց, անչարութեամբ դիտաւորութեան յանցաւորին, և յիշատակաւ վաստակոց և լաւութեան նորա :

Զխնդութիւն՝ մեծութեամբ բարւոյն և բաղմաժամանակեաց ակնկալութեամբն կամ անկարծելի յաջողութեամբ . իսկ ըղախորութիւն հակառակօք սոցին :

Զերկիւղ՝ մերձաւորութեամբ վտանգին և անխուսափելի հետեւութեամբ չարեացն. իսկ զքաջալերութիւն՝ յուսով յաջողութեան, դիւրին և հաւանական յաջողութիւն իրացն ցուցանելով :

Զկարելեցութիւն՝ մանրապատռմ առնելով զաղէաս վշտացելոյն, ցուցանելով զի չեր արժանի շարեացն, և զգթութիւն՝ ցուցանելով դվանմութիւն և դրարութիւն։ Իսկ զմխիթարութիւն՝ թեթևացուցանելով ըստ կարի զծանրութիւն շարեացն, յուսացուցանելով՝ ի փոխարէնան աստ և՝ ի հանդերձեալս, և զարիութեանն յուշ առնելով դվանմութիւն և զօգուտ։

Հ. Իցեն ինչ կանոնք առ ՚ի յոյզս հասարակաց ամենայն կրից ճահաւորք։

— Են իսկ. և նոյն՝ զի ճարտասանն ըղպածեալ իցէ կրիւքն, զոր յայլս կամի զարթուցանել։

Երկրորդ՝ զի նախ համոզեացէ զմիտս փաստիք և ապա ջանացի շարժել ըղպիրու։

Երրորդ՝ զի ՚ի պատշաճ տեղւո՞ զյորդորական արասցէ առ ՚ի շարժել զկիրս, որ ըստ յաճախ սովորութեան ՚ի վերջաբանին ՚ի դէալ գայ։

Չորրորդ՝ զի մի զգացուացէ ունկնդրացն՝ թէ ահա մատչի ՚ի յորդորակս, այլ յանրզգաստից ՚ի վերայ ածել զյոյզս կրից՝ տակաւ պատրաստելով առ այն զօիրտս։

Հինգերորդ՝ զիտել զլեզու և դրարրառ կրից, որ է ամենենին առանց արուեստակութեան, և եռանդուն լի ձեռովք՝ առանց զարդուց և նրբարանութեանց։

Վ եցերորդ՝ մի ընդհատումն առնել յուղ ման կրից, այլ ինչ ՚ի ներքս ածեալ. և մի

շիջուցանել զեռանդն կրից եկամուտ զարդութ կամ նմանութեամբը :

Եօթներորդ՝ մի կարի յամել ՚ի յորդուրակս, զի եռանդն կրից չէ յերկարատե :

Քանախ են՝ ի ճառս Ասկերերանի չքնազ օրինակք զարթուցիչը կրից . որպէս և ուրանօր յաղագս սուրբ խորհրդոյն ճառե . և Ա ասն որոյ ամեննեին արթուն պարտիս լինել . քանզի և ոչ սակաւ տանջանք պահիցին այնոցիկ՝ որբ անարժանութեամբն հաղորդիցին : Զմանաւ ած որպիսի ցասունն մատնչին և խաչահանուացն եղե . զգոյշ լեր այժմ, գուցէ և դու պարտական մարմարոյ և արեան գտանիցիս : Նորա զմարմինն սպանին, և դու յաղտեղեալ հոգիդ ընդունիս յետ այնչափ երախտեացն : Քանզի չշատացաւ մարդ լինել և ապատիկլ և մեռանել, այլ և տակաւին զանձնիւր խառնէ ընդ մեղ . ոչ միայն հաւատովք, այլ և արդեամբք իսկ մարմին խոր յորինէ զմեզ : Քան զի՞նչ չէ պարտ որբազոյն լինել այնմ, որ յայնմ զենման վայելիցէ . քան զորպիսի ճառագայթս պայծառագոյն՝ ձեռինն, որ զայն մարմին հատոնիցէ . և բերանոյն, որ հոգեոր հրովին լընուցու . և լեզուին, որ համակ ՚ի կարմիրս յահազին յարենէն ներկանիցի : Զմանաւ ած որպիսի պատուով պատուեցար, կամ յորմէ սեղանոյ վայելես . զոր հրեշտակք տեսանեն և զարհուրին, և շիշինն համարձակ ընդդէմ հայել ՚ի փայլա-

տականցն որ անտի հասանիցին , և մեք  
նովաւ կերակրիմք , և նովաւ զանգանիմք ,  
և լինիմք մի մարմին և մի հոգի : Ո՞ պատ-  
մեսցէ զզօրութիւնս տեառն , բելի արաւ-  
ցէ զամենայն օրչնութիւնս նորա : Ո՞ր հո-  
գիւ յիւր անգամոցն կերակրէ զիւր ոչ-  
խարսն . և զի՞նչ ևս ասացից հովիւ , այլ  
և մարք ևս իցեն բազում անգամ , որ յետ  
երկանց և ծննդոց՝ զայեկաց տան զոր-  
դիս : Խակ սա ոչ ժուժեաց զայս առնել ,  
այլ ինքնին կերակրէ զմեղ իւրով ա-  
րեամքն , և ամենայնիւ ընդ իւր զրկա-  
խառն առնէ զմեղ . . . Եւ արդ մի ծուլա-  
նայցիմք , որ այսչափ արժանի եղեաք սի-  
րոյ և պատուոյ . չտեսանիցնիմք զման-  
կունս մատազս՝ որպիսի յօժարութեամք  
բուռն զստեանց մարցն հարկանիցն , որ-  
պիսի յօժարութեամք մածուցաննն զըրր-  
թունսն ընդ մարցն շրթունս : Այսպիսի  
յօժարութեամք մատիցուք յայն սեղան և  
՚ի մայրենի հոգեոր բաժակն . մանաւանդ  
թէ ևս յոլովազոյն քան զմանկանցն ձգես-  
ցուք մեք զշնորհս Հոգւոյն , և զմին միայն  
տրամութիւն համարեսցուք , չվայելելն  
յայնպիսի կերակուք : Քանզի չէ մարդկե-  
զէն զօրութեան զործն , որ առաջի կայ ,  
զոր յայնժամ յընթրեացն ժամ արար , և  
այժմ զնոյն զործէ . մեք զսպասաւորաց  
աստիճան ունիմք , և սրբէ և վերստին  
կազմէ նա :

Հ . Զի՞նչ է վերջարանն .

— Վերջին մասն ճառին, յորում ճարտասանն ՚ի զիտաւորութիւն բովանդակ ճառին, ազդողագոյնս ջանայ հաստանել:

Վասն որոյ պարտ է՝ ՚ի վերջաբանին համառօտել զամենայն զփաստա, կնիք զհզօրագոյնն զնելով։

Յայց զործ է զիտել ըստ ժամանակին աւարտել զձառն. զի մինչչև ցուցեալ զառաջարկութիւնն՝ զհետեանսն ՚ի վերայ ածել ծաղրելի է։ Դարձեալ և զպերճարանութիւն ընդ զօրութեան բանից վայելշապէս խտռնելի է՝ ՚ի վերջաբանին, զի և ճարտասանն ընդ ճառին հանոյ լիցի լսելեաց։

## ԴԱՍ 1:

Տեղեք սեփական Երից ճարտասանական հանգիսից։

Հ. Իցէ և այլ ինչ զանազանութիւն ճարտասանական տեղեաց քան զներբինսն և զարտարինս։

— Այս ամեննեին. զի զորոց ցայսվայր ասացաքն՝ հասարակ կոչին տեղիք, բայց են և սեփականիք Երից ճարտասանական հանգիսիցն։

Հ. Ո՞ր իցեն կացրդական հանգիսին սեփական տեղիք։

— Նախ ազգն կամ հայրենիք, եթէ ազնուազգի իցէ ներբողեալն. իսկ եթէ յան-

տոհմաթենէ ազնուացեալ, պարտ է զա-  
ռաքինոթիւն նորա և զվաստակս պան-  
ձացուցանել որովք անձամբ զանձն աղ-  
նուականացոյց :

Երկրորդ՝ քաջակիրթ գաստիարակու-  
թիւն ներբողելոյն :

Երրորդ՝ մեծութիւնը, եթէ բարւոր վա-  
րեալ իցէ նորիմբը, և 'ի դրկիլն յայնցանէ  
անխոռով կացեալ :

Չորրորդ՝ համառօտիւ իմն և 'ի վայելուչ  
կերպարանաց առնելի է զներբող, և մա-  
նաւանդ 'ի աղեղութենէ զպարսաւ :

Հինգերորդ՝ բարեմասնութիւնը բնա-  
կանը և ստոցականը, առաջնովքն զովե-  
լի է, եթէ բարւոր ուրուր վարեալ իցէ նո-  
րօր, և վերջնովքն եթէ ճպամբը ստա-  
ցեալ իցէ զայնս :

Վեցերորդ՝ զործը ներբողելոյն, որ ու-  
սումնականը և որ այլ ինչ կենցազօդուտ  
արգասիք՝ որ յանախեն պարծանս մար-  
դոյ :

Եօթներորդ՝ վասոք և մրցանակը, զորս  
տարեալ ուրուր իցէ :

Ութերորդ՝ հանգամանը մահուն, եթէ  
վասն հաւատոց կամ յօդուա աշխարհի  
կամ 'ի վերայ հայրեննեացն զմահ յանձն  
առեալ իցէ :

Ըստ սմին օրինակի և զքազաք մարթ է  
ներբողել 'ի հիմնագրէն, 'ի վաղեմի հնու-  
թենէն, 'ի անզւոյն, 'ի ձեռոյն, 'ի մեծու-  
թենէ, 'ի զեղեցկութենէ վաղոցացն և

Հրապարակաց, յաշխարհամուտ շինուածոց, 'ի կամրջաց, 'ի նաւահանգստից, 'ի հին աւանդից, յանաստիկ ամրութենէն, յանխռովի խաղաղութենէ, 'ի բարւոր տեսչութենէն, 'ի ձոխութենէ, 'ի բարդաւաճ շահավաճառութենէ, 'ի բազմամարդութենէ, 'ի հանճարոյ բնակչացն, յականաւոր մարդկանէ՝ որ անդ կացեալ, 'ի ստածիչ օդոց, 'ի բերոց երկրին, այլովքն հանդերձ :

Որ ինչ զներբողինէն ասացաք՝ նոյնք օգնեն և առ 'ի պարսաւ, անմասն 'ի զովելեաց անտիցուցանելով զօդարսաւեալն :

Հ. Ո՞ր իցեն բաղխառնական հանդիսին սեփական տեղիբ .

— 'Եախ ցուցանել զարդարութիւն առաջարկութեանն, զի ոչ բնական օրինաց, ոչ քաղաքականին և ոչ աստուածայնոցն և մարդկայնոց զբական օրինաց հակառակի, և ոչ վազեմի սովորութեանց կամ կարծեաց՝ որ զօրինաց ունին զօրութիւն :

Երկրորդ՝ ցուցանել զօդակարութիւն, որ առաւել յօրդորիչնէ . և զտոյժս՝ որ յապահան առնելոյ զայն ձնանիցին : Խոկ եթէ կարեոր ևս առ 'ի կեանս և 'ի բարեկենդանութիւն իրքն իցեն, հզօրագոյն ևս ցուցանելի է զայն :

Երրորդ՝ ցուցանել զփառս և զպարծանս որ անտի յառաջ զայցեն, քանդի բազումք այնորիկ են՝ որ ցանկութեամբ փառաց և երկիւզիւ վատանունութեան ա-

ռաւել յորդորին քան թէ օդտակարութեամբ :

Չորրորդ՝ ոչ միայն զնարաւորութիւն իրացն , այլ և զգիւրութիւնն ցուցանելի է . իսկ եթէ դժուարին իցէ , յաւելու պարտ է և զպարծանս յաղթելոյ դժուարութեանցն :

Այսորիկ 'ի համոզելն . իսկ 'ի հերքելն ինչ՝ հակառակօք սոցին հնարիւք վարելի է՝ անիրաւ , վեասակար , անօդուտ , անպատշաճ , դժուարին և անհնարին իսկ ցուցանելով :

Ծնդ բաղխոհական հանգիսիւ բովանդակին և բարոյական խրատք և քարոզք . այլ 'ի սոսա պարտ է ճարտասանին ցուցանել զպարտս ունկնդրաց 'ի կատարումն աստուածային և մարդկային օրինաց , և սպառնալեօք սպատուհասից երկեցուցանել զնոսա : Եւ տպա վայելչականաւն ևս և օդտակարաւն և խոստացեալ վարձուքն հոգեորականօք և ապա մարմնաւորօք քաջալերել զնոսա , և զգիւրութիւնն ևս և դժուարձութիւն կատարման իրացն 'ի վերայ յաւելուլ , և յորդորակօք կատարել զնառն :

## ԴԱՍ Բ.

ՏԵՂՔ առենական հանդիսին :

Հ. Ո՞ր իցեն առենական հանդիսին սեփական տեղիք .

— Առենախօսին երկեակ պարտք են , դատախազի և ջատագովի :

Այդ գատախազին նախ քան զամենայն պարտ է ցուցանել դհաւաստիս յանցանաց ամբաստանելոյն՚ի հանգամանաց անտի գործոյն . զոր օրինակ զյանցանս սպանութեան յարիւնաշաղախ հանդերձիցն ,՚ի զէնս կրելոյ ՚ի ծածուկ , ՚ի յառաջազոյն սպառնալեացն , յայլազունելոյ դիմացն , ՚ի փախստենէ , և այլն :

Երկրորդ՝ յականատես վկայից :

Երրորդ՝ ՚ի խոստովանութենէ պարտաւորին :

Բայց բազում այն է՝ զի ոչ յայտնի գրտանին հաւաստիք , և յայնժամ գուշակութեամբ և թ հարկ է վարել դատախազին , յորմէ գուշակական դատն այն կոչի : Եւ տեղիք գուշակութեանցն են նախընթաց և զուգընթաց և հետեւորդ հանգամանք . զոր օրինակ ՚ի դատ սպանութեան նախընթաց հանգամանք են՝ եթէ ամբաստանեալոյն . եթէ մահ սպառնացեալ էր նմա , եթէ զրկեալ ՚ի նմանէ , եթէ սովորեալ ՚ի հա-

բուածս կարեվերս կամ յայլ ոճիրս : Զու-  
զընթացք են՝ եթէ պատեհ էր նմա ան-  
պատռւհաս զերծանել, եթէ լսելի եղե ա-  
զազակ և հեծութիւն, և այլ այսպիսի նր-  
շանք : Խոկ հետեւորդք են՝ խուճապել նո-  
րա զվայրօքն, վախչել, այլազունել դի-  
մացն, ուն 'ի ծածուկ ունել, պատ 'ի պատ  
պատասխանիք, այլովքն հանդերձ :

Խոկ ջատագովին պարտ է նախ ժխտել  
զյանցանս ամբաստանելոյն՝ անդստին 'ի  
նոցին հանգամանաց անհնարին ցուցանե-  
լով զայն և 'ի վեր քան զկար նորա : Յայց  
եթէ արդարեւ պարտաւոր իցէ յանցա-  
նացն, պարտ է ջատագովին թեթևացու-  
ցանել բատ կարի զյանցանսն, ցուցանե-  
լով եթէ էին ինչ ամբաստանելոյն իրա-  
ւունք կամ պատճառք 'ի գործ անդր ձեռ-  
նարկելոյ . վասն որոյ պարտ է առաւել ևս  
ջատագովին հմուտ լինել օրինաց և իրա-  
ւանց և սովորութեանց : Խոկ եթէ բնաւ  
ամենեին շիցէ մարթ արդարացուցանել  
զգործն, հարկ է զկամս յանցաւորին ցու-  
ցանել անպարտ, զիսպաց ընծայելով ըզ-  
գործն, կամ ապշտթեան, կամ արբեցու-  
թեան, կամ բուռն թափոյ կրից, կամ  
զրգութեան թշնամոյն, այլովքն հան-  
դերձ :

Համառօտիւ ասել, յոյժ այլազգ են 'ի  
միմեանց զործ զատախազի և ջատագովի-  
ի զժուարագոյն յոյժ երկրորդիս զործքան  
զառաջնոյն : Ամա պարտ է ցուցանել 'ի յա-

ուածարանի իւրում, զի ոչ շարժի յատելութենէ կամ յայլոց կրից, այլ 'ի սիրոյ և եթ արդարութեան և ճշմարտութեան. իսկ ջատագովին պարտ է ջանալ՝ յինքն յանկուցանել զլսելիս ցածութեան բանիք, և կասկածանս իմն և երկմառութիւն զհակառակորդէն արկանել 'ի միտս ունելունգրացն։ Դատախազգին պարտ է զօրաւոր և բացայաց առնել զպատմաւթիւնն, իսկ ջատագովին մեղմ և ուրեք ուրեք սրոցեալ։ Դատախազգին պարտ է տակաւ տաստկացուցանել զփաստո, և կնիք զհզօրագոյնն 'ի փաստից 'ի վերայ ածել. իսկ ջատագովին զհզօրագոյնս 'ի փաստիցն նախ ցրել, և մի երբէք խուսել 'ի պատասխանատրութենէ, այլ մանրախուզիւ հետազօտել զփաստո հակառակորդին և հերքել. իսկ 'ի վերջարանին պարտ է երկաքանչիւրոցն ևս եռանգուն յօրինել ըզբանսն, միոյն 'ի վրէմխնդրութիւն և միւսոյն 'ի զթութիւն շարժելով զլսելիս, յորում զօրավիզն մեծ իցեն ջատագովին վաստակք և առարինութիւնք ամբաստանելոյն։

### ԴԱՅ Թ

Զեք բառից։

Հ. Յայս վայր զմասանց իւրաքանչիւր զազգի ազգի ճառիցն և զտեղեաց նոցա

սլարդաբանեցեր զիանոնս . արդ ասաինձ , իցե՞ն ինչ որ ամենայն մասանցս այսոցիկ առ հասարակ պատշաճիցին , և որ այնոքիկ իցեն .

— Քերականին պարտք են անսխալ ըգրանո յօրինել՝ նիւթականին եեթ վայելչութեան ուշ ունելով . իսկ ճարտասանին պարտ է իմանալի իմն վայելչութիւն յաւելուլ 'ի նոսա : Եւ առ այս 'ի կիր արկանէ նա դձես , որոց յամենայն մասունս ճառին են մուտք :

Հ . Զի՞նչ են ձեք .

— Չեք են նորօրինակ բացատրութիւնք՝ առ 'ի տալ ազդուութիւն խօսից :

Եւ յայսցանէ են որ բառից եեթ կոչին ձեք , որպէս փոխանակ ասելոյ՝ Չիք որ ուրեք , ասելն՝ « Չիք ոք չիք ուրեք » : Եւ են որ իմաստից կոչին ձեք . որպէս փոխանակ ասելոյ՝ Բազում վիշտս կամ փորձութիւնս կրեալ , ասելն՝ « Բազում ես ձիւնարերս յանձին կուտեալ » : Կամ փոխանակ ասելոյ՝ Զոմանս սրով կոտորէին , ասելն՝ « Զոմանս բազմախողխող երկաթոյն տային կերակուր » :

Հ . Գանի են ձեք բառից .

— Տիրապէս չորք . աւելազրութիւն , զեղչումն , յողնահոլովք և նմանաձայնութիւն :

Հ . Զի՞նչ է աւելազրութիւն .

— Կրկնումն նոյն կամ համանչանակ բառի , ոլէսպէս ձեռովք . զոր օրինակ կըքկնութեամբ 'ի սկիզբն .

\* Ուր են դպիրքն , ուր են խրատառքն ,  
ուր է որ ունի զհամար պահակերաց զմե-  
ծի և զփոքու . . Եսայի :

Դարձեալ կրկնութեամբ 'ի վերջն .

\* Խակ արդ ընութիւնս իմ ոչ կշտամբեալ  
յանդիմանէ զիս՝ եթէ ստեղծայ մերկ , և  
եթէ եգայ 'ի դրախտին մերկ , և եթէ ելի  
անտի մերկ , եթէ ծնայ մերկ , և եթէ ան-  
դրէն յերկիր մերկանդամ երթամ . Եղիշ :

Դարձեալ խառն կրկնութեամբ .

\* Ազորմիմ ողորմիմ սիրելեաց ձերոց , և  
բաղում անգամ ողորմիմ անձանց ձե-  
րոց . . Եղիշ :

Դարձեալ համանշանակ բառից կըրկ-  
նութեամբ .

\* Եթէ ցանկ այսպիսի միտս ունիցիս , իբ-  
րև զսդաւոր շրջիս հանապաղ , լսո , հե-  
ծես , յոզւոց հանես , աշխարես զցայզ և  
զցերեկ : Մի մեղաւոր միայն կոչեսցուր  
զանձինս մեր , այլ զմեզս զամենայն մի  
ըստ միոջէ զմեծն և զփոքըն այց արաս-  
ցուք , խնդրեսցուք , զի մի մնասցէ անյի-  
շտակ : . Արդիս :

Հ . 9ինչ է զեղչումն .

— Լոռութիւն մասանց ինչ բանի պէս-  
սլէս ձևովք . զոր օրինակ .

\* Քննեցաւ (վնասապարտն) , գտաւ , պատ-  
ժեցաւ , 'ի սուր սպառեցաւ . . Ամակար :

Աստանօր լուեն շազկապք :

\* Բարկութիւն ամենահօրն զիցաւ 'ի հաշ-  
տաթիւն , զի 'ի մէնջ խաղաղութեան պա-

տարագն» . Լամբ . Աւը լսի բառս Մասուցաւ :

\* Յետ տեսանելոյ ղնա յարուցեալ , և շօ-  
շափելոյ ձեռամբ թումայի , զի՞նչ » . Լամբ .  
Այսինքն տակաւին յետ այնորիկ զի՞նչ  
առնեին առաքեալքն :

Հ . Զի՞նչ են յոդնահոլովք .

— Կրկնումն նոյն բառի յայլ և այլ հո-  
լովք , կամ բայի յայլ և այլ ժամանակս և  
յեղանակս . զոր օրինակ .

\* Փառաւորեմբ զԱստուած յորժամ զմի-  
մեանց բեռն բառնամբ , յորժամ միմեանց  
զիրկս արկանեմբ , յորժամ զմիմեամբք  
փարիցիմբ , յորժամ առ միմեանս ջոլորի-  
ցիմբ , յորժամ միմեանց կարեկից և վշտա-  
կից գտանիցիմբ , յորժամ'ի վերայ իրե-  
րաց արտասուեմբ » . Սարգ :

Եւ դարձեալ . \* Երիթացեալ և բըրդ-  
զգեալ առ ամենայն որ զիմէ , զամենայն  
որ աղաչէ , ամենեցուն աղերսէ » . Սարգ :

Եւ դարձեալ . \* Այլ իմաստունք լացին  
և լան միշտ կենդանի բանիւքն իւրեանց » .  
Լամբ :

Եւ դարձեալ . \* Ի խաւարային ժամու  
զիսաւարային կերակուրս խաւարային մար-  
մնոյս տացուք » . Եղիչ :

Հ . Զի՞նչ է նմանաձայնութիւն .

— Բառք կամ յանգք նմանաւորք մի-  
մեանց . զոր օրինակ .

\* Փըթթեալ վարդից նման թերթից ,

\* կամ զերունակ ճըղաց խընձոր » :

Ա.յլ օրինակ .

- \* Ծովն 'ի միջի իմ ծածանէր ,
- \* Քաղցրիկ օդովն ծիծաղէր : . Շնորհ :

Ա.յլ օրինակ .

- \* Գոհար վարդն վառ տռեալ .
- \* Ի վեհից վարսիցն արփենից .
- \* Ի վեր 'ի վերայ վարսից
- \* Ծաւալէր ծաղիկ ծովալին :

Ա.յլ օրինակ .

- \* Տատանին տաղնասպաւ տերեք տնկոց և -  
զեին ծառոց շարժեալը 'ի հողմոց ուժգին  
բաղիսելոց : . Նարեկ :

Յետինս այս ձեւ 'ի քերթուածս տռաւե-  
լապէս ունի տեղի , և այն բազում զգու-  
շութեամբ . զի խաղքս այսորիկ բառից  
մանկական առնեն զշարագրածն :

## ԴԱՍ Ժ

Չեք Խմառից :

Հ . Ո՞ր իցեն ձեք իմաստից .

— Ամենայն բան՝ արտաքոյ սովորական  
ասացուածոյ բացատրեալ , Եթէ փոխարե-  
րարար , Եթէ այլաբանօրէն , և Եթէ այլով  
որ և է օրինակաւ :

Հ . Մեկնեա ինձ զգոսա մի ըստ միոջէ .  
և նախ թէ զի՞նչ է փոխարերութիւն .

— Փոփոխութիւն նշանակութեան բառից  
յայլ՝ ըստ նմանութեան կամ ըստ համե-  
մատութեան : Զոր օրինակ Լիձ լուսոյ կո-

շել զաշս , Որումնացան դրամբասողն և  
դրսու , կապատակ դաշտ զծով . Աստեղս  
բուցիկն զճանձիկն փոսուռայ և այլն :

\* Արդարեւ ճշմարիտ սարդի ոստայն կա-  
մեցան անկանել՝ որ զայս այսպէսն դրու-  
մեցին ՚ի ստագիր զիրսն խրեանց : Բար-  
սեդ :

\* Ես ձայն զառիւծուն ասեմ , որ զոչէր  
՚ի քառաթեխն : Նարեկ : Աստանօր առիւծ  
գիրիստոս , և քառաթեւ զուրբ խաչն փո-  
խարերաբար նշանակէ :

Բայց զզուշալի է նախ մի յանարդ ի-  
րաց առնուլ փոխարերութիւնս աղնուա-  
զունից : Վ ասն որոյ ստգտանէ Որատ ըզ-  
տազսն Մարկոսի ,

\* Ի լեառն Ալպեայ քարձրագիտակ

\* Եթուք Հերմէս ձիւն ըսպիտակ :

Երկրորդ՝ պարտ է փոխարերութեան  
զուլ քացայայտ և մերձաւոր , և մի մթին և  
բռնազրուսեալ . որոլէս եթէ Աշտարակ եր-  
կնարերձ կոչիցէ որ զայր քարձրահասակ :

Երրորդ՝ մի զքերթողականս ՚ի կիր առ-  
նուլ ՚ի ճարտասանելն . զոր օրինակ մարթ  
է քերթողի ասել զումերէ անստգիւտ՝ թէ  
՚ի դալարագեղ զարնայնի տիոցն վախճա-  
նեցաւ , բայց ճարտարախօսի դուն ուրեք :

Չորրորդ՝ մի զիրն ընդ փոխարերութեան  
խառնակել , ուրեք ՚ի փոխարերեալ միտս  
և ուրեք ըստ նկարազրին խմացեալ . զոր  
օրինակ փոխանակ ասելոյ թէ Արտասուք  
կարճեցին զկեանս նորա , ոչ է օրէն ա-

և ի Պետք արտաստոց կարճեցին դթել  
ինաց նորա :

Հինգերորդ՝ մի ՚ի միում վայրի խոկել  
բաղում փոխարերութիւնս, մանաւանդ  
զանկցորդելիս ընդ միմեանս : Ատգտանե-  
լի է յայտմ մասին մերս Յովհաննէս կա-  
թողիկոս յասելն .

« Յայնմշետէ ապա նիւթ հրաբորքոր գտո-  
նութեան մուաց գտեալ ոստիկանին զայն-  
պիսի յաղթութիւն, հրկիզութիւնս բա-  
զումս սփռեալ տարածանէ ընդ ոլորտս  
երկրի մերոյ . և ՚ի միջօրէի իրրե զիշերի  
մութ և մէզ և մառախուզ և խուար աղ-  
ջամզջին պատեալ պաշարէր զարանա-  
զեանս աղն . և ՚ի լծակս կշոց եղեալ զեր-  
կունս տազնապ տարակուսանաց, հակա-  
միանեալ կուտեալ գտանէին ՚ի վերայ մեր  
ծանրաապառէ անուր Հագարու, առա-  
ւել քան զբարինս ձօրոյն ՚Եաբովրայ,  
Վասն զի նետք հինից և տէզ տեառն տե-  
ղացին ՚ի մեզ . քանզի արմատ դառնու-  
թեան, զոր երբեմն խլեաց տէր ՚ի տանէս  
Թորգոմայ, կրկին շառաւիզեալ տնկեցաւ  
յիմանալի այդեստանս մեր, ՚ի փշահեղձ  
մացառս վերբնձիւզեալ յեղծումն և յա-  
պականութիւն » :

Հ. Զինչ է փոխանունութիւն .

— Փոխանունութիւն է յորժամ պատ-  
ճառք զնին փոխանակ զործոյ, կամ զործ  
փոխանակ պատճառի, կամ պարունա-  
կեալ փոխանակ պարունակելոյն, և կամ

Հակառակն նորին, եամ ժամանակն փոխանակ անցից, և կամ սոցին սակի փոխադրութիւնք։ Զոր օրինակ։

\* Առեր զի ընթեռնոցը զիսայի մարզարէ։  
այսինքն զգիրո Եսայեայ մարզարէի։  
\* Յառնել առաջի ալեաց։ այսինքն ձեռոց։

\* Հնազանդեցուցաներ զամբարտաւան և  
զրիրաւ ապստամբութիւն նոցա։ այսինքն  
զմարդիկն ապստամբ։

\* Յափշտակեցաւ, զի մի նենդութիւն  
սլատրիցէ զանձն նորա։ այսինքն նենդողը։

\* Մանկութիւն վաղվաղակի վախճանեալ։  
այսինքն մանուկ վաղամեռիկ։

\* Ողբամ զքեզ Հայոց աշխարհ։ այսինքն  
ընակիչք հայաստանի։

\* Ըմպել զբաժակ։ այսինքն զբմպելին  
որ ՚ի բաժակի։

\* Եւ վախճան ՚ի Հայոց։ այսինքն յաշխարհն Հայոց։

\* Կորոյս զգարն ՚Նոյի։ այսինքն զմարդիկ ՚Նոյեան զարուն։

\* Զամենայն արբունո մանկութեան կոտորեալ։ այսինքն զմանկտին ամենայն։

\* Բարձի ակն ունել։ այսինքն իշխանութեան։

\* Արհամարհել զթաղ։ այսինքն զթաղառութիւն։

Հ. ԶԲՆՆ է խելամտութիւն.

— Աչ ինչ ընդհատ ՚ի վոխանունութենէ

վարել զմասն փոխանակ բոլորի, զնիւթ փոխանակ իրին, զսեռ ընդ տեսակի, զեղական ընդ յոդնականի, և որ սոցին սակի ձեք: Չոր օրինակ.

\* Ահա ոսքն, որք թաղեցին զայրն քո 'ի դրան, հանցեն և զքեզ:

\* Վասն այնորիկ և շնչին փայտին հաւատան մարդիկ զանձինս իւրեանց: այսինքն նաւուն:

\* Եւ տեսցէ ամենայն մարմին զփրկոթիւն Աստուծոյ, զի տէր խօսեցաւ: այսինքն ամենայն մարդ, որ է տեսակ սեռական անուանս մարմին:

\* Ո՞ի լինիք որպէս զձիս և զջորիս, զի ոչ գոյ 'ի նոսա խմաստութիւն: այսինքն իրքե զանքանս:

\* Տկարն խրախուսեսցէ թէ հզօր եմ ես, հանդարան պատերազմող եղիցի: այսինքն տկարք խրախուսեսցեն, հանդարտք պատերազմողք եղիցին:

\* Աստակել զքետացին և զամովրհացին: այսինքն զքետացիս և զամովրհացիս:

## ԴԱՍ ԺԱ

Հեղնութիւն: — Երդիծանութիւն: — Փոխառութիւն: — Անուանաստեղծութիւն:

Հ. Զինչ է հեղնութիւն.

— Հեղնութիւն է ուր հակառակ բարիցն են խմաստք նոցա. զոր օրինակ.

\* Ա՛վ քո դօրութեանդ , 'ի ծայրն հասեր ի-  
մաստից . միրկեցեր զողի քո՝ դոյդ տսե-  
լով : . Լամբ : Զոր պարզաբար ասելի էր .  
Պակասամիտ եռ , 'ի խորս աղիտութեան  
կառ , և զողից քո դաստապարտես բանիւդ :

\* Հարցանեն ոմանիր ցիմաստունս մեր ,  
կենդանւոյ լինի պատարագ թէ ոչ . խոկ որ  
բուն կատարեալքն են պատասխանեն , ոչ  
բնաւ : . Լամբ : Ուր աշա իմաստունն է  
բուն կատարեալ նշանակեն դաշտակակն ,  
այսինքն դախմար և զանգէտ :

\* Ա՛նձաձայն կարդացէք , զի աստուած է .  
թերես զրօսանիր ինչ իցեն նմա , և միան-  
զամայն թերես առնիցէ հրաման , կամ  
թէ 'ի քուն իցէ և յառնիցէ : . այսինքն 'ի  
զուր է կարդալդ ձեր , զի չէ նա աստուած :

\* Ոսկին ձեռվ Գրիգոր կաթողիկոս պա-  
պանձեցուցանէ զջուտէ որդին , որ զնոռ-  
մոյ եկեղեցին առեք կործանեալ :

\* Ապտ յայտ խոկ է , եթէ 'ի զուր աշխա-  
տեցաւ Պաւղոս , 'ի զուր աշխատեցաւ և  
Պետրոս , և ոչ ուղղեցան ոտք նորա 'ի  
զնացս՝ ընդ որ խորհեցաւ և արար : Ընդ-  
ունայն են և քարոզութիւնիր նոցա , և  
ոււտ է ին խոստմունք տեառն առ Պետրոս՝  
թէ 'ի վերայ այդք վիմի շինեցից զեկեղե-  
ցի խմ , և զրունք դժոխոց զնա մի յաղ-  
թահարեսցին : Արդ յաղթահարեցաւ և  
կորեաւ , զի ոչ է եկեղեցի , այլ այր աւա-  
զակաց . ոչ մկրտութիւն 'ի թոզութիւն մե-  
զաց , այլ միայն յաւացումն ջրոյ : Արդ ու-

բախ լեր Պիղատոս , ցնծացէր և զուր  
դառք քահանայալեաց . վասն զի ոչ բո-  
պանիք տեր , այլ մոլորեցուցիչ . ոչ խո-  
շեցիք աստուած , այլ զող և աւաղակ և  
խռովարար . ոչ հոփիւ քաջ , այլ վարա-  
տող ոչխարաց . սուտ է որդին որոտման ,  
և իրաւ է որդին Տուտեայ :

Հ . Զի՞նչ է երդիծանութիւն .

— Դժնդակ հեզնութիւն . զոր օրինակ .  
« Ա՞հ որ քակէիր զտաճարն , և զերիս ա-  
ւուրս շինէիր զնա . ապրեցո զրեղ , եթէ  
որդի ես Աստուծոյ՝ էջ՝ ի խաչէդ :

Այսուհետ Ամբատ սպարապետ զշամ-  
փուր հրաշեկ ածեալ զզլիսով Մեհրուժա-  
նոց , առէր . « Պսակեմ զրեղ , Մեհրու-  
ժան , քանդի ՚ի խնդիր էիր թագաւորել  
Հայոց . և ինձ ասպետիս պարտ է զրեղ  
պսակել ըստ սովորական իշխանութեան  
խոց հայրենեաց . խորին :

Ընդ ձեռփս ընդ այսուիկ բովանդակին  
և գորովանիք , որով ձարտարախոսն կը շ-  
տամբէ զարժանին գորովանաց . զոր օրի-  
նակ Լամբրոնացի զբանսարկուն .

« Ո՞ւր զու , զրապարտիչ դատախազ , եկ  
այժմ կաց մեզ առընթեր , ոչ իբր սիրելի .  
այլ իբրեւ զթշնամի . տես և ողբա յանձն  
քո , տես և յամօթ լեր ՚ի զործս քո . տես ,  
սա այն է՝ որում զխաչն մերենայեցեր , ո-  
րում զլեզին արբուցեր , զոր զողացեալ  
համբաւեցեր :

Են և պատրուակեալ կշտամբանիք , որ

լոելեայն տան իմանալ զգսրբովանս . զոր  
օրինակ Պաւղոսի տսելն ցկորնթացիս .  
« Յայդմ ոչ գովեմ զձեղ » :

Աւ Ասկերերանի ստեղ զանձն 'ի մէջ  
ըերել , և խառն ընդ այլս յանդիմանել .  
զոր օրինակ .

« Ո՞րչափ չարեօք լի եմք , և ոչ զգամք .  
զմիմեանս խածանեմք , զմիմեանս ուտեմք ,  
մեզանչեմք , ամբաստանեմք , բամբասեմք ,  
ընդ ընկերաց փառս խանդամք » :

Հ . Զի՞նչ է փոխառութիւն .

— Զմիոյ իրիք հանգամանս այլում տալ  
ըստ համեմատութեան կամ ըստ նմանու-  
թեան . զոր օրինակ .

« Գիշերագէմ զոլով ես , 'ի բնուից պար-  
սպիմ » . այսինքն սեւագէմ . Գօշ :

« Որբան 'ի սե և 'ի մուր կեանիքս պան-  
դրխտիմք » . այսինքն 'ի խաւարացին և 'ի  
տխուր կեանս յայս . Խամք :

« Ընդ աչացաւացն նեղելոց մշտագիւշը  
խարխափանօք » , այսինքն որովէս միշտ 'ի  
խաւարի խարխափելով . Կարեկ :

« Ի կողմանս ասորեստանի դադարէ առ  
զետովին երկրուսնեայ աւուրս » . այսինքն  
երկամսնեայ ժամանակ . Խորեն :

Բստ այսմ տսեմք . Անցին հունձք երեք ,  
փոխանակ տսելոյ ամք :

Բստ այսմ և Եղիշէի վարդապետի տ-  
սելն .

« Բազում ձմերաց հալեցան սասնամա-  
նիք , և հաս զարուն , և Եկին նորեկ ծիծ-

ուսնք , տեսին և խնդացին կենցաղառեր  
մարդիկ , և նորա (երանելի տիկնացքն) ոչ  
երբէք կարացին տեսանել զանձկալիսն  
իւրեանց :

Հ . Զի՞նչ է այլարանութիւն .

— Բան՝ ի բազում փոխարերութեանց  
հիւսեալ . որպէս Շնորհալւոյ այլարանելն  
գվախճան եղրօր իւրոյ Գրիգորի կաթողի-  
կոսի օրինակաւ նաւարկութեան .

• Ինքն նաւու հաւատոյ ընդ ծով աշխար-  
հիս՝ հողմով Հոգւոյն ուղղակի նաւա-  
պեսեալ ճշմարտութեամբ և առարինու-  
թեամբ , եհաս անվեաս յանքոյթ և առանց  
ալեաց նաւահանդիսան :

Ա . Ալ օրինակ .

« Ծընան կուսանք ազգըս բազումո ,

Եւ մարըք մանկունք ըդհրապարակըս  
ծերոց .

Ի զիրկըս սըրբութեան ազօթից և պա-  
հոց .

Անեցին հաւատովք զարգացեակը ՚ի  
Քրիստոս . Շար :

Գեղեցիկ է յոյժ այլարանութիւն ոյ-  
գւոյն՝ ի սազմոս .

Այզի յԵղիպատուէ փոխեցեր , հաներ  
զհեթանոսս և զնոսա տնկեցեր , և առաջ-  
նորդեցեր նմա : Հաստատեցեր զարմատս  
նորա և ելից զերկիր . ծածկեաց զլերինս  
հովանի նորա , և բարունակ նորա զմայրս  
Աստուծոյ : Զգեաց զորթ իւր մինչև ՚ի  
ծով , մինչև ՚ի զետս ևն շառաւիզը նորա :

լնդէր քակեցեր զցանկ նորա . կթեն զնա  
անցաւորք ճանապարհի : Ապականեաց  
զնա խող անտառի , և երէ վայրի արածե-  
ցաւ ՚ինմա : Աստուած զօրութեանց , գարձ  
հայեաց յերկնից , և տես . այց արա այ-  
գուոյս այսմիկ , և գարման տար սմա՝ զօր  
տնկեաց աջ քո :

Այլաբանութեան նոյն կանոնք են որ  
ինչ փոխաբերութեան . այլ ՚ի սմա զգու-  
շալի է և ևս՝ չփոխել զայլաբանութիւնն  
այլ յայլմէ , այլ յորոց իրաց տռեալ իցէ  
նմանութիւնն՝ նովին և աւարտել :

Հ . Զինչ է անուանառաեղծութիւն .

— Ներդաշնակութիւն բառից բատ ի-  
մաստիցն . զոր օրինակ ճճուել կամ ճռու-  
ղել ճնճղկանց , բզզել մեզուաց , գարզա-  
փել տախտակաց , ճղփումն ջուրց , ճռնչել  
ծղխնեաց , ճարճատիւն փշոց ՚ի հուր , շրր-  
շիւն տերեւոց , և այլն :

Վ այելուչ և զօրաւոր յոյժ առնէ զբանն  
ձես այս , որպէս տեսանի օրինակօրս .

« Անդ էր լսել թնդիւն վահանաց , չկա-  
հիւն աղեղանց , շողիւն սուսերաց , շաշիւն  
նշանաց , շառաշիւն նետից » . Մակար :

« Կոփիւնք վահանաւորացն , և ճայթմունք  
լարից աղեղանց զլսելիս ամենեցուն առ  
հասարակ խլացուցանէին » . Եղիշ :

« Եւ ՚ի տրոփական գոփմանէ ոտիցն թըն-  
դեալ տանիքն , և ՚ի վայր վլուղեալ » .  
Յովի . կար :

« Ի զիլ գայր ՚ի զիլ սայլիկն ՚ի զիլ  
՚ի Մասեաց յաջ կողմանէն » . Նարեկ :

## ԴԱՍ ԺԲ

Դերանունութիւն և Շրջարանութիւն . — Զափազանցութիւն . — Բացազանցութիւն :

Հ . Զինչ է դերանունութիւն կամ շրջարանութիւն :

— Փոխանակ անուան ուրոք այլ ինչ հասարակ անուն սեփականել : Զոր օրինակ՝ Փողն տարսոնեան , այսինքն Պաւղոս . Ամերդին , այսինքն Յովհաննես մկրտիչն . Որդին կորսոնեան , այսինքն Յուդա , և այլն : « Յաղագս արմատոյն հանուրց մարդկութեանս , կամ թէ հաճոյ ումեք թուեսցի ասել՝ ծայրին » . այսինքն Աղամայ . Խորեն :

Ըստ այսմ է և շրջարանութիւն . զի զոր համառօտիւ սակաւ բառիւք մարթ է առաջի առնել , Տարտասանն բազում բառիւք առաջի առնէ :

Զոր օրինակ փոխանակ ասելոյ՝ թէ Իրրե եղե զիշեր , ասէ .

\* Մինչ դեռ խաղաղութեանն պատեալ էր զամենայն , և այն ինչ զիշերն իւրով արագութեամբ ընդմիջեր » . Խմասու :

Փոխանակ ասելոյ՝ Իրրե զարուն եղե , ասէ .

\* Իրրե՝ ի բաց եղաւ ձմեռնային ձիւնախաղազ սառնամանեաց ցրտութիւն : — Իրրե զարնանային հարաւահողին զմմերայնոյն

ժամանակ ցրտութեանն ՚ի բաց մերկանայր : — Իրրե զրունք գարնայնոյն բացան և աւտրըն ջերստք զտեղի փոխարերեցին : — Իրրե ձմեռնային սպաւորութիւնն ՚ի գարնանային բարեխառնութիւն օգոց յեղանակէր զփոփոխումն » . Յա՞ : կար :

Փոխանակ ասելոյ՝ իրրե այդ լինէր , ասէ . « Իրրե լոյսն զզիշերն մերկանայր : — Այն ինչ կամեր առաւոտն ՚ի զիշերոյն մերկանալ : — Այն ինչ վարդագոյն ծայրակարմիր արեղակն ընդ երկիր ծաւալել կամեր » . Մակար :

Փոխանակ ասելոյ՝ Մինչչե էր մեռեալ , ասէ .

« Մինչ զեռ ջերմ ողիքն ՚ի ծոցոյն չե էին թափեալ , և շունչ վախճանին չե էր հասեալ : — Մինչ զեռ յոգւոցն պարզել ապաստան կայր » . Մակար :

Լամբրոնացի զմիակ բառս խօսել տեսինձ բանի օրինակաւ բացատրէ .

« Պետրոս՝ որ ՚ի կախառնառմ սնեալ՝ լըսեմք զի ընդ հռոմայեցւոց լեզուն խրոխտալով արշաւէ . և Փիլիպոս՝ որ ՚ի Յեթսայիդա գալիլիացւոց՝ արարացւոց բարրառով զիսօսս իւր յօդէ . Յովհաննէս՝ որ ՚ի Նազարէթ սնեալ՝ զիարդ կիլիկեցւոց ձոյնիւն դմեղ հարցաննէ . Թագէսոսն այն տիամար տեսէր որբան վայելուչ մեծաց Հայոց բառիւրն զրանս իւր յօդէ » :

Հ . Զինչ է չափաղանցութիւն .

— Առաւելուլ կամ նուազել տարապայման գգօրութիւն բանին : Զոր օրինակ .

« Իբրև զմրբիկ կառք նորա , արագազոյն բան գարծուիս երիվարք նորա » :

« Գոյ հնար թուել զխիճո հեղեղատի , և զտազ ծովու , և զշիթս անձրեի , և ոչ զատեղծեալն առ ՚ի քէն նորազիւտ բանս և իրս » . Յովի . իմաստ :

« Արդարեւ իսկ բազում աշխարհանաց արժանի եմք , բազում ոզրոց . եթէ ամենայն աշխարհս ձայն առնուցու , զոզրս հարկանիցէ , և քարինք և փայտք և ծառք և երէք և թոշունք և ձկունք , և ամենեին ամենայն տիեզերք համօրէն ՚ի ձայն ազի և ոզորմ աշխարհանաց աշխարիցեն , ոչ ինչ արժանի աշխարելոյն աշխարիցեն » . Ասկիք :

« Ոչ ինչ եթող չարիս՝ զոր ոչ զործեաց ՚ի կեանս իւր , և ոչ մնաց ՚ի մեծամեծ չարեացն , որ ոչ անցին ընդ նա ՚ի մահուան իւրում » . Եղիշէ :

« Բազում անգամ է տեսանել զգազանս վայրենիս , զարջ զինձ զգայլ զառիւծ հանդարտացեալս զարմանելով և մարդասէրս , իսկ զբարկասիրտն և ոչ երբէք : Բազում անգամ և զծով տեսանեմք հանդարտացեալ յալեաց և ցածուցեալ ՚ի վայրենութենէ . իսկ զբարկացողն և ոչ բընու : Հանապազ ՚ի զաղանութեան կայ , միշտ ՚ի վայրենութեան , յար ՚ի տմարդութեան , համակ յալէ կոծութեան » . Ասրդ .

« Զի եթէ զլիճ մի ծավուց 'ի յորակութիւն զեզոյ յեղեղեցից , և զգաշտո ասպարիզօք բազմօք սահմանեալ՝ 'ի տարածումն լայնութեան քարտենի շափեցից , և զպուրակս յոզունց անտառաց շամբից եղեգանց 'ի հաստուածս զոյութեան զրչաց կազմեցից , և ոչ զթիւ մի 'ի բարդելոցն անօրենութեանց զօրեցից ընդ զրով սահմանի զրաւել » . Նարեկ :

Հ. Զինչ է բացազանչութիւն .

— Բարբառ յայտարար սաստկազոյն յուղման կրից հոզւոյ . զոր օրինակ .  
« Ո՞վ մեծի տուրեւառութեան չնորհի երկնայնոցն և երկրայնոցս . սորա ետուն մարմին , և 'ի նոցանէ առին զշողին » . Լամբ :

« Ո՞հ ես մեզոյ նրման նրմին ,  
Եւ յանցանաց մօրն Եւային .

Եւս առաւել քան ըզնոսին

Գլուխ յանցող սուրբ օրինին » . Շնորհ :

« Ո՞վ անբերելի տղիտութեանս և ապառում բարուցս . եկ Երեմիա ցաւակից մարդարէ , և վշտակցելով ողբա զբեկումն իմ և ժողովրդեան իմոյ » . Լամբ :

« Ո՞հ , կարի է առասպելս և առասպելոց առասպել » . Խորեն :

« Ո՞վ համբոյր՝ նենզութեան նշան , և առիթ մահու » . Շար :

Ի սոյն ձեւ պատկանի և մակագանչութիւնն , որ 'ի վախճան բանին 'ի կիր արեանի , զնոյն ունելով զօրութիւն հանզոյն բացազանչութեան :

Որպէս Կամբրոնացի յետ ճառելոյ զան-  
չաս խորհրդոց տնօրէնութեանցն Քրիս-  
տոսի և գալուտեան Հոգւոյն , ՚ի վերայ  
ածէ .

« Խորհուրդ լացն և ընդարձակ . առաւե-  
լութիւն զիտութեանն Աստուծոյ տեսա-  
նի , եղրարք » :

Եւ յաճախու ուրեք ՚ի վարս հարանց զհետ  
պատմութեան առարինութեանց նոցա յու-  
րէ պատմիչն .

« Այս է խոնարհութիւն . — Այսովիս է  
հնազանգութիւն » . և այլն :

## ԴԱՍ ԺԴ

Տարակուսութիւն . — Ազերահը . — Անձը :

Հ . Զինչ է տարակուսութիւն .

— Կեղծիք երկուանաց մտաց ճարտա-  
սանին , առ ՚ի բերել զհետ զելս տարա-  
կուսանացն . զօր օրինակ .

« Հիացեալ զարմանամ մտօր , և ոչ զի-  
տեմ ուստի պարտ և պատշաճ իցէ առնել  
սկիզբն ճառիս » . Բարս :

« Եւ արդ ուր արդեօք զգարշապարս ո-  
տին կառուցից , և կամ յոր վատահութիւն  
զաչս իմ յառեցից . Զի եթէ ՚ի ձեզուն  
բարձրութեան երկնի , անտի անձրեւեաց  
հուրն Առօմայ . իսկ եթէ ՚ի յատակս խո-  
րութեան երկրի , սա երաց զկոկորդն  
բժունողական և եկու զիագան բանա-

կաւն Աքիրոնի : Եթէ 'ի համատարած օդոյն պարզոթիւն , այն եղեւ եզիապտացւոցն խաւար շօշափելի : Այլ դու ամենազօր արարիչ բնաւից , և ինձ ողորմեա կրկին զթութեամբ » . Նարեկ :

« Զի թէ պահանջէ յինէն հայրս հոգւոց և դուք ընդ նմին գործունեայք բարեաց՝ յանձն առից , զարհուրիմ երկիւղիւ՝ նայեցեալ յիմն տկարութիւն , և 'ի մեծի այսր աստիճանի բարձրութիւն , մանաւանդ 'ի չար և յանմասն բարեաց ժամանակիս : Խոկ եթէ յայսցանէ և որ նման սոցին զանդիտեալ՝ ընդդիմանամ կոչողիդ հրամանի , երկնչիմ դարձեալ յանհնազանդութեան դատաստանէ : Եւ այսոցիկ տարակուսանաց ելք ոչ այլ ուստեք , բայց եթէ յաստուածահաճոյ աղօթից ձերոց » . Շնորհ :

« Ոչ զիտեմ ուստի զայս օրէնս գտեալ մեր . 'ի նախնեացն ոչ ունիմք , զի ահացուցաւ վերազոյն . և յայլ աղզս ոչ տեսանեմք . և նոր առարեալ ոչ յայտնեցաւ մեզ , որ խախտեաց զառաքելոցն սահման : Յայտ է թէ ունիմք յանիմաստութենէ և յարհամարհութենէ օրինացն Աստուծոյ » . Լամբ :

« Եւ արդ ուստի հաւանեցուցից զձեզ , ոչ զիտեմ . զայն ասացից՝ թէ որդն նոցառ վախճանի և հուրն ոչ շիֆանի , թէ ըզմիւսն որ ասիցէ՝ թէ երթիցեն 'ի հուրն յափառենից : Եթէ զմեծատունն ածեալ կացուցից առաջի , և տակաւին ասիցէք թէ

վասն սպառնալեաց ասացեալ է : Եւ արդ ուստի հաւանեցուցից ղձեղ : Սատանայի միտք են այդ , անօգուտ չնորհ չնորհեալ՝ որ ամենեին ծոյլս կազմի . և արդ ուստի բառնայցեմք զայն՚ի միջոյ . որչափ և ասիցեմք՚ի զրոց , ասէք՝ վասն սպառնալեաց է : Այլ զայլոց զհանդերձելոցն և՚ի զլուխ երելոցն՝ ոչ ես : Լուարուք զջրհեղեղէն . մի թէ այն վասն սպառնալեաց ինչ ասացու , և չեղե , և չել՚ի զլուխ : Ասկեր :

Հ . Զինչ են աղերսանք .

— Պազատանք խառն ընդ պատճառարանութիւնս առ՚ի հաւանեցուցանել :

Աղդողագոյն է ձես , և յաճախ սովորութիւն է՚ի կիր առնուլ՚ի վերջարանութիւնս : Չոր օրինակ լամբրոնացի ձեացոցանէ աղերս՚ի դիմաց Արդւոյ առ Հոգի . և Այսուհետեւ քեզ եկեալ եհաս ժամանակ գործոյ , ով փառակից իմ Հոգի . պարտիս և զրոյդ մարդասիրութիւն ցուցանել՚ի յերկրի . այսուհետեւ քեզ ապաստան առնեմ զանուն աստուածութեանս մեր յարգել առ մարդիկ : Հայր իմ ներեաց և եթող զպարտսն՝ որով դուն խափանեցար՚ի հեղղոյ առ նոսա՝ մարմինոյ իմ պատարագաւն . սա առ զիս առհաւատչեայ՚ի նոցանէ , և տայ նոցա զքեզ խաղաղութիւն : Ե՞՞ այժմիկ , սիրոյ ազրիւր , սիրով առ նոսա , և միսիթարեա զորս՚ի պանդըստութեան վայրն նժգեհ և անցաւոր կենօր տառապին : Քեզ տամ զնոսա , քեզ յանձն

առնեմ զնոսա . զքեղ խոտտացայ նոցա ,  
և այժմ 'ի քեղ ամրափակեմ զնոսա զա-  
մենեսեան :

\* Աղաչեմ զամենեսեան , և զոտս եղ-  
րաբցդ սրբոց արտասուօք սիրոյն համբու-  
րեմ . ներեցէք իմոյ անզգամութեանս , և  
իբր վշտակից ծառայակից ընկալարուք  
դիս , և զձեղ ընկալցի նիտուս Քրիստոս  
տէք մեր . . լամբ :

Հ . Զի՞նչ Են անէծք .

— Չև մաղթելոյ այլոց կամ անձին չա-  
րիս առ զայրացման . զոր օրինակ .

\* Անէծք այնպիսի բանից . . Ռոկեր :

\* Կորիցէ օրն՝ յորում ես ծնայ , և զի-  
շերն՝ յորում ասացին թէ ահա արու : Խա-  
ւարեսցի զիշերն այն , և մի խնդրեսցէ  
զնա տէք 'ի վերուստ : Մի եկեսցէ 'ի վե-  
րայ նորա լոյս . ընկալցի զնա խաւար և  
ստուերք մահու . եկեսցէ 'ի վերայ նորա  
մէգ : Անիծեալ լիցի օրն այն և զիշերն ,  
և տարցի զնա խաւար . մի եղիցի յա-  
ւուրս տարւոյ , և մի թուեսցի յաւուրս ամ-  
սոց : Այլ զիշերն այն եղիցի 'ի ցաւս , և  
մի եկեսցէ 'ի վերայ նորա ուրախութիւն  
և մի ցնծութիւն : Խաւարեսցին աստեղք  
զիշերոյն այնորիկ . սպասեսցէ և 'ի լոյս  
մի եկեսցէ , և մի տեսցէ զարուսեակն ծա-  
զեալ . . Յոր :

\* Այլ իմ մեռցի և կորիցէ անուն և յի-  
շատակ յերեսաց երկրէ , և խաւարեսցին  
բիբր աշացս , և մի տեսցեն դլոյս . և քա-

կեսցին տկանջքու՝ և համբ եղիցի հովեալ  
րերանս , և լեզու իմ՝ ի քիմս իմ կցեսցի ,  
և մէզ և մառախուղ մեղաց և ստուերը  
մահու պատեսցէ զբոլոր անձնո , եթէ ինչ  
շարժեցայց կամ զգացայց տեսանել կամ  
լսել կամ խօսել զարդարոյն զանիրաւու-  
թիւն . . . Քաւ լիցի ինձ ձեռու ամբառնալ  
յօծեալն Աստուծոյ . . . ապա թէ ոչ , բաց-  
ցէ երկիր զբերան իւր , և կլցէ զիս կորըս-  
տեամբ ընդ բանակն Արիրոնի , և կենդա-  
նւոյն իջեմ՝ ի դժոխս . . Յովի . կար :

« Վ ասն այսորիկ Աստուծած՝ ի սպառ  
կործանեսցէ զբեղ յաւխտեան .

Եւ խրլեսցէ զարմատըս քո ,  
Յերկրէ հանցէ կենդանական : . . .

Արդ քեղ ելցէ կարճ՝ ի յօրեր ,  
Եւ կայենին հասցէ երեր :

Ի դառնութիւն դարձցին տարերք ,  
Զրրհեղեղին ելցեն զետերք :

Աեաւ ամազ մըթին կարկըտարեր  
Զբեղ արասցէ անպըտղարեր .

Առումացւոց հուր ծըծըմբեր  
Իջցէ՝ ի զլուխոդ արիւնակեր : . .

Արդ՝ ի դըժոխս իջես՝ ի խոր ,  
Զբեղ անկողին մէցք և ցեցեր .

Եւ նոյն հրեշտակըն մահարեր  
Արրով հատցէ զբեղ՝ ի յաղդեր . . .

Տուն քո լիցի անհետ աւեր ,  
Եւ դու գերի աղզով երեր . . Շնորհ :

## ԴԱՍ ԺԴ

Հարցումն . — Հաղորդակցութիւն . — Լուսեթիւն .  
Շնորհումն :

Հ . Զի՞նչ է հարցումն .

— Չե հարցական , ոչ առ ՚ի խնդրել  
զբուծումն տարակուսանաց՝ այլ առ ՚ի ստի-  
պել զունկնդիրս , և առ ՚ի սաստկագոյն  
բացատրել զրանն . զոր օրինակ .

« Ընդէր , աչս ունելով և ականջս , ոչ տե-  
սանեմք և ոչ լսեմք : Քանի ասպարէզ է  
՚ի բերանոյ մինչև ցունկն , զի զրարբառ  
սորին ոչ ներեմք ունկանն լսել և տեղի  
տալ : Այսրան էր խաւարեցուցաք զպայ-  
ձառութիւն եկեղեցւոյ վասն սնոտի յու-  
սոյ » . Լամբ :

« Մի թէ որ տնկեաց զունկն , ինքն ոչ  
լոիցէ : — Ով իցէ նմանքեզ յաստուածս ,  
տէր . կամ ով նմանիցի քեզ , փառաւո-  
րեալդ ՚ի սուրբս » : Ուր պարզաբար պարտ  
էր ասել . Որ տնկեաց զունկն , ինքն ևս  
լոիցէ : Ոչ ոք է նման քեզ յաստուածս ,  
տէր . և ոչ ոք նմանիցի քեզ , փառաւո-  
րեալդ ՚ի սուրբս :

Այսպէս և Ասկերերան փոխանակ ասե-  
լոյ՝ թէ այլ ոչ ևս կարեմ համբերել , հզօ-  
րագոյն յոյժ զործէ զբանն հարցուածոյ  
պայմանաւ ասելով . « Մինչե ցայդ վայր  
համբերիցեմ » :

Աերթ ևս հարցմանն առընթեր դնի պատասխանին . զոր օրինակ .

\* Խակ արդ չար արժան էր ասել թագաւորին . բաւ , եսոչ ասեմ . այլ խրատ՚ի գործ արկեալ զայլս ուսուցանեմ . Եղիշէ :

\* Զի՞նչ պառազ յայնժամը ետուն աշխարհի . զի՞նչ այլ , բայց եթէ երկիրս երկին եղեւ , և փառքն՝ որ՚ի բարձունս էր Աստուծոյ՝ և յերկիրս տարածեցաւ . Լամբ :

\* Զի՞նչ ծանր հրաման առաք առնել . զարս հատանել անցանել . թէ ընդ օդս թռչել , թէ ընդ բնութիւն համատարած ծովուն ցամաքաթես սլանալ . և ոչ երբէք . այլ այնպէս դիւրին է առաքինութիւն , մինչև այնպիսի գործոյ մի ինչ կարօտանալ , այլ միայն ոգւոյն և զթոյ : Զոր գործի ունէին առաքեալքն՝ որ զայնպիսի ուղղութիւնս արարին . ոչ միաձորձք և բոկք շրջէին , և ամենեցուն յաղթեցին : Զի՞նչ գժուարին՚ի հրամանաց իցէ . Աի , ասէ , առներ զոր թշնամի . մի ատեար զոր . մի չար զումեքէ խօսիր : Աոցին հակառակք են գժուարինք , և ոչ սոքա . Ասկեր :

Ծնդ սովիմբ բովանդակի և ձեն հազորդակցութեան , որով ճարտարախօսն վրատահացեալ՚ի դատիւր՝ հարցանէ զունկընզիրս . զոր օրինակ .

\* Արդ ազէ ասա , որ է արժանահաւատալի . բանքն եթէ արդիւնքն . ոչ ապաքէն արդիւնքն . զի բանք չվճարեն ինչ՝ ի հա-

ւատոց սակա , բանիւ դ' Քրիստոսին կրել զանուն , և զործով զսատանային , զի լի և լի է այնպիսին անհաւատութեամբ ։ Այսու ։

\* Այդ աղէ ասա . Եթէ յանկարծ կոչ լինիցի 'ի քաղաք ուրեք արքունի , որք ոչ զրասառ ինչ կարօտ լինիցին , ոչ պատանեաց , ոչ կօչկաց , և ոչ այլ ինչ կահի և կազմածոյ , այլ գհացիկն միայն և զջուր յաղբերացն բաւական համարիցին . և այլքն ասիցեն՝ Եթէ ոչ կառս կազմիցէք , և ոչ կակուզ անկողինս պատրաստիցէք , չկարեմք երթալ , եթէ ոչ բաղում սպասաւորս ունիցիմք , և ստէալ հանգչել հասանիցէ , և նժոյզ ևս և կարճութեան վանս և այլ ինչ բաղում պէտս , չկարեմք երթալ . և ընդ ոյս արժան է զարմանալ , ընդ նոսա՞թէ ընդ սոսա . յայտ է թէ ընդ սոսա , որք ոչ ինչ իւիք ումեք բուռն լինին : Կոյնալէս և յաշխարհիս ճանապարհի ոմանց բաղում պէտք են , և ոմանց չափ ինչ . որպէս զի աղքատութեամբն , Եթէ պարտ ինչ էք , 'ի զէալ էք մեծամտել ։ Ասկեք :

Հ . Զինչ է լուսեթիւն .

— Լոելովին ինչ աղգողագոյն տալ իմանալ զայն . զոր օրինակ .

\* Զի մի մի թուիցեմ . այլ զամենայն անարժանս յառաջ մատուցանէք , և զամենայն արժանաւորս յետս տանէք ։ Եղիշէ :

\* Որ մեղանչէ , օրինազանց է . իսկ որ

զօրէնս լուծանէ , զի՞նչ անուն է նորա . ևս պատկառիմ ասել , մանաւանդ թէ երկընշիմ . զի մի աղեկէղ բժշկութեամբս վասն 'ի խոր հարմանս զգեղ բանիս՝ երեւցոյց թշնամի . . . Լամբ :

\* Զորս վասն կռոնոսի և Արամազդայ պատմութիւնք իցեն՝ ամաչեմ ասել . ոչ սակս նոցա՝ որ արժանի են ամենայն պարսաւանաց , այլ խնայեմ 'ի լեզու իմ , զի մի ժանտասցի յիշատակօք պղծութեան նոցա . . . Արդ :

\* Ո՛վ թշուառութեանս , և արտասուաց արժանի մոլութեանս . վասն այսորիկ և բահանայք ելով , 'ի դպրաց կարդ թերես արողանամք լինել . և եսլիսկոպոսք՝ ըրաւ և ոչ ճաշակեսկ զքաղցրութիւն բանկարգութեանս , զոր բովանդակին ասել եղդանամ , բաւականացեալ 'ի լինելս անամբ անձին կշտամբիչ . . . Լամբ :

\* Վահանայք քարոզք բանին

Եւ սպասաւորք սուրբ խորհըրդին

Անխրտրաբար վարուք կէին ,

Զոր չէ ասել պարտ՝ զործէին . . . Շնորհ :

Ըստ այսմ է և կեղծեօք զանց առնելոյ զրանիւք իւիք՝ ասելն զայն . զոր օրինակ .

\* Թողից ասել զես դժնդակագոյնսն այսրժամանակի եսլիսկոպոսաց զործ . զի Շերազում անարգանաց և տուժից տանին յայլազգեաց , ոչ յաղազս ամտուածային օրինացն՝ այլ վասն սնոտի փառացյուտոյ . . . \* Զպտուզսն՝ որ նախ քան զայս 'ի միա-

շնչութեանն և մինչդեռ՝ ՚ի տաճարին խաղաղութեան է ավ՝ տայր աշխարհ, ձեզ թողումք իմաստափրել քան թէ բանիւ զանձառն ճառել ». Շնորհ :

Հ. 9ինչ է շնորհումն .

— Շնորհել անիրաւ ինչ հակառակորդին, վատահացեալ յանձին իրաւունս : Զոր օրինակ առնէ առաքեալն .

« Խակ արդ ասիցես . ոստքն փշրեցան, զի ես պատուաստեցայց : Բարւոք է . անհաւատութեամբն փշրեցան, և զու հաւատովք հաստատեցար . մի հպարտանար, այլ երկիր . զի եթէ Աստուած ՚ի բուն ոստան ոչ խնայեաց, զուցէ երբեք և ՚ի քեզ ոչ խնայեացէ » :

« Բայց համարեաց՝ թէ ՚ի հաւատոցն թիւրեցան . ՚ի կարգացն ոյր աղադաւ . զի այլ է հաւատոյն բան, և այլ է աւանդութիւն կրօնից : — Դարձեալ թիւր՝ մի աղջն կամ երկուան . Երեք ազգ քրիստոնէից, և որ ընդ նորօք բաղմապատիկ աղինք հաստատուն աշխարհօք և աթոսովք՝ զիարդ վրդովեցան ՚ի ճշմարտութենէ, և առ յեղյեղեալ և տատանեալ աղջու մեր նոյն միայն մնաց հաստատուն ». Խամբ :

« Գեղեցիկ դատիմք ՚ի ձենջ, եղբարք . քանզի զրեալ է, մի փոխեացես զսահմանս զոր եղին հարքն քո . և որ քակէ զցանկ, հարցէ զնա օձ : Բայց ասա, զո՞րս խոստովանիս զու հարս քո . եթէ զառարեալսն և զհայրապետսն՝ որք աստուա-

ծաշունչ բանիւք դեռ ևս կենդանի են 'ի  
միջի մերում, և առ ամենայն ճշմարտու-  
թիւն առաջնորդեն, և ես եմ նոցա ջա-  
տագով, և առ 'ի նոցանէ վարժեալ և ա-  
շակերտեալ։ Ապա թէ այս ոմանս, որոց  
ոչ անուն երեսի 'ի միջի մերում, և ոչ ար-  
ձանազրութիւն բանից՝ վկայ իւրեանց ուղ-  
ղութեանն, զիմաստասիրութիւնն պար-  
տիմք յայսմ վայրի 'ի գործ արկանել, և  
ընտրութեամք ճանաչել, մի գուցէ լիցին  
մեղ մոլորեցուցիչք 'ի սրբոցն հետոց, որ-  
պէս ծերք խրայէլի 'ի Վովսիսէ»։ Լամբ

Ի սոյն պատկանի ձեւ վատահութեան,  
որով ճարտարախօսն աներկիւղ ձայն տայ  
հակառակորդին, որպէս Շնորհալի առ  
ժայիրհն».

«Ծանիք և զայս, զի զիս թէ և ամենայն  
լեզուք զովեսցեն յայն բարի՝ որ ոչ է առ  
իս, հոգմոց հնչմունք վարկանիմ։ և թէ  
պարսաւէ որ և զատի յայն ինչ՝ որ 'ի մը-  
տացս խղճէ ոչ զատիմ, ոչ փոյթ ինչ առ-  
նեմ։ իսկ եթէ յորոց ունիմ և ասէ ոք,  
ոչ վասն ասելոյն, այլ վասն ունելոյն  
վշտանամ»։

«Յոր ինչ ոք համարձակիցի, անզզամու-  
թեամք ասեմ, համարձակիմ և ևս։ Եր-  
րայեցիք իցեն, և ևս։ խրայելացիք իցեն,  
և ևս։ զաւակ Արքահամուլ իցեն և ևս։  
պաշտօնեայք Քրիստոսի իցեն, յանդզնա-  
զոյնս ասացից՝ թէ առաւել ևս ևս»։

## ԴԱՍ ԺԵ

Բացադարձութիւն . — Դիմունութիւն . — Կերպարութիւն :

Հ . ԶԻՆԸ է բացադարձութիւն .

— Խօսք առ անձն բացակայ կամ վախանիալ , և կամ առ անշունչ իսկ և առ անդգայ իրո . զոր օրինակ .

\* Լուր երկին , և ունկն զիր երկիր , զի տէր խօսեցաւ :

\* Զարթիր Երեմիաս զարթիր , և ողբահանգերձ մարդարեւթեամբ զոր ինչ թըշուառացարս և զոր ինչ թըշուառանալոց եմբ . զուշակեա զյառնել հովուացն տպիտաց , որպէս երբեմն Զարարիա յիարայելին . խորին :

Այսու ձեռով Եղիշէ վարդասկետ՚ի կարզի պատմոթեանն յանկարծ խօսել սկսանի առ թագաւորն Պարսից .

\* Զի կոծիս , զի մրցիս , զի այրիս , զի բորբորիս , զի շիջանիս , զի կոչես՚ի խորհուրդ զայնոսիկ՝ որ զոգիսն ձեր՚ի ձէնջ քաղեալ՝ հանեալ է զանապականդ յալականութիւն , և զապականելի մարմինդ զիշաքարչ արարեալ՝ իրրե զաղիր մեռելոտի՚ի բաց բնկեցեալ : Ապաքեն զայդ կամիս , զի ծածկես զիսորհուրդ ամսպարշտութեան . տեսջիր յորժամ յայտնեսցի , ապա զիտասցես զելո կատարածի զորա :

Հ. Զի՞նչ է զիմանութիւն.

— Ես ոյնպէս քացակայ կամ վախճանեալ  
ահձանց, և կամ անշտնչ և անզգաց ի-  
րաց՝ մարդկօրէն խօսք. զոր օրինակ.

\* Յորդանանլուեալ վախճանական դառ-  
նայր.

Վըտակ առ վըտակ պատզամուոր լի-  
նէր.

Գետ, մի զարհուրիր, քո արտրիչն  
եմ ես.

Եկեալ մըկրբախիմ, և լըւանամ զմեզս . .  
Տաղ :

Յստ այսմ և Շնորհալի ձևացուցանէ ՚ի  
զիմաց և զեսիոյ առ Հռոմ՝ քաղաք զզիման-  
ութիւնս.

\* Եւ զու Հրոտմ, մայր քաղաքաց

Գերազայծառ և սպատուելի,

Մեծին աթոռորդ Պետրոսի

Առարելոց զըլիսաւորի,

Եկեղեցիդ անշարժելի

Խ կեփայեան շինեալ վիմի.

Դրանց զըժոխաց անցաղթելի

Եւ կնիք երկնիցըն բացողի.

Ահա առ քեզ բանըս խօսիմ

Վիճակ ւաթոռուս թաղէի.

Լուր ՚ի հեռուստ խօսյ ձայնի,

Եր ողբակից ինձ յայս վայրի :

Օրինակը զեղեցիկը յԱզեկիէլէ.

\* Այսպէս առէ տէր տէր ցՏիւրոս . . .

ամենայն իշխաննք աղզաց ծովոդ . . . յո-

գւոց հանցեն ՚ի վերայ քո, ողբս առցին ՚ի

վերայ քո և ասացեն . դիմարդ կորեար քակտեցար 'ի մէջ ծովու քաղաքդ հոյակալ , որ եղեր զօրացեալ 'ի մէջ ծովու զու և ընակիչք քո , որ զարհուրեցուցանէիր զամենայն ընակիչս քո : — Ի ձայնէ բարբառոյ քո նաւալվարք քո երկիւղիւ զարհուրեցին . . . Կոծ գառնութեան առցեն որդիք նոցա 'ի վերայ քո , ողբս առցեն և ողբասցին . Ովէ էր իբրև զՏիւրոս՝ որ լոեաց գաղարեաց 'ի մէջ ծովու :

Զգուշութեամբ պարտ է զձևս զայս 'ի կիր արկանել , և 'ի սաստկութեան ևեթ կրից , և մի յերկարաձգել յոյժ զայն :

Դարձեալ և 'ի մեծամեծ իրս ևեթ վարել նովու և ոչ 'ի չնչինս , զոր օրինակ ոչ է 'ի դէալ խօսնել դիմառնաբար առ հանդերձ ուրուք կամ առ ոտն :

Դիմառնութիւն է և զործս ինչ կամ կիրս տալ անշունչ և անզգայ իրաց . որպէս Ամբրէ տայ մահու .

« Զտեղի կալաւ Յիսուս աւուրս Երկուս , թոյլ ետ աւաղակին մտանել 'ի տուն սիրելոյն . եմուտ ապականազործն , և արար խռովութիւն ըստ կամաց իւրոց . զոռողացաւ հպարտացաւ մահ , և կատարեաց զկամս իւրոյ շարութեանն » :

« Դողալով սարսեցին դժոխք , տեսանելով զթաղաւորն անմահ » . Շար :

Հ . Զինչ է նկարազրութիւն .

— Յայտ յանդիման առաջի աչաց կացուցանել զիրն ստորազրութեամբ . վասն

որոյ պարտ է առաջի առնել զիւրաքանչիւր  
մասունս իրին , դյարակից հանգամանս ,  
զպատճառս՝ այլովքն հանդերձ . զոր օ-  
րինակ .

« Չտեսանիցնս զերեսս պատերազմողացն ,  
զիարդ տրտմազին 'ի խոնարհ կախին .  
յօնքն ահազինք և դէմք խոժոռք . աչք տ-  
րիւնախառն և սիրտ 'ի թնդոջ 'ի վեր վա-  
զեն և զկուրծո բաղխեն՝ ժողովեալք դու-  
մարեալք համօրէն , զահի հարեալք 'ի մի  
վայր ժողովեալք և ճակատեալք բազում  
կարգօք , առաւել յօրինուածովք » . Ասկեր:

« Քաղցր է ինձ ասել և յաղազս զեղե-  
ցիկ դաստակերտին Երուանդակերտի ,  
զոր յօրինեաց նոյն ինքն Երուանդ զեղե-  
ցիկ և շքնազ յօրինուածովք : Քանզի զմի-  
ջոց հովտին մեծի լնու մարդկութեամք և  
ոլայծառ շինուածովք լուսաւոր որպէս ա-  
կան բիբ . իսկ շուրջ զմարդկութեամքն  
ծաղկոցաց և հոտարանաց կազմութիւն , որ-  
պէս շուրջ զբբովին զայլ ըոլորակութիւն  
ական : Իսկ զբազմութիւն այդեստանւոյ  
իբր զարտեանաց խիտ և զեղեցիկ ծիր .  
որոյ հիւսիսային կողմանն զիր կարակնա-  
ձե զեղաւոր կուսից յօնից զարեւանդաց  
համեմատ . իսկ 'ի հարաւոյ հարթութիւն  
դաշտաց՝ ծնօտից պարզութեան զեղեցկու-  
թիւն . իսկ զետն ըերանացեալ զարաւան-  
դաք ափանց՝ զերկթերթիւն նշանակէ շըր-  
թունս : Եւ այսպիսի զեղեցկութեան դիր՝  
անրթթելի իմն զողցես 'ի բարձրաւանդակ

թագաւորանիստն զհայեցուածան ունի :  
Խորեն :

« Տիկնայք վասիկասունք Հայոց աշխարհին, որ զրգեալք և զգուեալք էին յիւրաքանչիւր բասաեռունս և 'ի զահաւորակս, հանապաղ բոկ և հետի երթային 'ի տունս աղօթից, անձանձրոյթ խնդրել ուխտիւք, զի համբերել կարացեն մեծի նեղութեանն : Որ 'ի մանկութենէ իւրեանց սնեալ էին ուղղովք զուարակոց և ամսովք էրէոց, խոտաբուտ կենօք իրրել բղվայրենիս ընդունէին զկերակուրն մեծաւ խնդութեամք, և ոչ յիշեին ամեննեին զուգորական խորտիկան : Աւացեալ ներկան մորթք մարմնոց նոցա, վասն զի ցերեկ արեւակէ զք էին, և զամենայն զիշերս զետնաբեկք : Աազմոսք էին մշտնջենաւոր մըրմունջք 'ի բերանս նոցա, և միսիթարութիւն կատարեալ՝ ընթերցուածք մարգարէիցն : Միարանեցին երկու երկու իրրեամովք հաւանաք և հաւասարք ուղիղ տանելով զակօսն արքայութեան, զի առանց զրիակելոյ հասցեն 'ի նաւահանգիստն խազաղութեան : Եղիշե : »

Աուիին ձեռովք զեղեցիկ յոյժ նկարագրէ Ոսկերերան զբնակութիւն սրբոց միայնակեցացն .

« Եթէ զժուարին ինչ թուիցի քեզ այս, Եկ երթիցուք յայն տաղաւարս. զի արդեամբք խկուսանիցիս զդիւրութիւնն : Խուզս և եթ շինեցին . և եթէ չուել հասանիցէ, այն-

ողէս թողուն և չուեն, որպէս զօրականքն  
՚ի խաղաղութեան զբանակն թողուցուն  
և գնայցեն. քանզի այնպէս քանակեալ  
են. մանաւանդ թէ ևս աւելի ցանկալի  
տեսիլ տեսանել իցէ: Քանզի և ցանկալի  
իսկ տեսիլ է տեսանել զանապատն լի  
վանականօք, վարկպարագի խորանօք խիտ  
առ խիտ թե ՚ի թե հարեալ ճիզն ՚ի ճիզն  
զապարմանցն թեակս խառնեալ քանըզ-  
զօրականացն բանակի. ուր սրահակը ձգի-  
ցին, և զտէզս և զգեզարդունս կանզնեա-  
ցեն, և զրնիցն զեզարդեանցն զազեզնա-  
կապարճս կախիցեն. պղնձապատ զգը-  
լուխսն առնիցեն, և մեծապայծառ իմն  
կմրեայ վահանացն փայլիցեն, և կողինա-  
ւորք և զրահապատք շողայցեն. թաղա-  
ւորին սպաս առնիցեն ՚ի դաշտի ուրեք ՚ի  
հարթ և յողորկ վայրի, և ճաշք զճաշս մր-  
զիցեն, և ընթրիք զընթրեօք անցանիցեն,  
գուսանք երգիցեն, փողարք զՃայն փո-  
ղոցն նուազիցեն. սակայն և այնպէս շիցէ  
զեզեցիկ տեսիլն քան զայն, զորմէ այժմ  
ևս պատմեմ: Եթէ երթիցուք յանապատն,  
և տեսանեմք զՔրիստոսի զօրականացն  
զխորանս, ոչ սրահակս ձգեալս տեսա-  
նեմք անդ, և ոչ շողունս զեզարդանց, և  
ոչ խորանս ոսկեզօծս արքունիս, այլ այն-  
պիսի ինչ՝ եթէ, ոք յերկրի, և առաւել և  
այնչափ երկայնազոյն այլ երկիր զործէր,  
և ՚ի վերայ բազում երկինս ձգէր, ոչ ա-  
պարէն նոր իմն և չքնաղ տեսիլ ցուցա-

նէր . նոյնալէս և անդ է տեսանել : զէ ինչ  
ընդհատ յերկնից բնակութիւնն նոցա .  
քանդի և առ նոսա հրեշտակը իջանեն և  
հրեշտակապետացն տէրն : Զիթէ առ Ար-  
րահամ եկն , որ կին ունէր և որդիս սնու-  
ցանէր , քանդի եաես եթէ հիւրասէր է ,  
յորժամ նս առաւել առարինութիւն ու-  
րեք գտանիցէ , զմարդն ազատեալ յեր-  
կրէ , և 'ի մարմնի զմարմինն արհամար-  
հեալ , որչափ ևս առաւել և անդ ընա-  
կեսցէ , և պար առեալ շրջիցին 'ի միջի նո-  
ցա գունդը հրեշտակաց . քանդի և նորտ  
այնալէս կազմեցին դանձինս , որպէս և  
նմա հաճոյ է :

Ծնդ սովին ձեռվ բովանդակին և նկա-  
րագրութիւն բարուց կամ գիմաց , և կամ  
խառն երկոցունցն նկարագիր . զոր օրի-  
նակ նկարագրէ Յովհաննէս կաթողիկոս  
զմեծն Աշոտ .

« Քաջահասակ էր նա և անձնեայ և թիկ-  
նաւէտ և զուարթերես և մրայօն , նկարէն  
իմն և նիշ արեան յաչս ունելով որպէս  
զյակինտ կարմիր 'ի մէջ մարգարտի ծա-  
զեալ , և վայելչացեալ գեղեցկութեանն  
ալեօր , մեծիմաստ և քաղցրաբան , և առ  
կերակուրս խրախճանաց ոչ խնդացեալ  
նորա ընդ լաւագոյնսն , և ոչ արհամար-  
հեալ զնուաստագոյնսն : . . . Վիանդամայն  
խկ ասել , եթէ որ ինչ մարգկութեանս է  
պիտանի՝ ոչ ինչ կասեցուցանէր :

‘ Նոյնալէս և Արդիս վարդապետ զբար-  
կացողն նկարագրէ .

Յօնքն անկեալք և խոնարհեալք , Երեսքն  
գեղինք և ապականեալք , շրթունքն սեաւք  
և երիթացեալք , ունչք երկայն և սուր ,  
ձայն խոշոր և թիւր , աչք հրատեսակք ,  
բանք ընդդիմագրեալք և անախորժելիք ,  
և բոլորովին դժնեայ և ահարկու տեսո-  
ղաց \* ։

## ԴԱՍ ԺԶ

Հակադրութիւն . — Կախումն :

Հ . Զինչ է հակադրութիւն .

— Չե բանի , յորում բառք բառից կամ  
իմաստք իմաստից ներհականք յօրինին .  
զոր օրինակ .

Վ ասն առողջութեան զապիկարն կար-  
դայ , և վասն կենաց զմեռեալն աղաչէ , և  
վասն 'ի թիկունս հասանելոյ տարակուսե-  
լոյն մաղթէ . և վասն ճանապարհորդու-  
թեան զայն՝ որ և զոտն յոտանէ չկարէ  
փոխել , և վասն ընշաւետութեան և զոր-  
ծոց կորովութեան յանարդաստորէն ձե-  
ռօր զարդաստորութիւն խնդրէ . իմաստ

\* Արդ կրիցն լիցուք մի աղճատիչք , այլ  
ցաւակիցք . մի եպերիչք , այլ առողջացու-  
ցիչք . մի կակծեցուցիչք , մի երգիծանիչք ,  
այլ միսիթարիչք . լամբ :

Վ այելուչ է ձես այս մանաւանդ 'ի կրշ-  
տամբութեան . այսպէս հաւատացեալք  
դնախարարս Հայոց տկարացեալս 'ի հա-  
ւատոց կշտամբէին .

\* Պիետք Ելիք առաքելական քարոզութեանցն, արդ աշակերտ լինիցիք մոլար խարէութեանն . ուսուցիչը Ելիք ճշմարտութեանն , արդ ուսուցանէք զգատիք խարէութիւն մողաց . քարոզք Ելիք արարչական զօրութեանցն , արդ զտարերու աստուածո խոստովանիք . յանդիմանիչը Ելիք ստութեան , արդ և քան զսուտն ստագոյնք լինիցիք . 'ի հուր և 'ի հողի մերրտեալք , արդ 'ի մոխիք և յաճիւն թաթաւիցիք . կենդանի մարմնով և անմահ արեամբ Ելիք սնեալ , արդ 'ի ճենճեր զոհից և 'ի շարաւս աղանդիս մրճոտիցիք . տաճար Ելիք Հոգւոյն սրբոյ , արդ զոհարան դիւաց լինիցիք . քրիստոսազգեացք Ելիք 'ի մանկութենէ , արդ մերկացեալք 'ի փառացն՝ դիւարար արեգական կարաւիցէք . ժառանդ Ելիք արքայութեան , արդ անձամբ զանձինս արկէլք 'ի ժառանդ զեհենին . . Եղիշէ :

Առջին հակադրութեան ձեռվլ քաղղատէ, Ասկերերան զվարս այնր ժամանակի որերոյն ընդ սրբոց միայնակեցացն .

\* Մեք յօրանշիցեմք , խորդայցեմք , այսր անդք յեղյեղիցիմք , մինչ նորա զգիշերն ամենայն ընդ օրհնութիւնսն հանիցեն : Եւ յօրժամ այդ լինիցի , հանգչին փորք մի . և յօրժամ ընդ գործ խառնիցեմք , նորա խուն քնովին յազեցեալք և հանգուցեալք , դարձեալ միւսանգամ յօրհնութիւնսն կազմիցին : Խոկ մեք շե այդ եղեալ իւրա-

քանչիւր զընկեր կոչեմք համարս պահան-  
ջել , և կէսր ընդ հրապարակս ճեմտեալ  
շողայցեմք : . . Խոկ նորա դարձեալ իբրեւ  
զառաւօտին զազօթոն և զօրհնութիւնս  
կատարեն , ապա յրնթերցուածս զրոց շրր-  
ջիցին : . . Վինչ մեք ամեներին ճաշիցեմք ,  
խաղայցեմք , ծիծաղիցեմք , ուռուցանի-  
ցեմք զօրովայնս , որկորատութեամք շուայ-  
տիցեմք , մցոիցեմք , նորա օրհնութեամբքն  
զմայլիցին : Չիք ժամ սեզանոց և ոչ խորտ-  
կաց յառաջ թերելոց . և դարձեալ յետ  
ճաշոյ ՚ի նոյն ոճ մտանիցեն , կան պատ-  
կառ օրհնութեանցն : Աշխարհականք և ցե-  
րեկն ննջեն . նորա ցանկ արթունք և պատ-  
րաստք ՚ի պաշտամանն . արդարեւ որդիք  
լուսոյ են և որդիք տունջեան :

Հ . Զի՞նչ է ձեւ կախման :

— Տարտամեալ ունել զոգիս ունկըն-  
դրաց՝ ակնկալեալ ՚ի լուր կարեւոր ինչ ի-  
րաց :

Առաջին ձեռվ յօժարամիտս առնէ ճար-  
տասանն զունկնդիրս , որով ազգողազոյն  
մտանեն բանք ՚ի լուելիս նոցա . զոր օրի-  
նակ . « կամիս և նոր ինչ ասել . այլ մի  
ինչ կարի զարմանայցէք կամ խռովիցիք :  
Եւ զի՞նչ իցէ : Պատարագն նոյն է . Եթէ  
չափ և զոյզն ոք մատուցանիցէ , և Եթէ  
Պաւզոս և Պետրոս զլխուիին սակայն նոյն  
է . զոր և Քրիստոս ևտ աշակերտացն ,  
զնոյն այժմքահանայքս կատարեն , և չէ  
ինչ ընդհատ յայնմանէ » . Ասկեր :

Ճարտար ՚ի կիր արկանէ զձեւս զայս  
Յովսեպոս ՚ի պատմել զիրս ինո՞ցն , որ  
վասն սովոյն զորդին իւր խորտիեաց և ե-  
կեր . զի յետ պատմելոյ թէ որպէս յանհնա-  
րին սովուն զկաշիս վահանացն և զիսոտ  
ցամաք ճարակէին Հրեայք , յաւելու ապա .  
« Յայց զի՞նչ պիտոյ է մեղ զշարութիւն  
սովոյն յանչունչ կերակրոցն ցուցանել .  
զի ունիմ ես ցուցանել գործ մի , որ նման  
նման ոչ ՚ի մէջ Յաւնաց և ոչ բարբարոսաց  
պատմի եթէ գործեցաւ . զի զողումն և  
սոսկումն է պատմել , և լսելեաց դժուա-  
րին է Հաւատալ : Արդ կամակար անփոյթ  
առնէի ես անցանել զայսու թշուառու-  
թեամբ , զի մի ստել երևեցայց յետա-  
մնացացն , եթէ ոչ բաղում վկայս ունէի . և  
թերեւս շնորհս ինչ գուզնաքեայ ընդ որ-  
դիս ժողովրդեան իմոյ առնէի ես , խեայե-  
լով զայն ինչ՝ զօր արդեամբքն պաշտե-  
ցաւ : Եւ ապա յարէ զպատմութիւնն :

Կրկին օրինակք զեղեցիկք դարձեալ  
յԱկեբերանէ .

« Եւ ուր է՝ զի չէ ախտն այն (խեղկատա-  
կութեան .) արդ և յեկեղեցի ես եմուտ ,  
և ՚ի զիրս ես մեսեցաւ : Ասացից ինչ , զի  
ցուցից զշարեացն առաւելութիւն . ամո-  
չեմ , բայց սակայն ասացից . քանզի կա-  
միմ ցուցանել թէ որչափ տարածեցան շա-  
րիքն , զի մի կարծիցիմ եթէ վասն շնչին  
իրաց սուտ խօսիցիմ , այլ զի զոնեա այն-  
ովէս կարացից մերժել զձեղ ՚ի պատրա-

նացն : Եւ մի ոք համարիցի եթէ ՚ի մտաց  
ինչ կարկառեմ , այլ զոր ինչ լուսցն՝ դայն  
առեմ : Եմուտ ոմն ՚ի տուն աւագաց , թէ-  
պէտ և ծաղու բանք են , սակայն ասացից  
իբրև սկսուանեզ խորտկօք առաջի եղին ,  
առէ . ընկալարուք զխրատ , զի մի բար-  
կասցի որովայն :

« Հաւատայցէք արդեօք եթէ եղե ջրհե-  
ղեղ , եթէ առանցելոց ինչ բանք թուիցին  
ձեզ , ուր և լերինքն յարս տապանն զա-  
դարեաց՝ վկայեն . զշայոց լերանցն ա-  
ռեմ : Այլ ևս յաճախութեամք , և յայլ  
ևս բան ՚ի նոյն յայտնագոյն ածիցէ բանս .  
Երթեալ ուրուք իցէ ձեր ՚ի պազեստինա-  
ցւոց աշխարհն : Այսուհեաև ոչ ևս բանս ,  
այլ արդիւնս իսկ առեմ . թէպէտ առա-  
ջինքն քան զարդիւնքն յայտնագոյնք են .  
զի զոր զիրք ասեն , և քան զաշաց տեսիլ  
հաւատարմագոյնք են : Երթեալ ուրուք  
իցէ ձեր ՚ի պազեստինացւոց աշխարհն .  
զինչ ոք ՚ի ձենջ վկայեսցէ ինձ , որոց ըզ-  
տեղիսն իսկ տեսեալ իցէ . քան զԱսկա-  
զոն և քան զԴազա՝ ՚ի վերոյ , անդ իսկ ՚ի  
սպառուածի Յորդանան զետոյ վայրքն ինչ  
բազում են և ամենալիցը , մանաւանդ թէ  
էին , քանզի այժմ ոչ է նոյնպէս , որ եր-  
բեմն իբրև զդրախտ Աստուծոյ էին : Եւ  
ապա նկարագրէ զԱռողոմայ հրոյն արգա-  
սիս :

## ԴԱԱ ԺԵ

Դախապաշարումն . — Զե Բազմայեղանակ . — Բաժանորդութիւն :

Հ . Զի՞նչ է նախապաշարումն .

— Յառաջ բերել զառարկութիւն այլոց , և լուծանել զայնս . որպէս առնէ առաքեալն .

\* Խոկ արդ ասիցես . ոստրն փշրեցան , զի ես պատուաստեցայց : Բարւոք է , անհաւատութեամբն փշրեցան , և գու հաւատովք հաստատեցար . մի հսկարտանար , այլ երկիր . զի եթէ Աստուած 'ի բուն ոստսն ոչ խնայեաց , զուցէ երրէր և 'ի քեզ ոչ խնայեսցէ » :

Առյնպէս և Ասկերերան յառաջ բերէ զանողորմածացն առարկութիւնս և հերքէ . \* Ա.Ա. Բազում անզամ , ասէ , ետու Եւ նա չուտիցէ հանապազ . և զորդիսն քո , յորժամ յաճախ խնդրիցեն , միթէ 'ի բաց մերժեսցես . ո՛ անհնարին անամօթութիւն . . . Զդիտիցես որ հարկը որովայնին են , որ դամենայն ինչ վասն նորին հնարիցիս . . . Ա.Ա. 'ի շատիսոսութիւնս հատանիս . այսր անուան այսչափ դահեկանք 'ի վարձու կան , և այսր անուան ևս աւելի , և նա մուրանայ : Զմանկտուոյ զրոյց խօսիք և զշաղփաղփութիւնս . քանզի և նորամիշտ առասպելաց դայեկացն անսան :

Զառնում յանձն , չհաւատամ , քաւ լիցի ,  
մոխ որ տայցէ և 'ի բարութեան իցէ՝ և  
մուրանայցէ : Կ'ը վասն , աղէ ասա . զի՞նչ  
ինչ քան զմուրանալ դործ ծանակաց կայ-  
ցէ . լաւ է մեռանել քան զմուրանալ :

— Բազմօրինակարար զնոյն և զմի բան  
յեղյեղել , զանաղան եղանակօքն աղջո-  
ղագոյն զբանն առնելով :

Ի յօրինուած այսր ձեռյ խառնին բա-  
ղում և այլ ձեք :

Աքանչելի յօրինէ Աարզիս վարդապետ  
զայս ձե . 'ի կոչելն Աստուծոյ զԱղամ յա-  
պաշխարութիւն .

\* Առև նմին Աստուծոյ , զի՞նչ առէր առ  
մեղուցեալ և թաղուցեալ մարդն . Ադամ  
ուր ես : Ոիթէ ոչ զիտէր թէ ուր էր . մի-  
թէ ոչ տեսանէր ամենատես ակնն , միթէ  
տղիտանայր արարիչն . քաւ լիցի : Ադամ  
ուր ես . տրամութեան էր ձայնն , տարա-  
կուսանաց բարբառն : Որպէս հովիւ զի կո-  
րուսանիցէ ոչխար 'ի հօտէն , և տրամու-  
թեանն ձայնիւ լնուցու զանտառն , նոյն-  
զունակ և արարիչն զդրախտն : Ադամ  
ուր ես . ընդէր թարշիս յերեսաց արար-  
շիս , հիմ ամօթովլ լցեալ ես և երկիւզիւ :  
Ոչ վասն այդորիկ ստեղծի զքեղ , զի փա-  
խըստական լինիցիս յինէն , ոչ վասն այդո-  
րիկ փառօք զարդարեցի զքեղ , զի ամա-  
չէիր յինէն , այլ զի 'ի զիրկս քո և 'ի հողի  
ընդունէիր զիս : Ադամ ուր ես . յորպիսի  
անարդանս , յորպիսի զազրալի տեսակս ,

յորապիսի ամօթ երեսաց, յորապիսի խեղճ մտաց, յորապիսի ալիս տարակուսանաց, Լուայ, ասէ, զձայն գնալոյ քո 'ի զրախտի աստ, և երկեայ. քանզի մերկ էի, և թագեայ . . . Արդարեւ ստուգապէս մերկ, ոչ 'ի հանգերձից միայն՝ այլ և յարդարութենէ :

Հ. Զի՞նչ է բաժանորդութիւն.

— Յիշատակել առ հասարակ զկարեոր մասունս բանին, և ապա մի ըստ միոջէ բացատրել զայնս. զոր օրինակ. « Արդ տես զբազզրութիւն և զսաստկութիւնն Աստուծոյ. 'ի վերայ կործանելոցն ասատկութիւն, և 'ի վերայ քո քազզրութիւնն Աստուծոյ » . Համ:

« Հոգիք սրբոց հեռի են յայսպիսի ախտակրութեանց (այսինքն 'ի մարդահաճութենէ), այլ մանաւանդ ընդդիմակացը այսպիսի ախտիցս են բանիւք և արդեամբք Բանիւք, յորժամ ասէն Պաւիթ. Աստուած ցրուեսցէ զոսկերս մարդահաճոյից . . . Ի վերայ այսորիկ կնքէ առաքեալ բանիւք իւրովք. Եթէ տակաւին մարդկան հաճոյ լինէի, ապա Քրիստոսի ծառայ ոչ էի: Իսկ արդեամբք, յորժամ թշնամանէին և բամբառէին և նախատէին, և ըզփառաց ինչ ոչ հոգային, և փոխարէն ըզնախատիչսն ոչ նախատէին, այլ և երախտիս հատուցանէին ». Արդ:

« Քանզի որ մարք են առաքինութեանց ոկզբունք՝ խմաստութիւն, արտթիւն, ող-

ջախոռնութիւն և արդարութիւն, վրիպեալ  
գտանին յիմումս իշխանականի մասին։  
Զի ոչ խրատեցի զրանն որ յիս՝ իմաստու-  
թեամբ, և ոչ զցանկութիւնն՝ ողջախոռնու-  
թեամբ, և ոչ դարձեալ զայսոսիկ խրա-  
տեցի արդարութեամբ։ Ենոր։

### ԴԱՅ ԺԲ.

Ուղղութիւն. — Անցումն. — Արտուղութիւն։

Հ. Զի՞նչ է ուղղութիւն։

— Ուղղել զասացեալն սլատշաճագոյն  
ասացուածով. զոր օրինակ։

« Այս է քո պանծալի աստուածաբանու-  
թիւնդ, մանաւանդ թէ յիմարութեանդ  
ցոյցք, զնիւթս զայս յաւէժակից ասել ա-  
րարչական զօրութեանն։ Լամբ։

« Աստանօր ամաչեմ ասել զճշմարտու-  
թիւն, մանաւանդ թէ զանօրէնութիւն և  
զամարշացութիւն աղզիս մերոյ, զմեծի  
ողբոց և արտասուաց արժանի սոցա ըղ-  
գործս։ Խորեն։

« Զայսոսիկ լսելով, եղբարք, հայես-  
ցուք՝ ի մեզ և սթափեսցուք յահազին ար-  
բեցութենէս, եթէ արբեցութիւն սլարտ է  
անուանել զմերս, և ոչ խելագարութիւն  
և կամ դիւաբաղխութիւն։ Այսդ։

« Աստ աղբիւր հրեղէն հոգեոր բղխէ՝ ի  
սեղանոյս, և քո զայս թողեալ՝ ի թատըն  
ձեպիս. . . թողեալ զՔրիստոս՝ որ նսափ

առ աղրիւրս, քանդի և այժմ առ աղրիւրն նստի, ոչ ընդ շամբացւոյն միայն խօսի՝ այլ ընդ համօրէն քաղաքիս: Բայց թերեւ և այժմ ընդ շամբացւոյն. քանդի շիր որ և այժմ առ նմա մօտ. այլ ոմանք մարմնով միայն, և այլք և անձամբ իսկ մեկուսի: Ասկեր:

\* Անդ իսկ 'ի սպառուածի Յորդանան գետոյ վայրքն ինչ բազում են և ամենալիցը. մանաւանդ թէ էին, քանդի այժմ ոչ է նոյնալէս, որ երրեմն իրրե զդրախտն Աստուծոյ էին: Ասկեր:

Հ. ԶԵՆԸ է անցումն.

— Զօդ կցորդութեան մասանց ճառին. զոր օրինակ.

\* Եւ արդ վասն զի ծանուցաւ փոքր 'ի շատէ որբան միանգամ յաստուածաղկեստիցն տուաւ յաղագս երկնայնոցն կարգաւորութեան, բեր այսուհետեւ զրնտանեղոյնն մեր դիցուք առաջի առ 'ի քննութիւն: Ենորի:

\* Այլ այսորիկ քեզ բաւականացեալ, ես 'ի կարգ պատմութեանն դարձայց: Յով. կար:

\* Բայց մեք զայսոսիկ 'ի տեսողս անդր թողացուցեալ, և զորս աչօք իսկ տեսեալ է մեր՝ ոչ դանդաղեսցուք պատմել: Կոյն:

\* Այլ չգիտեմ զիարդ վայրապար ընդ խարս եկի յայսալիսի բանքս. զայլս խրատէի հեղութեամբ ուսուցանել, և ես ինձէն 'ի ցասումն զառածայ: Թէ այնալէս

իցէ , դարձցուք անդրէն՝ ի մեր խրատն ,  
և հոգ տարցուք ամենայն թերութեան կե-  
նաց մերոց , դի ուղղեսցուք զոր կամի-  
ցիմք . Ուկեր :

« Ահաւասիկ երեք ճառք , և զսկզբանս  
բան ոչ ևս կարացաք լուծանել . մի թէ  
վայրապար ինչ ասէի՝ եթէ խորք անդնդոց  
են միայք ճառիցս : Յն առեալ այսօր զմնա-  
ցեալսն արկանիցեմք՝ ի հարց և՝ ի փորձ .  
Ուկեր :

Հ . Զինչ է արտուզութիւն .

— Սուղ ինչ հեռացումն՝ ի կարգէ բա-  
նին , առ ՚ի հանդիսատ ունկնդրաց կամ յա-  
ռաւել ազգուութիւն բանին :

Բայց ամեննեին զգուշալի է զի մի ինչ  
բռնի և անյարմար մուծցի ՚ի ներքս , և  
զի ՚ի կատարածին վայելչաբար դարձցի  
յառաջադիր բանն :

Այսպէս Յովսեալոս՝ ի պատմել զպատե-  
րազմն Հրէից ընդ հռոմայեցիս՝ առնէ ար-  
տուզութիւն , ստորագրելով՝ զհրահանգս  
հռոմայեցի զօրականին .

« Աստանօր յոյժ զարմանալոյ արժանի  
համարիցի ոք զնախագահութիւն հռոմա-  
յեցւոց , որք այնպէս վարժեն զծառայս ,  
մինչ զի ոչ միայն՝ ի պաշտօն կենաց՝ այլ  
և՝ ՚ի գործ պատերազմի օդտակարք իցեն :  
Իսկ եթէ ոք նայիցի ՚ի նոցա կրթութիւն  
զինուորութեան , արդարեւ իսկ ծանիցէ զի  
զայսրան թագաւորութիւն ոչ շնորհիւ բա-  
րերախտութեան՝ այլ իւրեանց քաջու-

թեամբ ստացան : Քանիդի զինու վարել ոչ  
եթէ ՚ի պատերազմի սկսանին , և ոչ միայն  
յորժամ պիտոյ է՝ զձեռս շարժեն մինչ ՚ի  
խաղաղութեան պարապիցեն , այլ ընդ զի-  
նու որպէս թէ ընութեամբ միացեալք . . .  
ոչ երբէք ժամանակի սպասեն : Եւ յետ  
նկարագրելոյ զերթութիւն նոցա և զհլու-  
թիւն և զարիտթիւն և զամենայն ինչ  
խորհրդով զործել , յաւելու ապա , «Արդ  
որոց զործք սկսանին ՚ի խորհրդոց , և ըզ-  
խորհեցեալն այնչափ յօժարութեամբ կո-  
տարեն զօրք , զինչ զարմանք՝ եթէ Եփ-  
րատ յարենից , և Ավելիանոս յարեմտից ,  
և ՚ի Հարաւոյ Ավերիկեայ քաջարեր երկիր ,  
և ՚ի Հիւսիսոյ Հռենոս և Դանուբ են սահ-  
մանք թաղաւորութեանն Հռոմայեցւոց՝  
զոր բարւոր կարիցէ որ ասել զեռ փոքր  
զոլ զստացուածն ստացողացս : Արդ զայս  
յիշեցի , ոչ զի սփոփիցեմ զստարաեալսն՝  
և զխռովասէրսն երկեցուցանեմ . թերես  
և առ հմտութիւն քաջութեան հետեղացն  
ասացեալքս օդտակարք Եղիցին , որք ոչ  
զիտեն զստհմանադրութիւն զինուորու-  
թեան Հռոմայեցւոց : Բայց դարձայց անդ-  
րէն ուստի ելի :

Զկերպարանս այսր ձեռոյ բերեն ՚ի Հա-  
մառօտութեան և միջանկեալ պարբերու-  
թիւնք , զորս փակազծիւ սովորութիւն է  
ոմանց արոհել . զոր օրինակ .

\* Եթէ ոչ զիտէք , եղբարք , զի ընդ զի-  
տունս օրինաց խօսիմ , զի օրէնք տիրեն

մարդոյ որչափ ժամանակս կենդանի է» .  
Համ : Իբր ասել , պարտիք զիտել զայս ,  
զի օրէնսգէտը էք :

« Եւ արդ միտ զիր և հաւատոցն և հնա-  
զանդոթեան առարելոցն : Թէպէտ և 'ի  
զործ արուեստին զբաղեալ էին , (և զի-  
տէք իսկ թէ զիսրդ քաղցր և պատիք  
ձենորսոթիւն էր) , սակայն ոչ ինչ զան-  
դաղեցան լսել այնմ որ կոշեացն զնոսա .  
Ասկեր :

« Երթեալ ուրուք իցէ ձեր 'ի պաղես-  
տինացւոց աշխարհն , ( այսուհեան ոչ ևս  
բանս , այլ արդիւնս իսկ ասեմ , թէպէտ  
առաջինքն քան զարդիւնսն յայտնագոյնք  
են . զի զոր զիրք ասեն , և քան զաշաց  
տեսիլ հաւատարիմագոյնք են) . Երթեալ  
ուրուք իցէ ձեր 'ի պաղեստինացւոց աշ-  
խարհն » . Ասկեր :

## ԴԱԱ ԺԹ

Ընդլայնումն :

Հ . 9ինչ է ընդլայնումն .

— Զսուղ ինչ իմաստընդարձակել առ 'ի  
բացայացտագոյն իմացուած , և առ 'ի  
սաստկագոյն աղդուոթիւն բանին :

Եւ զոր օրինակ կրկին աղդ են ձեռց ,  
ըստ բառից և ըստ իմաստից , նոյնուկո և  
ընդլայնումն կրկնակի յօրինի , բառիւք և  
իմաստիւք :

Հ. Արակես յօրինի ընդլայնումն բառիւք .

— Յօրինի , որպէս 'ի կարգս ձեռց առացաք , յաճախութեամբ նոյն կամ համանանակ բառից . զոր օրինակ Դաւիթ յողբալն զԱրիսողոմ , աղդեալ 'ի բնութենէ զձես զայս յօրինէր .

\* Արդեակ իմ Արիսողոմ , Արիսողոմ որդեակ իմ . ո՞ տայր զմահ իմ փոխանակ քո , ևս փոխանակ քո Արիսողոմ որդեակ իմ , որդեակ իմ Արիսողոմ :

\* Եւ մեք յորանչիցեմք , ձգտիցիմք , քուքիցեմք , քոչքոտիցեմք , շնչիցեմք , խորդայցեմք , այսր անդր յեզյեղիցիմք , և յորսայս խազայցեմք , և աղզի աղզի խտպտանս զմտաւ ածիցեմք , մինչ նոքազդիշերն ամենայն ընդ օրհնութիւնսն հանիցեն » . Ասկեր :

\* Եւ արդ վասն այնր չէր պարտ ըիւրապատիկ պատառ պատառ կոտորել , ցանկ սպանանել , բազում մահուց համբերել , և զամենայն զինչ և ինչ իցեն չարչարանք կրել և բանիւք և արդեամբք . և եթէ կենդանւոյն հրով այրել իսկ հասանէր , չէր պարտ այրել վասն հասանելոյ խոստացելոց բարութեանցն » . Ասկեր :

Ծնդ սոմին ձեռով բովանդակի և ընդլայնումն 'ի ձեռն փոխարերական բառից . որպէս Աարդիս վարդապետ առնէ 'ի զովել զնախնի սուրբ միանձունս .

\* Արք իմաստուն վաճառականքն էին , ան-

ցաւորօքս զյաւիտենականն գնելով ըդ-  
կեանս . ճարտար զեկավաբբ , որբ առանց  
նաւակոծութեան անցինքնդ ահադին ծովս  
կենցաղոյս . արիագոյն զօրականքն Քրիս-  
տոսի , որբ ոչ լքան 'ի հոգեոր պատերազ-  
մին . միամիտ աղաւնիքն , որ 'ի խուճա-  
պելոյ բազէին 'ի սիրոյն Աստուծոյ ոչ խու-  
ճապեցան . ողջախոտ՝ տատրակքն , որ 'ի  
գարշ ցանկութեանց տուփանացն ոչ աղ-  
տեղացան . բանաւոր ծիծուռնք , որ 'ի յօ-  
ծիցն խարամանեաց ոչ վեսանցան . ան-  
մեզ գառինքն , որ 'ի գայլոցն պատառո-  
ղաց ոչ կեղեքեցան :

Ըստ սմին օրինակի և շրջարանութեամբ  
յօրինի ընդլայնումն . որպէս Եղիշէ վար-  
դապետ փոխանակ ասելոյ զուխտադրուժն  
Վասակայ թէ ուրացաւ զհաւատս Քրիս-  
տոսի , ասէ .

« Վանդի մոռացօնք եղեն նմա գալուստ  
Որդւոյն Աստուծոյ , և ոչ յիշեաց զքարո-  
զութիւն սուրբ աւետարանին . և ոչ 'ի  
սպառնալեացն զանգիտեաց , և ոչ յաւե-  
տիսն միսիթարեցաւ . ուրացաւ զաւաղանն ,  
որ յզացաւն զնա . և ոչ յիշեաց զընկա-  
լուչ սուրբ Հոգին , որ ծնաւն զնա : Անար-  
դեաց զմարմինն պատուական՝ որով սրբ-  
բեցաւն . և առ ուն եհար զարիւնն կեն-  
դանի՝ որով և քաւեցաւն 'ի մեզաց . ջըն-  
ջեաց զզիր որդեզրութեանն , և իւրովք  
ձեռովք խորտակեաց զհաստատուն կնիք  
մատանւոյն . եւ 'ի թուոյ երանելեացն , և

ապստամբեցոյց ընդ իւր զբազումս . ձեռն  
արկ կամակարութեամբ և եմուտ յորդե-  
զրութիւն դիւապաշտութեանն , և եղե  
աման չարին , և ելից զնա սատանայ ամե-  
նայն խորամանկութեամբ . 'ի ձեռն էառ  
իրրե զվահան , և ագաւ զնա իրրե զրահս ,  
և եղե իրրե զինուոր կատարեալ կամաց  
նորա » :

Յօրինի գարձեալ և 'ի ձեռն աստիճա-  
նաց . զոր օրինակ .

\* Զկարիցես թափուր յընչից լինել , դէք  
զայլոյ մի յափշտակիցես . չկարիցես պա-  
հել , զոնեա 'ի փափկութիւնս մի հատա-  
նիցես դանձն . չկարիցես 'ի զետնի ննջել ,  
զահոյս արծաթապատս մի առնիցես .  
Ասկեր :

\* Յելադիր լեր , աղաչեա , զամենայն  
հնարս հնարեցիր . թերես կարասցես զո-  
մանս ապրեցուցանել . և եթէ զոմանս ոչ ,  
սակայն կէս մի . և եթէ կէս մի ոչ , սա-  
կայն զերիր մասն մի , սակայն տասներորդ  
մի : Եւ եթէ ոչ այսպէս , զոնեա զմի ոք 'ի  
բազմաց : Եւ եթէ ոչ զմի ոք , սակայն զբո-  
անձնդ ապրեցուսցես 'ի տանջանաց .  
Այրդ :

\* Ոչ միայն առաքեալք , այլ և սպասա-  
ւորք , այլ և ականատեսք խանին . և ոչ  
միայն ականատեսք , այլ և սիրելիք , և  
բարեկամբ , և որդիր , և ժառանգք , և ժա-  
ռանգակիցք » . 'Եոյն :

Հ . Որպէս յօրինի ընդլայնումն իմաս-  
տիւր .

— Ճարտարութիւն մեծ ճարտասանին  
յայսմ իսկ է, ճոխարանել առանց շատ-  
խօսութեան և ճամբարտակութեան, և այս  
իսկ է աիրապէս ընդլայնումն. և առ այս  
չիր վարժապետ մեհագոյն՝ քան զԱսկերե-  
րանին ճառից յաճախ ընթերցուած:

Որինակը ինչ ՚ի ճառից անտի պարզա-  
բանեցեն զարտասխանիս քան զամե-  
նայն բացատրութիւնս բանից: Քանդի  
զսուղ իմաստս զայս, զի ոչ ինչ իւիք օ-  
րէն է մարդոյ մեծամտել, այսպէս ընդ-  
արձակէ.

\* Ո՞րչափ ինչ բարութիւնս ծնանիցի մեզ  
խոնարհութիւն. զի՞նչ կամիցիս, ո՞ւսս չու-  
նել, անցատումն լինել, մարդասիրու-  
թիւն, մտադիւրութիւն. այս ամենայն բա-  
րիք ՚ի խոնարհութենէն են, և սոցին հա-  
կառակը ՚ի հպարտութենէ: Հարկ է այն-  
պիսւոյն թշնամանիչ լինել, հարկանող և  
բարկացող և զառն և անհամբոյր, զաղան  
մանաւանդ և ոչ մարդ: Ուժգին իցես, և  
յայն սակս մեծամտիցես. թէ այնպէս իցէ,  
և վասն այնորիկ առաւել պարտիս խո-  
նարհել: Զի՞ չնչին իրօք մեծամտիցես.  
քանդի և առիւծ զաղանագոյն քան զքեզ  
է, և վարաղ ուժգնագոյն, և զու իրրե  
զմժիխ մի ես առ նորօք. և աւաղակը և  
զերեզմանակրկիտք, և ՚ի վսեր եկեալքն.  
և ծառայքն իսկ քո, և թերեւս որ կարին  
իսկ անաղատք և չարաբարոյք իցեն, զօ-  
րագոյն քան զքեզ իցեն: Եւ այն զովու-

թեան ինչ արժանի իցեն . և չկայցես ինչ  
ծանակ այնպիսի ինչ իրօր մեծամտել :  
« Այլ թերեւս գեղեցիկ և բարենշան որ ի-  
ցես . և այն աղջկանց նշանք են . բայց սա-  
կայն քան զսիրամարդ գեղեցիկ չիցես , և  
ոչ այնպէս ծաղկալից համապայծառ թես  
ունիցիս իրրե զայն թռչուն՝ որ վարսիւքն  
և գիտակօքն , որ խորձացեալ կարակնեալ  
բազմաճեմուկ տանովն յաղթէ քեզ գե-  
ղեցկութեամբ : Կա և փորն կարի իսկ գե-  
ղեցիկ է , և այլք ևս բազումք 'ի թռչնոց ,  
ընդ որո թէ կամիցիս անցանել 'ի հանդի-  
սի ոչինչ ամենեին տեսանիցես զանձն ,  
բազում անզամ և մատազ մանկափ , և  
աղջկունք անփորձք յամուսնութենէ , և  
պոռնիկ կանայք , և արք կանացիք իգա-  
ցեալք նազեցան այնպիսի պարծանօք : Այ-  
սրդ այն պարծանաց ինչ արժանի իցէ  
կամ մեծամտութեան » :

« Եւ թերեւս զի մեծատուն իցես , հար-  
տանայցես : Ուստի իցէ զոր ունիցիսն , և  
կամ զի նչ ունիցիս : ոսկի , արծաթ , ա-  
կանս պատուականս . այն և աւազակաց  
և սպանողաց պարծանք են և ոսկեհանաց ,  
և որք 'ի քրէական մետաղսն խոնջիցին :  
Թերեւս զարդուք ինչ և պաճուճանօք հը-  
պարտանայցես , զայն և 'ի ձիան է տեսա-  
նել . պարսիկք և զշառաւունսն նկարեն և  
պաճուճեն . այլ 'ի մարդկան միջի 'ի բո-  
զանոցս և եթ վայելեն այնպիսի պաճու-  
ճանք , ուր պատիրքն և որոգայթքն են :

Չամաշես շթրջիս այնպիսի իրոք հագարտա-  
նալ , որովք և անասունք հանդոյն քեզ  
լինիցին , և ծառայր և սպանողք և կա-  
նայր և աւազակը և գերեզմանակրկիտք ։  
« Այլ ՚ի տունս ինչ գեղեցիկս պարծիցիս  
Բաղում թոշունք ևս ՚ի գեղեցիկ տունս  
ընակեն . մանաւանդ ճայք ևս առաւել  
պայծառագոյն քան զրո տունսն ունին բր-  
նակութիւնս : Այլ թերեւս ձայնիւ ինչ  
հագարտանայցես : Քան զփորն և զսիսակ  
և զասպուճակ շիցես ինչ ձայնիւ երբէք  
քաղցր և հեշտական մրմիննել : Այլ թերեւս  
պէսպէս արուեստիւք : Եւ ով որ յայնմ  
զմեղուօք զճարտարակօք անցանիցէ . որ  
զրօշող , որ նկարիչ , որ զետնափոր զտա-  
նիցի քան զնոսա իմաստուն , որ կարիցէ  
ճարտարութեան մեղուաց նմանել : Այլ  
թերեւս բարակ ինչ հանդերձիւք . այնու  
սարդք իսկ անցանեն զանցանեն զքեւ :  
Այլ թերեւս ոտիւք արագութեամբ . և այ-  
նու ևս անասունք զլեն , մանաւանդ նա-  
պաստակք և այծեմունք և այլ ևս անա-  
սունք՝ որ արագ իցեն ոտիւք : Այլ թե-  
րեւս ՚ի տար աշխարհ ինչ երթալուլ . և այ-  
նու թոշունքն անցանեն զքեւ : Մանաւանդ  
խորդք և ծիծառունքն՝ որ դիւրաւ հարկա-  
նեն զտարաշխարհական ճանապարհ . ոչ  
պաշար քառնան , և ոչ զրաստու կարօ-  
տանան , այլ ընդ ամենայնի բաւական են  
նոցա թերեն : Նորին և նաւ և զրաստ ինչ  
և կառք և հողմք , և ամենայն զինչ և իցէ ,

արագագոյն են քան դրեղ։ Այլ թերեւ  
քաջատեսաթեամբ ինչ հպարտանացեա,  
այլ ոչ ինչ նման ես այծեման և արծուոյ։  
Թերեւս դի արագ լսիցես։ այլ շիցես սուր  
ականջօք քան դէս։ Եւ թերեւս հոտ քաջ  
առնուցուս։ այլ շկարես անցանել զշամբը  
Եւ թերեւս դի դործունեայ և համբերողի-  
ցես։ այլ շես ձեռնհաս լինել անդադար  
իբրեւ զմբջիւն։ Եւ թերեւս դի ոսկի բազում  
յանձին ունիցիս։ այլ ոչ որպէս զհնդիկ  
մրջիւնն։

« իսկ առողջութեամբ յոյժ իսկ առաւել  
են քան զմեղ անասունք։ և անհազաւ-  
թեամբ ինչ շերկնչին յաղբասութենէ,  
շկասկածեն ՚ի կարօտութենէ։ Հայեցա-  
րուք, ասէ, ՚ի թռչունս երկնից, զի ոչ  
սերմանեն, և ոչ հնձեն, և ոչ ժողովին  
յրշտեմարանս։ թէ այսպէս իցեն, քան  
զմեղ՝ զանասունս լաւագոյն արար Աս-  
տուած։ Տեսանես, որշափ ինչ վեաս իցէ  
չըննելն։ տեսանես, որշափ ինչ շնորհէ  
մեղ իբացն քննութիւն։ որ քան զամե-  
նայն մարդիկ առաւել մեծամտէր, զտաւ  
և քան զանասունս ևս խոնարհագոյն։  
այլ խնայեսցուք ՚ի նա, և շնմանեսցուք  
նմա։ Ո՞ի, զի քան զբնութիւնս առաւել  
մեծամտեաց, իջուցանեմբ զնա յանասնոց  
աշտիճան, այլ կանդնեսցուք զնա անտի,  
ոչ վասն նորա, այլ վասն հասարակաց  
պատուոյ՝ զի նա արժանի էր այնպիսի ինչ  
կրելոյ ։

Նոյն ինքն զարձեալ զսուղ իմաստս  
զայս . հայեցեալ ՚ի կապանս Պաւղոսի  
զամենայն վիշտարստնմին օրինակի յանձն  
առցուք , ընդարձակէ այսպէս .

Եւ արդ մի տրտմեացուք ընդ նեղու-  
թիւնս ինչ , որ վասն Վրիստոսի իցեն . այլ  
յուշ լիցին մեզ և կապանքն Պաւղոսի , և  
նոյն եղիցի մեզ յորդորիչ . Եթէ խրատի-  
ցես զոմանս ազբատանալ վասն Վրիստո-  
սի , յուշ արասջիր նոցա գկապանսն Պաւ-  
ղոսի , և զանձն և զնոսա եղկելիս համա-  
րեսջիր , եթէ զմարմինս ևս ՚ի կապանս  
արկ վասն նորա , դու և ոչ կերակրելով  
զբաղցեալուինիս հաղորդ ուղղութեանցն  
Յուշ արա գկապանսն Պաւղոսի , թէ շկրե-  
ցեր ինչ այնպիսի չարչարանս , և շցան-  
կանայցես այնուհետեւ ընկերին : Յիշեա  
գկապանսն Պաւղոսի , և տեսջիր զի ան-  
պատեհութիւն է՝ նմա այնչափ ՚ի վիշտո  
կալ , և քեզ այդչափ մագիկանալ : Յան-  
կանայցես զրգութեան . զմտաւ ածջիր  
զբանան Պաւղոսի , զի նորին աշակերտ ևս  
և նորին զինուորակից , զիարդ ՚ի գէսլ իցէ  
զզինուորակիցն ՚ի կապանս տեսանել և  
զանձն ՚ի զրգութեան : Ա, եղութիւն ինչ ՚ի  
վերայ հասանիցէ , և կարծիցես եթէ թո-  
ղու ՚ի ձեռաց . առաջի աշացդ նկարեա  
գկապանսն Պաւղոսի , և տեսանիցես՝ թէ  
՚ի նեղութեան լինել չէ ՚ի ձեռաց թողլոց  
նշանակ : Եւ յորժամ ՚ի միտ անկանիցի  
կերպատ հանդերձ զգենուլ , յիշեսջիր զկա-

պանսն Պաւղոսի , և քան զկապերտան ա-  
պահարից անարդագոյն ևս թուեսցինքեզ,  
և կամ որ ընդ այլ զայռ ինչ թօթափեալ  
իցեն : Կամիցիս ոսկի զարդս կրել յան-  
ձին . դմտաւ ածջիր զկապանսն Պաւղոսի ,  
և քան զչուան ինչ հին շթուիցի քեզ լա-  
ւագոյն : Կամիցիս ծամս զործել և զեղե-  
ցիկ երեւել . նկարեսջիր զերկաթն Պաւղո-  
սի 'ի բանտին , և խանդաղատեսցին միոք  
քո յայն գեղ , և զքո պճնանսն զարշելի  
համարեսջիր , և զառնապէս հաշիցես հա-  
ռաշիցես նորա կապանացն :

Հ . Ասա ինձ արդ համառօտիւ որ ինչ  
յօրինակաց աստի պարտ իցէ 'ի միտ առ-  
նուլ .

— 'Կախ զայն իսկ , զի թէպէտ և զսուզ  
ինչ իմաստ օրէն է , ընդարձակել , մանա-  
ւանդ թէ ճարտարութիւնիսկ է , այլ զզու-  
չալի է յոյժ՝ չյաւելուլ յայն դուզնափեայ  
և շնչին հանդամանս , և մի այնպիսի ինչ  
որ չյանախոիցէ զզօրութիւն բանին :

Եւ երկրորդ զի զամենայն ազգո ազգս  
ձեսց , զորոց յառաջազոյն ասացոք , մարթ  
է 'ի կիր արկանել յընզլայնումն :

## ԴԱԱ Ե

Պարբերութիւն. — Ալտասանութիւն:

Հ. Զի՞նչ է պարբերութիւն.

— Պարբերութիւն է բան լրացեալ, զորքերականն վերջակիտիւ ուսուցանէ աւարտել :

Մեծադոյն մասունք նորա կոչին անդամիք, որ միջակիտիւ տրոհին. և փոքրադոյնք կոչին հատածք, որ ստորակիտիւ բաժանին. զոր օրինակ .

• Ոչ որ յուղի անկեալ, և բառնայ ինչ ընդիւր յաւելորդացն . այլ պարտ և պատշաճ է պնդակաղմ լինել, զի կարող լինիցի ընթանալ :

Եւ դարձեալ . • Զի թէ զվարս առաջնորդացն պարտէալ ինչ քննել, ապա և զձեռնադրութիւնն մեք պարտէալ տալ, և ամենայն ինչ վեր ՚ի վայր կործանէք, ոտքն ՚ի վեր և զլուխն ՚ի վայր . • Ոսկեք :

Հ. Բարւոր պարբերութեան քանի անդամիք պարտին լինել .

— Ոչ նուազ քան զերկուս, և ոչ աւելի քան զչորս . այլ բատ պատշաճի իմաստիցն մարթ է և բազմանդամ ևս յօրինել պարբերութիւնս, մանաւանդ ՚ի պերճ ասացուածս, և միանդամ ևս ՚ի վճիռ ասացուածս :

Օրինակ առաջնոյն յԱսկերերանէ .

« Յորժամ հաւ զառաջինն խօսիցի , ոչ որ  
պէս աստ 'ի տունս՝ խորդան ծառայք ,  
դուքք փակեալք , և ամենեքին նման մէ-  
ռելոց կան ծանրաբունք , և պահայոյզքն  
միայն զղանգակոն զանշեցուցանեն . չի  
անդ այսալիսի ինչ , այլ վաղվաղակի ամե-  
նեքին միանգամայն երկիւզիւ դրունն թօ-  
թափեալ , յառնեն կան առ հասարակ .  
յորժամ զլիսաւորն աղդ կամ ոտամբ կամ  
ձայնիւ առնիցէ , 'ի զղաստական պարսն  
յօրինեալք , զունդ առ զունդ կացու-  
ցեալք , ամենեքեան առ հասարակ զձեռս  
յերկինս համբարձեալ , զնուիրական օրէ-  
նութիւնսն երգեն միահամուռ » :

Օրինակ երկրորդին յաճախս ուրեք զտա-  
նի 'ի զիրս Առակաց .

« Ակիզըն իմաստութեան երկիւզ տեառն :  
Զիմաստութիւն և զլսրատ ամպարիչտք  
անգոսնեն : . . Որդի իմաստուն ուրախ  
առնէ դհայք . որդի անմիտ տրտմութիւն  
է մօր » :

Հ . Առ ինչ արոհմունքս այսորիկ պար-  
բերութեան իցեն կարևորք .

— Նախս առ 'ի պարդ իմացուած ճա-  
ռին , և երկրորդ առ 'ի բարւոր արտասա-  
նութիւն՝ որ յոյժ կարևորն է ճարտասա-  
նին : Գևմոսթենեայ երիցս հարցեալ , թէ  
զինչ կարևորագոյն իցէ ճարտարախոսի ,  
զնոյն երեքինեաց պատասխանի՝ թէ Ար-  
տասանութիւն :

Եւ արդ քանզի մի 'ի կարևորաց բարւոր

արտասահնութեան է ուրեք ուրեք հանցիստկամ դագարումն առնել ձայնի , նըմին իրի և բարւոք արոհմունք պարբերութեանց օգնեն առ այս :

Հ . Համառօտեա ինձ զօրէնս բարւոք արտասահնութեան .

— Նախ քան զամենայն պարտ է ճարտարախօսին կրթել զլեզու իւր ՚ի յստակ արտաբերութիւն , զամենայն զվանկս և տառս քաջ առողանելով :

Երկրորդ՝ ելեէջ առնել ձայնին ըստ ուլորակաց և ըստ իմաստից ճառին , և մի նմանաձայն զհարցականն և զարգելական կամ զսաստ և զաղերս արտասահնել , որ զի անկենդան կացուցանէ զճառն , և նիրհեցուցանէ զլսելիս :

Երրորդ՝ հանդարտութեամբ և ծանր արտասահնել ըստ պատշաճի անդամոց և հատուածոց պարբերութեան զհանդիստոն առնելով , և մի շտապել տղայօրէն և պարտասեցուցանել զլսելիս :

Չորրորդ՝ մի մուծանել եղանակ յարտասահնութիւնն՝ իրը նուագելով զճառն , որպէս ոչ սակաւք առնեն . որ տաղտկալի է և օտար ՚ի բնականէն :

Հինգերորդ՝ մի բարձրագոչ ճառատել , այլ մանաւանդ ՚ի սկզբան մեղմ և դաշն ձայնիւ յառաջաբանել՝ եթէ ոչ յանկարծական ինչ իմաստիւք սկսանիցի ճառն . և ապա տակաւ ըստ պատշաճի սաստկացուցանել զբարբառ :

Առ այս ամենայն օգնէ մեծապէս ընթեռնուլ՝ ի ձայն զճառս Ոսկեբերանին, և մանաւանդ ուսանել յորդորակս ինչ յայնցանէ ՚ի բերան, և արտասանել զայնոսիկ առ ՚ի կրթութիւն :

### ԴԱՍ ԻԱ.

#### Եարժուածք :

Հ. Համառօտենջիր ինձ և ղկանոնս շարժուածոց, որ զայդ ընդ քաջ արտասանութեան կարեւոր են .

— Եարժուածոց պարտ է յարմարել ընդ ձայն և ընդ կիրս արտասանողին. և է սա լեզու համբ, այլ ճարտարախօս. և բազում այն է՝ զի հզօրագոյն քան զբարբառ իսկ :

Երեելագոյն յանդամո է զլուխ. և զայն պարտ է ուզիղ ունել, և ըստ իմաստից ճառին շարժել ընդ ձեռս: Զոր օրինակ ՚ի մերժելն ինչ կամ հրաժարել յիմեքէ կամ ՚ի գարշիլ, պարտ է ՚ի ձգել զձեռս ընդ զէմ՝ դարձուցանել զզլուխն ՚ի բաց: Զիր ՚ի կրից՝ զոր ոչ ՚ի զէմս և յաշս մարթ իցէ արտասանողին յանդիման երեեցուցանել. նմին իրի պարտ է նմա ըստ իմաստից փոփոխել զայնոսիկ, մերթ սոլանական և մերթ աղերսական, մերթ արխուր և մերթ զուարթ, մերթ խորխստ և մերթ ցածուն երեեալ:

թայց թէպէտ և յաշս և 'ի դէմս տպաւորագոյն երեխցին կիրք հողւոյ, այլ ճարտար ևս են ձեռք 'ի բացատրել զիմաստու: Անջկատակացն 'ի թատերս նախնեաց խաղք, որք զտեսողս շարժէին յարտասուս, բաւականք են 'ի ցուցանել դճարտարիսոսութիւն ձեռաց:

Արդ 'ի շարժուածս ձեռաց՝ զաջ ձեռն 'ի ձախմէ յաջ տանելի է, սկսեալ 'ի հանդիպոյ կրծոց: Զմատունս ձեռաց պարտ է արձակ և 'ի բաց ունել, և զբազուկն պարզեալ. մի զարմուկն 'ի վեր քան զուս ամբառնալ, և մի հաւասար բարձրութեան ուսոց. մեկուսի յանձնէ ունել զայն, և զրեթէ միշտնովաւ սկսանել զշարժուածս:

Ծստ այսմ և զահեակ ձեռն յաջմէ 'ի ձախ կոյս ածելի է, և ոչ երբէք զձախն միայնակ շարժել, այլ միշտ աջակից:

Պարտ է ընդ աւարտ պարբերութեանց աւարտել զշարժմունս ձեռաց, և ապա թողուլ անկանել ընականապէս 'ի վերայ ամբիոնին՝ եթէ յամբիոնի որ բանախօսէ, և մի երբէք 'ի ներքս կամ արտաքս արկանել զձեռն: Իսկ եթէ յոտին կացեալ բանախօսիցէ ոք, պարտ է յաւարտ պարբերութեանց թողուլ երկուստեք զձեռս 'ի կախ. իսկ եթէ բաղմեալ յաթոռ, արկանել զձեռս 'ի վերայ ծնդաց:

Բաղում աղզի աղզի ձեք են շարժուածոց, զորս սովորութեամբ և կրթութեամբ մարթէ ուսանել:

Առ ՚ի ցուցանել զբարձրութիւն, պարտէ դարձուցանել փոքր մի զգլուխ առ ՚ի կողմն, և ամբառնալ զաշս ՚ի վեր՝ առանց ամբառնալոյ զգլուխն, և զերկոսին զձեռս միանգամայն ՚ի միւս կողմն առ ՚ի ստորմեկուսի յանձնէ երկայնել, զերեսս ձեռաց դարձուցեալ առ ունկնդիրս :

Խսկ ընդ հակառակն առ ՚ի ցուցանել զխորութիւն, պարտէ խոնարհեցուցանել աստի զաշս յերկիր, և անտի ամբառնալ զձեռս ՚ի վեր՝ զարտաքոյս նոցա ցուցանելով ունկնդրաց :

Առ ՚ի ցուցանել զտարածութիւն, պարտէ զերկոսին զձեռս ՚ի հանգիսոյ կրծոց յաջ և յահեակ ածել շուրջանակի զայդ ընդ աչս :

Առ ՚ի ցուցանել զերկայնութիւն, պարտէ զերկոսին զբաղուկս միանգամայն ՚ի մի կոյս երկայնել ուղղակի զձեռս ընդ արմկունս ունելով, և զափ ՚ի խոնարհ :

Ըստ այսմ օրինակի պարտէ և զայլ ձես զիտել և ուսանել ՚ի քաջակիրթ և ՚ի բարեձե ընաւորելոց անձանց . և զայն ևս զիտել, զի ոչ ամենայն շարժմունք և ձեք ամենեցուն ՚ի ճահ դան : Եւ դարձեալ մի անդէն ՚ի սկզբան ճառին սկսանել և զշարժուածս, այլ տակաւ . և միշտ իսկ հանդարտութեամբ առնել զշարժմունս :

Այլ կարեւորագոյն և ընդհանուր կանոն և ճայնի և շարժուածոց այն է՝ ընականին հետեւել, յորում է կատարումն ա-

բուեստին . զի պարտ է սմա ըստ օրինակի նկարչաց գեղեցկացուցանել զբնականն , այլ մի երբեք օտարանալ 'ի բնութենէ :

## ԴԱՍ ԻՐ

Ո՞Շ վաեմ:

Հ . ԶԵՆԸ Է ոճն .

— Կերպարան բանից ըստ խմաստից ճառին յարմարեալ : Արդ թէպէտ և բազում աղջի աղջի կերպարանից բանից են , ոչ միայն ըստ զանազանութեան շարագրածոց՝ այլ և ըստ հանգամանաց բարուց շարագրողացն զանազանեալ , այլ հաւատորք առ հեշտի ուսանողաց երիս աղջունոյ զլիսաւորս զանազանեն , վսեմ , պարզ և բարեխառն :

Հ . Ո՞Ր Է ՎԱԵՄՆ .

— Յորում ճարտարախօսն 'ի կիր արկանէ աղնուազոյն մտածութիւնս , ողերճագոյն ասացուածս , քաջայանդուզն ձես , և սաստկագոյն յոյզս կրից :

Այսպէս խմաստունն նկարագրէ զԱՀարոն , յորժամ եկաց նա ընդ մէջ մեռելոց և կենդանեաց՝ զիջուցանել զցասումն տեսան 'ի կոտորել նորա զժողովուրդն . « Փութացեալ այրն անարատ , մատեաւ յասաց 'ի կոխ իւրով պաշտաման զինուն , աղօթիւք և խնկօք ուղերձեալ զբաւու-

թիւնն . Եկաց ընդդէմ բարկութեանն , և  
արար վախճան հարուածոցն , յայտ արա-  
րեալ թէ քո ծառայ է : Յաղթեաց բա-  
ղում ամբոխի , ոչ զօրութեամբ մարմնոյ ,  
և ոչ զինուց ազգեցութեամբ , այլ բանիւ  
զտանջիչն հնապանդեաց : Զերդմունս և ըդ-  
դաշինս հարցն յիշատակեալ , զշեղջաշեղջ-  
դիականցն անկելոց առ միմեանս , կա-  
ցեալ 'ի մէջ , դադարեցոյց զբարկութիւն .  
Եհերձ ճանապարհ ընդ մէջ կենդանեաց  
և մեռելոց : Քանդի 'ի պճզնաւոր հանդեր-  
ձին էր ամենայն զարդն , և փառք հարցն  
'ի չորեքրկարգեան ականսն քանդակեալս ,  
և մեծութիւն քո թագ 'ի զլուխ նորա-  
նայնց խորշեցաւ սատակիչն , և 'ի նոցունց  
զարհուրեցաւ » :

Այսպէս և յորժամնկարագրէ զարաշտ-  
պանել Աստուծոյ զարդարս .

« Յայց արդարք յաւիտեան կեցցեն , և 'ի  
տեառնէ վարձք նոցա , և խնամք նոցա 'ի  
Բարձրելոյն . . . Զի աջով իւրով հովանի  
լիցի նոցա : Առցէ սպառազինութիւն զնա-  
խանձ իւր , և վառեսցէ զարարածս առ 'ի  
խնդրելոյ զվրէժս 'ի թշնամեաց : Զգեցցի  
զրահս զարդարութիւն , և զիցէ սազա-  
ւարտ զգատաստանն անաչառ : Առցէ վա-  
հան զարբութիւն անվկանդ , և սրեսցէ  
զհատու բարկութիւնն 'ի սուսեր . և պա-  
տերագմեսցի խառն ընդ նմա և աշխարհս  
առ անզգամս : Գնասցեն նեաք կորովիլլիք

փայլատականց . և իրրեւ 'ի լայնալիճ աղեզանէ յամպոցն ոստիցեն 'ի նպատակս , և 'ի բարընկէց բարկութենէ թափեսցի լիովկարկուտ : Զայրագնեսցի 'ի վերայ նոցաջուր ծովու , և դեսք ողողեսցեն անխնայի դիմի հարցի նոցա հողմին բռնութեան , և իրրեւ զմրբիկ հոսեսցէ զնոսա : Աւերեսցէ զամենայն երկիր անօրէնութիւն , և խարդախութիւն կործանեսցէ զաթոռս բռնաւորաց :

Այսպէս և Յորայն ստորագրութիւն երիվարին .

\* Որոտայ 'ի դաշտի և դամբր հատանէ , և լանէ 'ի դաշտ զօրութեամբ . 'ի պատահել նետից՝ արհամարհէ , և ոչ դարձցի յերկաթոյ : Ի վերայ նորա շողան աղեղն և սուսեր , և շարժիւն վահանի և նիզակի . և բարկութեամբ ապականէ զերկիր : Եւ ոչ հաւատայ մինչեւ փող հարկանիցի . և իրրեւ փող հարկանի , նա վաշ վաշ կարդայ . 'ի հեռաստանէ առնու զհոտ պատերազմի , վազս առնելով և փոնչելով :

Բատ սմին օրինակի և Եսայի զսատակումին թագաւորին բարելացւոց նկարագրէ .

\* Եւ եղիցի յաւուր յայնմիկ հանգուսցէ զքեզ տէր 'ի ցաւոց և 'ի սրտմտութենէ քումմէ , և 'ի ծառայութենէ խոտութեան զոր ծառայեցեր նոցա : Եւ առցես զօղբազայ 'ի վերայ թագաւորին բարելացւոց , և ասասցես յաւուր յայնմիկ . զիարդ դա-

գարեալ կայ պահանջօղն, հանգեաւ տագ-  
նապողն, զի խորտակեաց տէր զլուծ մե-  
ղաւորացն, զլուծ իշխանաց : . . Հանգեաւ  
յուսով երկիր ամենայն և գոչէ ուրախու-  
թեամբ . և փայտքն Լիրանանու ոտնչար  
եղեն քեզ, և մայրքն Լիրանանու ասեն,  
թէ յորմէ հետէ դու դադարեցեր, ոչ ելին  
՚ի մեզ փայտահարք : Դժոխք ՚ի ներբուստ  
դառնացան ՚ի պատահելն քեզ . կանգնե-  
ցան միանգամայն հսկայքն ամենայն որ  
լեալ էին իշխանք երկրի, որ յարուցին  
յաթոռոց իւրեանց զամենայն թագաւորս  
աղզաց : Ամեներեան պատասխանի տա-  
ցեն քեզ և ասասցեն . և դու իրրե զմեզ  
ըմբռնեցար, և ընդ մեզ համարեցար . ի-  
՞ին ՚ի դժոխս փառք քո և բազում ուրա-  
խութիւնն քո :

### ԴԱՍ ԻԳ

ՈՇ պարզ, և բարեխառն :

Հ. ՈՇ է պարզ ոճն .

— Յորում ճարտարախօսն դիւրիմաց  
բանիք և ընտիր ասացուածովք զարդս  
բնականո ՚ի կիր առնու, զոր Որատիոս  
ինքնազարդ կոչէ զոճն զայն . որպէս բա-  
զում ուրեք ՚ի պատմութեանն Եղիշէի և  
մանաւանդ ՚ի յառաջաբանսն է տեսանել.  
զոր օրինակ .

։ Թէ պէտ և ոչ իցեմք բաւական ասել զա-

մենայն չարիսն՝ որ անցին անդէն 'ի կարաւանին ընդ գունդն Հայոց, սակայն և ոչ լոել կամիսք ծածկելով զվիշտո նեղութեանն. այլ ասասցուք փոքր 'ի շատէ, զի ձայնակիցք լիցուք այնոցիկ՝ որք դառնապէս զմեղ ողբային: Զի և դու իբրև լոիցես, ոչ սակաւ արտասուս հեղուցուս 'ի վերայ աղգին թշուառութեան»:

« Մինչև ցայսվայր ոչ ինչ կարի զանգիտէի ոլատմել զհարուածս աղգիս մերոյ, որ յարտաքին թշնամեացն ճշմարտութեան չարաչար յարեան 'ի վերայ մեր. որք սակաւագոյնք հարին զմեղ, և յոլովագոյնք հարեալ գտան 'ի մէնջ, քանզի դեռ ևս միաբանք և հաւասարք էաք: Թէսլէտ և ումանք 'ի ծածուկ ունեին զերկմուութիւն նենդութեանն, սակայն յաչս արտաքնոցն ահաւոր երեւէք միաբանութիւնն: . . . Այդ յայսմէնտէ և անդր, ուր սոլրդեալ անկանի երկպառակութիւն 'ի ներքս, ընդ քակել միաբանութեանն և երկնաւոր առաքինութիւնն հեռանայ. և անձնընտիրք լինելով, յօյժ բաղմանայ լալումն ողբոյս »:

« Մեծ է սէրն Աստուծոյ քան զամենայն մեծութիւն երկրաւոր. և այնպէս աներկիւզս առնէ զմարդիկ, իբրև զանմարմին զօրս հրեշտակաց. որպէս անդստին 'ի սկզբանէ է տեսանել զբաղումս բազում անգամ 'ի բազում տեղիս: Մարդիկ՝ որ սիրովն Աստուծոյ իբրև զինու վառեալք էին, ոչ ինչ խնայեցին զանգիտելով ի-

բրեւ զանարի՝ զոլով վատասիրտք կամ 'ի  
մահ անձանց , կամ յափշտակութիւն ըն-  
չից , կամ 'ի խողխողումն սիրելեաց , կամ  
'ի գերութիւն ընտանեաց , ելանել 'ի հայ-  
րենի երկրէն և անկանել 'ի ստրկութիւն  
յօտարութեան . առ ոչինչ համարեցան  
զայս ամենայն անցս չարչարանաց . այլ  
միայն միարան կալ ընդ Աստուծոյ , զի 'ի  
նմանէ միայն մի գերի ելցեն » :

Հանդոյն իմն ոճով և Շնորհալին բա-  
զում ուրեք 'ի թուղթսն վարի . զոր օրի-  
նակ .

« Զարթեաք որպէս 'ի քնոյ զուարթարար  
բանիւք՝ որ 'ի սուրբ թագաւորութենէդ .  
որով պատառեցաւ քուրծ սգոյ առ 'ի  
մէնջ , և զգեցաք զուրախութիւն ըստ զո-  
հարանութեան սուրբ մարգարէին՝ որ յա-  
զագս Աստուծոյ : Վանդի ծանոյց մեզ զո-  
րութիւն բանիս , ոչ միայն անուանակցու-  
թեան ճշմարտին էմմանուէլի արժանաւո-  
րել ձեղ , այնմ՝ որ հարիւրոցն ոչխարաց  
և զրամոցն տասանց էջ 'ի խնդիր նուա-  
զութեանցն լրման : . . . Վանդի զցանկ օրի-  
նացն՝ զոր խրամատեաց թշնամին , և  
զուռսն հաւատոյ՝ զոր քանդեաց կինձն  
վայրենի 'ի ճշմարիտ որթոյն , փութալ  
խրամակարկատ լինել , և առ նոյն պա-  
տուաստել վերստին , և այսմ բարւոյ գոր-  
ծակից լինել զմերս տկարութիւն հրամա-  
յեալ էք եղորն իմոյ առաքել 'ի սուրբ  
թագաւորութենէդ » :

Հ. Ո՞ր է բարեխառն ոճն .

— Որ ոչ զարդին ունի փափկութիւն ,  
ոչ զվաեմին շանթիչ զօրութիւն , այլ հա-  
զորդի երկաքանչիւրոցն . որպիսիք են  
բազմազոյնք 'ի ճառից Ասկերերանին . զոր  
օրինակ .

« Աղէ ասա , 'ի պէտս բնակութեան սիւնք  
բազումք և խոյակըն ախաւեղագէսք , և  
աղզի աղզի գիմակք պատկերացն , և ոսկի  
խառնեալ ընդ նկարս որմոյն , և այլ ես  
համապայծառ գունակք երանդոցն , և աղ-  
զի աղզի գեղքն ընդ միմեանս 'ի ճամուկսն  
մտեալ , զի՞նչ օգուտ իցէ , այլ հպարտու-  
թեան և պարձանաց և յօրանալոյ պատ-  
ճառք են և աւելորդ անմտութեան : Ամե-  
նայն ուրեք կարեռորաց պէտք են՝ որով  
կարօտ իցեմք , և զպէտսն վճարիցեմք :  
Տեսանեն , զի վեաս է և ոչ օգուտ , և ա-  
ւելորդ և անշահ . զի թէ աւելի պէտս ինչ  
չտացցէ , և ոչ վայելչութիւն երեսաց :  
Քանդի յորժամ ժամանակ 'ի վերաց ան-  
ցանիցէ , յագի ակն , և շթուի ինչ վայե-  
լուչ , և չտայ զայն իմանալ սնապարծու-  
թիւնն : Պաւզոս և զոր շահն կարծէր , զայն  
վեաս համարէր վասն Վրիստոսի : Մինչե-  
ցերք ընդ երկիք բեկեռիմք , մինչեւ ցերք  
չնայիցիմք ընդ երկինս : Զտեսանիցէք ըդ-  
ծերացեալսն , զիարդ և ոչ զմիոյ ինչ զա-  
խորժելոցն յիշեն . շտեսանիցէք զվախճա-  
նեալսն , զոմանս 'ի ծերութեան , զոմանս  
'ի մանկութեան . շտեսանիցէք զբաղումս

իսկ կենդանւոյն զրկեալս յընչիցն . զի՞ այն չափ ծնզիցիմք ընդ չկայսս և չմնալիս . ընդէր այդչափ կապեալ իցեմք ընդ վետ սակարսս . մինչև ցերք ոչ հարկանիցեմք բուռն զկայիցն և զմնացելոց » :

Առօին ոճով և կղիշէ վարդապետ նկարագրէ զերանելի կանայս սուրբ նախարարացն նահատակելոց .

« Բազում ձմերաց հալեցան սառնամանիք . Եհաս գարուն , և եկին նորեկ ծիծունք . տեսին և խնդացին կենցաղասէր մարդիկ , և նորա ոչ երբէք կարացին տեսանել զանձկալիսն իւրեանց : Ծաղիկք գարնանայինք յիշատակեցին զպսակասէր ամուսինս նոցա , և աչք իւրեանց կարտացան տեսանել զցանկալի գեղ երեսաց նոցա : Աղառեցան բարակք որսականք , և խցեալ կուրացան արշաւանք որտորդաց : Բնագրօք յիշատակեցան նորա , և ոչ մի տօնք տարեկանաց ոչ ածին զնոսա 'ի հեռաստանէ : Ի ճաշտեզս նոցա հայեցան , և արտասուեցին . և յամենայն ատեանս յիշեցին զանուանս նոցա : Բազում արձանք կանզնեալ էին յանուն նոցա , և անուանք իւրաքանչիւր նշանակեալ 'ի նոսա : Եւ իրրե այնպէս յամենայն կողմանց ալէկոծ լինէին միտք նոցա , ոչ ինչ կասեալ թուլացան յերկնաւոր առարինութենէն : Արտաքնոցն երեկին իրրե այրիք սպաւորք և չարչարեալք , և յողիս իւրեանց զարդարեալք և մխիթարեալք եր-

կնաւոր սիրովն : Ոչ ևս սովորեցին հարցանել զեկեալ որ 'ի հեռաստանէ , եթէ երբ լինիցի մեղ տեսանել զսիրելիսն մեր . այլ այն էին իդձք ազօթից նոցա առ Աստուած , եթէ որպէս սկսանն՝ քաջութեամբ 'ի նմին կատարեացին լի երկնաւոր սիրովն :

Դարձեալ նոյն ինքն 'ի յառաջարան երկրորդ գրոցն .

« Որոց ոզիքն թուլացեալ են յերկնաւոր առաքինութենէն , յոյժ ընդ ահիւ անկեալ է բնութիւն մարմնոյ . յամենայն հողմոյ շարժի , յամենայն քանէ խռովի , և յամենայն իրաց գողայ . երազագէտ է այնպիսին 'ի կեանս իւրում , և յանզիւտ կորուստն յուղարկի 'ի մահուան իւրում : Որպէս և ասաց ոմն 'ի հնումն . Մահ ոչ իմացեալ՝ մահ է . մահ իմացեալ անմահութիւն է . որ զմահ ոչ զիտէ , երկնչի 'ի մահուանէ . իսկ որ զիտէ զմահ ոչ երկնչի 'ի մահուանէ . և այս ամենայն շարիք մտանեն 'ի միտս մարդոյ յանուսումնութենէ : Կոյր զրկի 'ի ճառագայթից արեգական , և ազդիտութիւն զրկի 'ի կատարեալ կենաց . լաւ է կոյր աչօք քան կոյր մտօք , որպէս մեծ է հոգի քան զմարմին , այսպէս մեծ է տեսաւորութիւն մտաց քան զմարմնոց :

ԴԱՅ ԽԴ

Վանաբարութիւնք ոճոյ :

Հ. Ո՞ր յերից ասամի կերպարանաց քանի ընտրելագոյն իցել .

— Երերեան խոկ գովիլիք են , այլ վսեմն զերագոյն քան զայլս . և սրարտ է ձարտասանին բոտ իմաստից ճառին զերեան ես 'ի կիր արկանել . քանդի սրարտութեամբ երեցունցս այսոցիկ յարդարի ճարտարախօս կատարեալ :

Այլ գժուարին է յոյժ այսոցիկ յումեք 'ի միասին պատահել , և յոյժ դիւրին երեքումբիքն խոկ զեղծանել , զպարզութիւն փոխեալ 'ի զծուաթիւն , զզարդ 'ի աշրանս և յարտեստակութիւն , և զվաեմութիւն 'ի ճռում ճամարտակութիւն :

Հ. Բովանդակեա ինձ որ ինչ այլ ևս զիտելիք իցեն զոճոյ .

— Բաց յերից ճարտասանական կերպարանաց ասացուածոյ , են և ուսումնականն , և ընիկ սրատմականն , և բակոնական՝ որ յարձանագիրս և այլ ուրեք ուրեք վարի : Ասքա օտար յամենայն զարդուց՝ զկարեւորն ևեթ բացատրեն :

Օրինակ ուսումնականին յաճախ ուրեք գտանի 'ի զիրս Եզնեայ . զոր օրինակ .

« Յորժամ անիւ շրջանակիցի , և մրջիւն մի 'ի խեցին զնայցէ յարեմտից կողմանեւ :

ընդ արեւելս, վասն անուին արագագոյն ընդ արեւմտից կողմն շրջելոյ թուի թէ, մըրջիւնն յարեւելից յարեւմուտս կոյս ընթանայցէ, որոչ յարեւելից յարեւմուտս կողմն գնայցէ, այլ յարեւմտից յարեւելս, և անիւն ստէպ շրջելովն այնպէս երեւեցուցանէ :

Եւ օդ ընդ ջուրս և ընդ երկիր խառն է, և զի ընդ ջուրս օդ խառն է, 'ի զեռնոցն յայտ է՝ որ 'ի ջուրս զօդոյն կենդանութիւնն ձձեն։ Եւ զի ընդ երկիր նոյն օդ խառն է, յորժամ անձրեւ լեռլ իցէ, և արեւտայցէ, 'ի գոլորշոյն՝ որ 'ի սրտէ երկիրին 'ի վեր ցոլանայ՝ յայտ յանդիման երեխ, Եւ զի ընդ օդս հուր խառն է, 'ի փայլատականցն՝ որ 'ի շփելոյ ընդ միմեանս հողմոյն և ամպոց արձակին՝ յայտ յանդիման ցուցանին։ Եւ դարձեալ, թէ յապակի սպիտակ ջուր արկեալ՝ յարեւու ունիցիս, լուսաւորութեան արեւուն մտեալ ընդ սպիտակութիւն ապակւոյն, և ընդ յատակութիւն ջրոյն օդով թափանցանց անցեալ, հուր ծնուցանէ :

Յօրինակ պատմականին շատ խոկ են պատմութիւնք սուրբ գրոց, և մանաւանդ աւետարանին Դուկայ և գործոց առափելոց, որոց յառաջարանքն զեղեցիկը են յոյժ, ամենեին անզարդ բացարութեամբն .

Վանզի բազումք յօժարեցան վերստին կարգել զօդատմութիւնն վասն իրացն հաս-

տատելոց 'ի մեզ, որպէս աւանդեցին մեզ  
որ 'ի սկզբանէ ականատես և սպասառք  
եղեն բանին, կամ եղեւ և ինձ, որ 'ի  
սկզբանէ դհետ երթեալ էի ամենայնի ճշ-  
մարտութեամբ, կարգաւ գրել քեզ, քաջ-  
թէոփիլէ, դի ծանիցես դրանիցն՝ որոց ա-  
շակերտեցար՝ զնշմարտութիւն» :

Այսպէս և նախադրութիւնք սուրբ  
գրոց գեղեցիկը ևն յոյժ. Համառօտ և ա-  
ռանց աւելլորդաց զարատճառս և դհանգա-  
մանս գրոց իւրաքանչիւր բացատրելով:  
Օրինակ իմն նախադրութիւն իմաստու-  
թեանն.

« Բազում գիրս երևեցուցանեն գոլ Առղո-  
մոնի՝ առացեալքն զնմանէ երիս հազար  
առակս, և հինգ հազար օրհնութիւնս. զոր  
կէսք յԱռակսն և յԵրգերզոցն իմանան,  
և այլք՝ թէ չէ բովանդակն 'ի միջի: Արդ  
զկարծիս զայս կալցի որ որպէս և ախոր-  
ժէ: Այլ առ այս զիրք՝ ումանք կարծեօք  
վարեցան, իրը թէ չէ նորա. բայց բա-  
զում քննութեամբ ստուգեցաւ նորա գոլ,  
և ընդ առաջին գիրսն հարազատ, որպէս  
տիսք բանիցն և զօրութիւն իմաստիցն  
յայտնէ, հաւասարազօր գոլով առաջնոց  
զրեանց, թէ և սուզ ինչ դանազանի, որ-  
պէս ժողովողն յԱռակացն, և Երգեր-  
զոցն յԵրկոցունց. որով մեծ հարստու-  
թիւնն նորա յիմաստս և 'ի բանս ցուցա-  
նի: Այսպէս և այս զիրք առատազոյն  
բանիւ խրատէ զլսողսն՝ սիրել զարգարու-

թիւն՝ որով կարասցեն ընդունել զառարր չողին. և փախչել 'ի կորուսիչ խորհրդոց ամսաբարշտաց, որք թէպէտ ժամանակօք և ծննդովք բազմանան, փուտք են և զաղփաղփունք: Եւ զի վայելեսցեն արդարք զանձառ բարութիւնս. որ թէպէտ և անդաւակը կամ կարճակեացք, այլ անմահութեան յուսով հաստատեալք, և թէ 'ի պատուհասիլ անզգամացն՝ նորամեծապէս փառաւորեսցին: Խրատէ զթագաւորս՝ և որք վերնոյ թազին փափաքեն՝ պատուել զիմաստութիւն, որով յափտեան թազաւորեսցեն. և հաստատէ ըդբանն բազում վկայիւք, ինքեամբ և այլովք՝ որք պատուեցին զիմաստութիւն և փառաւորեցան, և այլովք՝ որ վարեցան անզգամութեամբ և պատուհասեցան:

Հ. Ո՞ր իցէ լակոնական ոճն.

— Ամենեին հակիրճն և սուր: Եւ կալաւ սա զանունն 'ի լակոնացւոց անտի, որ են սպարտացիք. քանզի սոցա կարի ախորժական էր ոճս այս, և ատելի յոյժպերճախօսութիւն: Որով առ բազում ըսպառնալիս թշնամեաց ետուն պատասխանի միով յունական վանկիւ՝ որ նշանակէ Եթէ. իբր ասել, Եթէ կարող իցէք: Այնովէս և առ սպառնալիս Փիլիպալեայ արքային մակեդոնացւոց ետուն պատասխանի. «Դիոնեսիս 'ի կորնթոս»: իբր ասել. Յիշեա զԴիոնեսիս՝ որ բռնակալելն ջանայր որպէս զքեզ, և այժմ տարազիր

՚ի թագաւորութենէ պանդխատի ՚ի կորնթոս :

Որդ ոճս այս կարի յարմար է և կարեւոր արձանագրի . այսպիսի էր արձանագիր բազնին յԱթէնս , « Անծանօթի Աստուծոյ » . յայտ առնելով զի բազինն այն նըւիրեաւ էր ՚ի ժողովրդենէն աթենացւոց աստուծոյ ումենին՝ որ անծանօթ էր նոցա :

Որպիսի էր և արձանագիր աշտարակին Փարոսի յԵզիպտոս .

« Աստրատ կնիդացի , Դեքսիփանեայ որդի , զիցն պահպանաց վասն նաւորդաց : Զի խորամանկ ճարտարապետին , հրամանաւ Պտղոմեայ Եղբայրասիրի զշինուածն զայն կանգնեալ , ուր լապտեր ՚ի բարձու լուսատու նաւաց եկաւորաց վառէր , խարդախութեամբ զիւրն ՚ի նմա զրոշմեաց զանուն . իրր թէ ինքն Աստրատ կնիդացի , որ էր որդի Դեքսիփանեայ , նուիրէր զայն զիցն խնամակալուաց նաւելոցն ընդ ծով , զի ՚ի լոյս լապտերին զիւրութեամբ մոցեն նաւորդը ՚ի նաւահանգիստ անդր՝ ՚ի զիշերի :

Այսպէս և ՚ի վաղեմի ուրեմն շիրմի տղայոյ ուրուք մանկան , զոր մայրն կանգնէ վաղամեռիկ որդեկին , գտանի զրոշմեալ արձանագիրս այս . « Զոր զու ինձ պարտէիրն , ընկալ ՚ի մօրէս » :

Այնպէս զեղեցիկ է ոճս այս յարձանագիրս , զի ազգու ևս է յոյժ քան զարձանագիրս քերթողականս ճոխս յօրինեալս չափու :

## ԴԱԱ ԻԵ

Կըթութիւն ոճոյ:

Հ. Ո՞րպէս մարթ իցէ ստանալ ոճ վայեւմուշ:

— Եախ քան զամենայն պարտ է 'ի շարագրելն քաջ խորհել և 'ի միտ առնուլ՝ որ ինչ առաջի կայ ասել. զի եթէ ոչ կարգու և բացայաց ՚ի միտան որ ունիցի զիմաստ, անհնարին է թէ բարւոր բացարեսցէ զայնս:

Երկրորդ՝ կրթել զանձն ՚ի գրութիւն, և այն հանդարտութեամբ և ոչ շտապաւ և վեր 'ի վերոյ. և մանաւանդ ՚ի սկզբան անդ վարժից. զի ապա հանդարտութեամբ և ուշով մարթի զհնարաւորն ստանալ շարագրութիւն:

Երրորդ՝ յետ ժամանակի առնուլ դշարագրեամբ ՚ի քննութիւն, և զթերութիւնս նորա հետազոտել. յղկել զայն և կոկել և զաւելորդս ՚ի նմանէ յապաւել:

Չորրորդ՝ վերծանել մտադրութեամբ ըդքաջ մատենազիրս, և քննել զոն նոցա և զեզանակ բացատրութեանցն. օրինակել հատուածս ինչ ՚ի նոցանէ, կամ ուսանել ՚ի բերան:

Հինգերորդ՝ ՚ի միտ առնուլ զիմաստս հատուածոց ինչ յընտիր մատենազրաց, և շարագրեալ զայն ՚ի մոտաց՝ բաղդատել ապա ընդ ընտագրին:

Վեցերորդ՝ ըստ իմաստից իւրաքանչիւր զեղանակ բանին յարմարել. զի չէ վայելուչ քերթողաբար յօրինել դբանսն՝ ուր ճշգրտաբանութեան փաստից պէտք իցեն կամ պարզ պատմութեան:

Եօթներորդ՝ ընթեռնուլ դդիրս քննաբանից և հոետորաց վարժապետաց արուեստին, և 'ի միտ առնուլ զկանոնս ճարտասանութեան աւանդեալս 'ի նոցանէ, զթերութիւնս՝ յորոց պարտ է զգոյշինել:

Հ. Իցէ և այլ ինչ հնար կրթելոյ և յարդարելոյ զո՞ն.

— Ե իսկ, բայց լեզուագիտաց և թահալ: Քանզի սոցա դիւրագոյն յոյժ մարթէ կրթել զո՞ն խրեանց՝ պարապելով 'ի թարգմանութիւն ընտիր մատենագրաց, պահելով ըստ կարի զծզութիւն՝ առանց ստնանելոյ յատկութեանց բնիկ բարբառոյն: Զի այլ են քերականական կանոնք և յատկութիւն լեզուաց իւրաքանչիւր, և այլ եղանակ ասացուածոց նոցա և իւրաքանչիւր ուրուք 'ի մատենագրաց:

Այդ պարտ է թարգմանչին դքերականական կանոնս նոցա և զյատկութիւնս փոխել յիւրն, այլ ոչ զեղանակ բացատրութեանց նոցա. ապա թէ ոչ, միօրինակ ընդ զրչաւ նորա խօսեսցին մատենագիրը ամենայն, ընտիրն և հետեւակ. և ոչ ևս այնուհետեւ մատենագիրն, այլ թարգմանիչն իցէ՝ որ խօսիցի: Թարգմա-

նութիւն այսպիսի սակաւ կամ ոչ ինչ օդ-  
նէ ՚ի կրթել զոճ , ոչ միայն զընթերցողաց ,  
այլ և զթարդմանչին : Իսկ որ ճզնի ոչ ինչ  
աւելի կամ պակաս ասել քան զբնազիրն ,  
և սեփականէ իւր զտիպս կերպարանաց  
բանից նորա , այնպէս կրթի ոճ իւր , զի և  
՚ի զրելն յանձնէ՝ հանգոյն նմին յօրինէ  
զեղանակ ասացուածոցն , և ընտիր զբա-  
ցատրութիւնսն : Իսկ քերականական ոճ  
նորա ընտիր ևս յօրինի . զի որ հանդերձ  
կապանօք թարգմանութեան պահէ զոճ և  
զյատկութիւնսընիկ բարբառոյն , յորժամ  
ազատ ՚ի կապանաց անտի իցէ , յայտ է  
զի ընտիր ևս հայկաբանէ :

Հ . Եւ որպէս մարթ իցէ վարժել ՚ի քաջ  
թարգմանութիւն .

— Յորմէ լեզուէ թարգմանել ինչ ոք և  
կամիցի , պարտ է նմա ընդ ընազիրս այնր  
լեզուի բաղդատել զընտիր թարգմանու-  
թիւնս : Եւ քանդի թարգմանութիւնք նախ-  
նեաց մերոց ՚ի հին լեզուս և եթ ամփոփին ,  
առ ՚ի վարժս թարգմանութեան արդի լե-  
զուաց հարկ է դարձեալ ՚ի սուրբ զիրս  
զիմել : Զի որովհետեւ առաւելազոյն ՚ի նո-  
սա պահի ճշգութիւն , և երկարանչիր  
թարգմանութիւնք , մերն և այլոց , յար և  
նման են ընազրին , որով և ընդ իրեարս  
գտանին համեմատք , որ բաղդատէն զնոսա  
տեսանէ զինչ մասնկունս և բառս իտա-  
լացին կամ գաղղիացին և այլն , յաւելու  
առ ՚ի պահել զյատկութիւնս լեզուի իւ-

րոյ, և թէ որ ոճ նոցա որում՚ի մերոց համեմատիցի: Ոզտակարազոյն ևս լիցի բաղդատութիւնս այս, ևթէ, ընտրեացին և ՚ի սուրբ գրոց ընտրելագոյն մատենազրեալքն, որպէս Գործք առաքելոցն, առետարանն Պուկայ, իմաստութեան զիրքն և Յուղիթայ և այլն:

Հ. Որպէս մարթիցէ ստանալ զյիշողութիւն, և ուսանել ինչ դիւրաւ ՚ի բերան.

— Որպէս ամենայն զօրութիւնք մտաց վարժիք և կրթութեամբ առաւելուն, այսպէս և յիշողութիւնն. նմին իրիոչ է պարաթողուլ երրէք անգործ զյիշողականն զօրութիւն, այլ ստէալ ուսանել ՚ի բերան զհատուածս ինչ ճառից կամ քերթուածոց զեղեցիկս, և ստէալ արտասանել զայնս:

Երկրորդ՝ նախ քան զուսանելն ինչ ՚ի բերան քննել զմասունս նորա, և ՚ի միտ առնուլ զիմաստոս:

Երրորդ՝ եթէ երկայն ինչ իցէ, բաժանել զայն ՚ի մասունս:

Չորրորդ՝ ինքնին զրել զուսանելիսն, և մի փոխել զզրեալն. զի ձեք իսկ զրուածոյն և եզծուածք օգնեն յիշողութեան:

Հինգերորդ՝ ՚ի սկզբան անդ մի ՚ի ձայն, այլ լուսութեամբ ուսանել, և ապա բարձրաձայն յեղյեղել զուսեալն:

Վ. Կյցերորդ՝ ուսանել յանօթուց և ընդառաւոս զեռ անխոնջ մտօր, մինչև ծանրացեալ ՚ի խորհրդոց:

Եսթներորդ՝ յերեկոյի նախ քան զմտա-

նել՝ ի մահիճս ընթեռնուլ զուսանելիսն  
մխանգամ կամ երկիցս մտադրութեամբ,  
զի զիշերային հանդստեանն ի վերայ ե-  
կեալ խորագոյն տպաւորէ զայնոսիկ ՚ի  
միտս :

Ութերորդ՝ օգնեն և նշանք ինչ արտա-  
քինք ՚ի յիշեցուցանել զուսանելիսն :

Այլ առաւել քան զամենայն զգաստ  
կեանք և հանդարտութիւն մտաց, որ և  
առ ամենայն ազգի ազգի վարժս գիտու-  
թեանց և հանճարոյ անհրաժեշտ կարե-  
ւորք են :

## ԴԱՍ ԵԶ

Տրամարանական ձեռնարկք. — Հաւաքարանու-  
թիւն. — Հնարք :

Հ. Աւելորդք ուրեմն իցեն արամարա-  
նին ցուրտ և տաղտկալի ձեռնարկք, զի  
ահա ճարտասանն հզօրագոյն ևս համոզէ  
հանդերձ զուարձութեամբ ՚ի ձեռն ձեռցն  
և հնարից արուեստին .

— Արդարե հոետորականին ձեք և հր-  
նարք օգնեն յոյժ ՚ի համոզել, այլ առանց  
տրամարանութեան՝ զի անկենդան է ճար-  
տասանութիւն, և շունչ իմն և հոգի նորա  
են ձեռնարկութիւնք բանական արուես-  
տին . որպէս զի յեղանակ բացատրու-  
թեանն և թ զանազանին տրամարանն և  
ճարտասան . զի ուր նա կարդաւ զառա-

ջարկութիւնսն զատէ , և ակն յանդիման պատրաստէ զվարման , սա մեր ՚ի վայր փռ փոխաէ զկարգն , և սեթենթիւք զվարման ծածկէ , ոչ խրտուցանելով զորսն :

Հ . Երբ ապա յօրինէ ճարտասանն դշաւրաբանութիւն .

— Հաւաքարանութիւնն է ձեռնարկութիւն , յորում՝ դնել երկուց առաջարկութեանց՝ հարկաւ երրորդ իմն յառաջ զայ :

Արդ զոր պարտն էր տրամաբանին կար զել այսպէս ,

Մեռանի այն՝ որ կենսաւորն է . Խսկ կրակն չէ կենսաւոր , Ապա և չմեռանի . այսպէս կարգէ զայն Եղիշէ վարդապետ ՚ի ձեւ ճարտասանական :

Մեռանի այն՝ որ շնչէն և շարժի և գնայ և ուտէ և ըմպէ .

Երբ տեսեր գու զկրակ գնայուն կամ խօսուն կամ զիտուն .

Արդ զոր կենդանի քո չէ տեսեալ , մեռեալ խոստովանիս :

Եւ Ասկերերան դշաւաքարանութիւնս զայս ,

Կեղծաւոր է , որոյ զործք հակառակք են բանիցն .

Խսկ արդ գու զամենայն ցոյցս ուրախութեան ՚ի քեզ բերես , յորժամ ասեսդ առ Աստուած ՚ի սուգ և ՚ի տրտմութեան կալ .

Ապա կեղծաւոր ես , և խաբել հնարիս զԱստուած . — այսպէս յօրինէ ՚ի ձեւ ճարտասանական .

Դինչ գործես , մատուցեալ Աստուծոյ  
ազօթս մատուցանես , և շուրջանակի կռւռ  
յակի համակիս , 'ի հիւսս ոսկեմանս ընդ-  
ելուզեալս մարդարտով : Միթէ ՚ի կա-  
քաւ իջանես , 'ի պար անցանիցես , 'ի հար-  
սանիս խնդզայցես , միթէ ՚ի գեղօն յառ-  
նիցես և 'ի ցոյց շպարիցիս . անդ պիտոյ է  
ոսկին և մարդարիտն ընդելուզեալ , անդ  
հանգերձըն սպանուճեալք անդէն զար-  
դուցն ույյք և ժամանակ մենթանաց , անդ  
սեթեեթել , և անդէն պերեեթել , աստ  
չէ այնմ ժամանակ , և ոչ պէտք ինչ այն-  
պիսիք : Պազատել եկիր , խնդրուածո մա-  
տուցանել , աղերս վասն մեղաց արկա-  
նել , ընդ յանցանացն եղանակ , 'ի հաշ-  
տութիւն ածել զտէրն . զի՞ զարդարիցես  
զանձնդ , չեն այդպիսի կերպարանք խընդ-  
րուածոց : Զիարդ կարիցես հեծել , կամ  
որպէս յոզւոց հանել և արտասուս արկա-  
նել , զիարդ հաշելով հառաշելով զազօթոն  
մատուցանիցես : Յորժամ այդպիսի կեր-  
պարանս ունիցիս և արտասուիցես , ծազր  
կայցես բազմաց և կատականք տեսողաց :  
Զմարթի , յոսկի համակեալ , և արտասուս  
արկանել . խարէութիւն գործես , կեղծա-  
ւորութիւն ցուցանես : Յորժամ 'ի նոյն մը-  
տաց , ուստի այնչափ սպանուճոնք և զար-  
դարանք ծնանին , և արտասուք ևս վիժի-  
ցեն , չէ ՚ի դէպ , չէ հաւատալի : Ի բաց  
առ զայն կեղծաւորութիւն , քանզի չկա-  
րես զԱստուած խարել . վարձակացն և  
կարաւչացն են այնպիսի կերպարանք :

Հ. Ո՞րպէս յօրինէ ճարտասանն զէր-  
նարս .

— Հնարք կոչի 'ի տրամաբանից հաւա-  
քարանութիւն անկատար . յորում միակ  
առաջարկութեան 'ի վերայ ածեմք զէն-  
տեռութիւն , ընդ լոռութեամբ թողեալ ըզ-  
միւսն իրր ծանօթ . զոր օրինակ .

Համահայր և համամայր որդիք և մք .

Աղա չէ պարտ մեզ հակառակ լինել  
միմեանց .

Արդ զայս ձեռնարկութիւն այսպէս 'ի  
ձե ճարտասանութեան ածէ Եղիշէ վար-  
դապետ .

\* Մի է մայր մեր եկեղեցի , որ երկնեացն  
զմեղ , և մի է հայր մեր սուրբ Հոգին , որ  
ծնաւն զմեղ . զիարդ համահարք և միոյ  
մօր որդիք՝ երկպառակք լինիցին և ոչ  
միարանք :

Դարձեալ դհնարս զայս . Ոչ միայն խօ-  
սել ընդ Աստուծոյ կայ մեր առաջի , այլ  
և շօշափել և ճաշակել զնա . ապա պար-  
տիմք մաքրել զամենայն անդամն մեր ,  
այսպէս կազմէ Շնորհալի 'ի ձե ճարտա-  
սանական .

\* Զի ոչ միայն խօսել ընդ Աստուծոյ ըստ  
Մովսեսի կայ մեր առաջի , և կամ տեսա-  
նել զյետոյսն Աստուծոյ , այլ և ձեռօք  
շօշափել զանշօշափելին , և շրթամբք համ-  
բուրել զսէրն , և բերանով ճաշակել զկե-  
րակրիչն ամենայնի , և 'ի սիրատ ընդունել  
և հոգւով միանալ ընդ նոյն , և լինել

աստուած շնորհօք՝ ընդ Աստուծոյ միաւորելովն։ Վասն որոյ զտեսանելիս և զլսելիս և զլեզու և զամենայն անդամ խրատեցէք՚ի բարիս շարժել,՚ի չարիս անշարժնալ. և ողջախոհութեամբ և սրբութեամբ յաշխարհական ցանկութեանց և զբօսանաց զմիտո ամփոփելով, և ապա յերկնային խորհրդոյն սպասաւորութիւն մերձենայցէք ։

Եւ Ոսկերերան գարձեալ զհնարս զայս. Ննջեցեալքն ՚ի տէր հանգչին մանաւանդ և պսակին, ապա չէ պարտ տրտմել ընդմահ նոցա, այսպէս ճարտասանէ. .

« Այլ հեծեն միշտ միտք գառնապէս, եթէ յու եհան զմեղ Քրիստոս, և յու իջուցաք մեք զանձինս, յորժամ տեսանիցեմք զկոծողս ՚ի հրապարակս և զճիչ և զաշխարանս ՚ի վերայ մեռելոց, զիարդ խայտառակեն զանձինս ողբովք և կական բառնալով։ Թէ հաւատայք, ամաչեմ ՚ի հեթանոսաց և ՚ի Հրէից և յայլազանդոց, և յամենեցունց իսկ առ հասարակ. որ զայն տեսանեն, զմեղ ծաղր առնեն։ Եւ որչափ ասիցեմ այնուհետեւ, ընդ վայր ասեմ վասն յարութեան. և որչափ ճարտարիցեմ ինչ, ոչ ընդ իմ բանսն հային հեթանոսք, այլ ընդ ձեր զործսն, և անդէն վաղվազակի ասիցեն. Ովք ոք ՚ի սոցանէ կարիցէ զմահ արհամարհել, որ ոչ և զայլոց մահ կարիցէ տեսանել. Բարւոք են բանքն որ ՚ի Պաւլոսէ ասացան, բարւոք

և երկնից արժանի և Աստուծոյ մարդա-  
սիրութեանն . Որ տպրեցուացէ զայնոսիկ՝  
որ հանագաղ մահոն երկիւզիւ կերն , և  
՚ի վտարանդի էին ՚ի ծառայութեան . Այլ  
չտայր այնմ հաւատարիմ լինել դուք , որ  
զործովրդ մարտնչիր ընդ բանսն . թէ ալէտ  
և Աստուած բազում անդամ ուրգել ՚ի  
մարդ կանէ , զի բառնայցէ ՚ի միջոյ զայն-  
ովիսի չար սովորութիւնն . Եւ արդ աղէ  
ասա : զի՞նչ յայտ առնիցեն կանթեղքն և  
մոմեղէնք լուցեալք . ոչ ապաքէն իրքե  
զնահատակոյուղարկեմք : Զի՞նչ ինչ յայտ  
և օրհնութիւնքն առնիցեն . ոչ ապաքէն  
զԱստուած փառաւորեմք և զոհանամք՝  
թէ այսուհետե պսակեաց զզնացեալսն ,  
և աղատեաց յաշխատութեանց , և հան  
յանյայտ աշխարհէ , առ իւր պահել զե-  
աեղ և անարատ : Ո՞չ վասն այսորիկ են  
օրհնութիւնքն և սաղմոսիցն ալէսոլէս նը-  
ւազքն . և այն ամենայն յուրախութենէ  
սրտիցն յայտ առնին . Ուրախ որ իցէ , ա-  
սէ , սաղմօս ասիցէ :

### ԴԱԱ ԻԷ

Մակածութիւն . — Յարացոյց :

Հ . Ո՞րոլէս կազմէ ճարտառատնն զմակա-  
ծութիւն .

— Մակածութիւն կոչի ՚ի տրամարանից  
ձեռնարկութիւնն , յորում առաջազրեալ

զիրս աներկրայելիս զանձնիւր տեսակաց  
սեսին կամ զանհատից տեսակին, ապա  
հաստատեմք զնոյն զբովանդակ սեռէն  
կամ զտեսակէն . զոր օրինակ . Տղայոյ .  
մանկան, պատանոյ, երիտասարդի, առն,  
ծերոյ և զառամելոյ խրաբանչիւր կարիք  
են . ապա և ամենայն հասակաց կարիք են :

Քայց ճարտասանին ոչ են պարագ մի  
բատ միտջէ զամենայն մասունս թուել, այլ  
համարձակագոյն վարի ձեռվո : Որովէս  
‘Եարեկացին փոխանակ ասելոյ՝ շիք որ որ  
առանց ուղղչի կամ օժանդակութեան կա-  
րացէ զործել ինչ, ապա և ոչ ես առանց  
կամացն Աստուծոյ, այսպէս յօրինէ ըզ-  
րանն . Զի ոչ երբէք հարթ ընթանայ ե-  
րիմար՝ առանց սանձակալի, և ոչ նաև  
համբառնալ հանդէպ՝ առանց ուղղչի, և  
ոչ արօր կշիռ ինչ զործէ՝ առանց մանա-  
կալի, և ոչ երկուորեակը լծոցն՝ի ճահ ճե-  
մեցեն՝ առանց եղողի, ոչ ամալ վերա-  
չուէ՝ առանց հողմոյ, ոչ աստեղք ցնդին  
կամ գումարին՝ առանց ժամանակի, ոչ  
արեգակն փոխարերեալ շրջանակի՝ առանց  
տարրական օդոյ, և ոչ ես նորօր հան-  
դերձ, առանց բարեգործիդ հրամանաց  
ակնարկութեան :

Եւ Առկերերան՝ի լրմանէ ամենայն կան-  
խասացութեանցն Փրիստոսի մակածու-  
թեամբ զհետ բերէ և զհանդ երձեալ լրու մն  
կանխասացութեան կատարածի աշխար-  
հիս այսպէս .

« Բազում ինչ յառաջադոյն ասաց Գրիս-  
տոս . և եթէ չել այն ամենայն 'ի զլուխ ,  
մի հաւատայցես այլոցն ես բանից . և եթէ  
ելին 'ի զլուխ և կատարեցան , ընդէր  
երկմտիցես 'ի մնացելոցն : . . Ասաց Գրիս-  
տոս՝ եթէ Երուսաղէմ առցի , և այսպիսի  
աւերածով աւերեսցի . և ել 'ի զլուխ կան-  
իասացութիւնն : Ասաց՝ եթէ եղիցի նե-  
ղութիւն մեծ , և եղեւ : Ասաց՝ թէ որպէս  
մանանիս սերմանի , այնպէս տարածես-  
ցի քարոզութիւնն . և զնոյն տեսանեմք  
հանապազ ընդ ամենայն աշխարհ ընթա-  
ցեալ : Ասաց՝ եթէ որք թողուցուն զհայր  
կամ զմայր կամ զեղբարս կամ զքորս ,  
ունիցին հարս և մարս . և զայն արդեամբը  
իսկ տեսանեմք կատարեալ : Ասաց՝ եթէ  
յաշխարհի աստ նեղութիւն հասանիցէ  
ձեզ , այլ քաջալերեցարուք , ես յաղթեցի  
աշխարհի , այսինքն է՛ թէ ոչ ոք իցէ որ  
ձեզ յաղթիցէ . և զայս արդեամբը իսկ  
տեսանեմք ելեալ 'ի զլուխ : Ասաց՝ եթէ  
զրունք դժոխոց ոչ յաղթահարիցեն զե-  
կեղեցի , և այն զի 'ի հալածանս կայցէ , և  
ոչ ոք իցէ որ շիջուցանիցէ զքարոզութիւն-  
մկայեաց և այսմ կանխասացութեան փորձ  
իսկ իրացն , թէպէտ և կարի առանց հա-  
ւանութեան էր յորժամ զայս ասէր : Ըն-  
դէր զի ամենայն բանք էին , և չե ևս հան-  
գէս ցուցանէր բանիցն . որպէս զի կարի  
իսկ հաւատալի եղեւ այժմ : Ասաց՝ եթէ  
յորժամ քարոզեսցի աւատարանս ընդ ա-

մենայն հեթանոսա , ապա եկեսցէ կատարած : Ահաւասիկ այսուհետեւ մօտ 'ի վախճան եկաք հասաք , քանզի 'ի մեծ մասն աշխարհիս քարոզեցաւ աւետարանն . այսուհետեւ եկն եհաս կատարած , երկիցուք սիրելիք » :

Հ . Ո՞րպէս կազմէ ճարտասանն դյարացոյց :

— Յարացոյցն է մակածութիւն անկատար , զի 'ի նմանւոյ այլ ինչ նման գուշակեմք նովաւ . զոր օրինակ Պաւղոս դհալածիչն օրհնեաց , ապա և քեզ աշակերտի նորա զնոյն պարտ է առնել :

Արդ զայս ձեռնարկութիւն այսպէս յօրինէ Լամբրոնացի :

« Պաւղոս բամբասելոցն ընդդէմ օրհնեաց , դհալածիլն յանձն առ , 'ի հայհոյելն աղաշեաց , և այնպիսի մաղթանօք զտիեղերս աշակերտեաց : Զքեզ հետեւող նորին ուտառյց չարին չար հատուցանել » :

Սովին ձեռվ Ոսկերերան 'ի պատժոցն՝ զոր կրեցին Հրեայք , ցուցանէ զհանդերձեալ պատուհաս հաւատացելոց .

\* Զտղայաբարոյսն՝ որք ոչ այնչափ ինչ յանցեան՝ այնպիսի տանջեաց , և 'ի մեզ խնայիցէ . այլ չէ ինչ 'ի դէպ այս : Թէպէտ և զնոյն մեզս զնոցայն մեղանչեմք , մեծամեծ տանջանաց քան զնոսա արժանի եմք : Ընդէր . զի 'ի բազում շնորհս իսկ վայելեալ , յորժամ աւելի ևս մեծամեծ քան զնոցայն յանցանիցեմք , որպիսի ինչ 6.

սլատիժս ոչ կրիցեմք . . . Կամին և այլ և ինչ լսել , որչափ ինչ վիշտու 'ի պազեստի նացւոց աշխարհին կրեցին , սով , սոր , պատերազմունս , գերութիւն . 'ի բարելացւոցն , յասորեստաննացն 'ի մակեդոնացւոց , և անհնարին չարիս 'ի Հաղպիանուէ և 'ի Վեռալիանոսէ : . . Կամին և դայրոց և չարեաց նոցա ուսանել . ընդ Յովսեֆայ զիրսն անց , և անտի ուսանիս զամենայն ազէտս նոցա : Եւ արդ հաւանեցուցաք արդեօք զձեզ յայսմ ամենայնէ , եթէ զոյ զեհեն : Զմուռ ած , զի թէ նոքա տանջեցան , մեք ընդէր չպատժիցիմք . կամ զիարդ չիցէ 'ի գէալ մեզ պատժել , որ սաստիկ քան զնոսա յանցանս յանցանեմք , եթէ յայտ իսկ չէ՝ վասն զի պահեալ կան մեզ պատիժքն :

### ԴԱՍ ԻՐ

Համարարդութիւն . — Երկասյրաբանութիւն :

Հ . Ո՞րովէս կազմէ ճարտասանն զհամարարդութիւն .

— Համարարդութիւն կոչեն տրամարանք զշար բանից , որ այնալէս յեռեալ և կապեալ են ընդ միմեանս , զի որ 'ի վերայ յետին ենթակային ածի հետեւթիւն 'նոյն հաստատի զառաջնայն : Զոր օրինակ կամեցեալ ցուցանել զանմահութիւն հոգւոյ ասեմք . Հոգին է պարդ , պարզն է առանց

մասանց, որ առանց մասանց է՝ անբաժանելի է, անբաժանելին է անապական, անապականն է անմահ՝ ի բնէ. ապա հոգին է անմահ՝ ի բնէ :

Այդ զայն ձև և ճարտասանն՝ ի կիր արկանէ առաւելագոյն համարձակութեամբ. որովէս Լամբրոնացի առ ՚ի ցուցանել զի առ ստացումն և պահպանութիւն հաւատոց՝ կարեոր է արհամարհել զհանգիստ և դիառոս մարմնոյ, ասէ.

« Զի հոգեոր խորհուրդ է և ոչ մարմնաւոր, զհոգւոյ կամս պարտ է սորին հաւատոց հաւանեցուցանել և ոչ զբարբառ ըերանոյ. և հոգին ոչ հաւատայ առանց հոգեալէս տեսութեան. և հոգեւոր տեսութիւն ոչ լինի առանց խմաստութեան. և խմաստութիւն ոչ հաստատի առանց բանաւորալէս առաքինութեան. և բանաւոր առաքինութիւն ոչ ուղղի առանց մարմնոյս հանգստեան և փառաց արհամարհութեան » :

Գրեթէ սովին ձևով ցուցանէ և Ոսկերերան, զի խոնարհն պատրաստ զտանի առ ամենայն վիշտ և բամբասանս.

« Վասն այնորիկ միշտ յառաջնոմէն յաջորդոն յառաջագոյն հորդէ ճանապարհ պատուիրանացն, իբրեւ շար իմն սոկի տողեալ մի ըստ միոջէ դպատուիրանոն. Զի յորժամ խոնարհ որ իցէ, յայտ է թէ ՚ի սուզ է վասն մեղացն. խակ որ սպաւորն իցէ և հեղ, յայտ է թէ արդար է և ողոր-

մած . իսկ որ ողորմածն է և արդար , յայտ է թէ մտախոչ և սուրբ սրտիւ է : իսկ այն պիտոյն պատշաճ է , զի խաղաղաբարար և իցէ : իսկ որ զամենայն զուղղութիւնն յանձին ցուցանիցէ , այնպիսին և առ ճըդ նութիւնն պատրաստագոյն գտանի , և ոչ ինչ խռովի՝ յորժամ լսիցէ բանս բաժ բասանաց , և ոչինչ զանդիտէ՝ յորժամ բիւր չարշարանս յանձին կրիցէ » :

Հ . Ո՞րպէս կազմի երկսայրաբանութիւն 'ի ճարտառանից .

— Երկսայրաբանութիւն կոչեն տրամաբանք զձեռնարկութիւն կազմեալ յերկուց ներհական առաջարկութեանց , որոց չփ միջին ինչ : Որպիսի է հոչակաւոր երկսայրաբանութիւնն Տերտուղիանոսի առ Տրայիանոս կայսր , որոյ պատուէր տուեալ էր՝ մի ևս 'ի հարցփորձ քննութեան մատուցանել զրբիստոնեայս . իսկ եթէ յայտնեսցին , պատուհասել զնոսա .

« Կամ վեասապարտք են , ասէ , քրիստոնեայրդ և կամ արդար . եթէ վեասակար , ընդէր արդելուս 'ի հարցափորձէ . իսկ եթէ արդար , հիմ դատապարտես » :

Այսպիսի երկսայրաբանութեամբ Ապրզիս վարդապետ յորդորէ 'ի համբերութիւն զբամբասեալս .

« Եթէ որ բամբասեացն զբեղ՝ սուտ ասաց որբան ինչ միանդամ ասաց . զի՞նչ առ քեզ ասացեալքն . ոչ ապարէն 'ի նորազութիւն կուտի ամբաստանութիւնն՝ որ

բամբասեացն։ Ապա եթէ յիրաւի բամբասեցար, առ քեզ է զայթակղութիւնն՝ որով բամբասեցարն։ Ապա յերկոսին կողմանսն չէ պարտ քեզ ընդգէմ ասել ինչ, և ոչ բամբասանացն փոխարէն բամբասել։

Այսպէս և Ոսկերերան կարճէ զբամբասանս ընդգէմ մուրողաց, ցուցանելով զիթէպէտ և 'ի հայրենի ժառանգութենէ ոք և թէ 'ի վաստակոց իւրոց կերակրիցի, սակայն չպարտի անգոսնել զմուրողս վասն անգործութեան, այլ ողորմել նոցա.

Եւ երանի՛ թէ այսչափ միայն, այլ վաղվաղակի չարախօսութիւնք և բամբասանք յառաջ մատչին զմուրողէն։ Ընդէր չզործիցես, ասեն, և ընդէր դատարկ հաց ուտիցես։ Ազէ ասա, դու 'ի գործոց ունիս զինչ ունիագ. ոչ ապաքէն զհայրենի ժառանգութիւնն առեր։ Իսկ եթէ զի գործեսն՝ վասն այնորիկ զայլս նախատիցես, շսիցես Պաւղոսի, որ ասէրն, զի յետ ասելոյն՝ եթէ Որ ոչն զործիցէ, և կերիցէ մի, ասէ. Բայց դուք զբարիս գործել մի ձանձրանայք։

### ԴԱՍ ԻԹ

Ազգի ազգի շարադրածք. — Քարոզ. — Պատմագրութիւն. — Թղթագրութիւն։

Հ. Համառօտեսջիր ինձ որ ինչ աղղի

ազգի շարագրածաց սեփական կանոնն  
իցեն, և նախ զկարեորս բեմախռու-  
թեան կամ քարոզի:

— Քարոզ է բանյորդորական յուղզո-  
թիւն բարուց: և զի առանց հաւանեցու-  
ցանելոյ զմիտոս չէ մարթ յորդորել զօր,  
առաջ ընդ միտոն նախ պարա է մարառել:

Պարտ է հոգեոր բեմբասացութեան զոյ  
հանդարտ և եռանդուն. հանդարտ, զի  
մեծութիւն իրացն պահանջէ զայն. իսկ ե-  
ռանդուն, զի ճառէ զկարեորաց առ բա-  
րութիւն մարդկան: Վասն որոյ պարտ է  
բեմբասացին յանձին բերել զօծութիւնն  
զայն խորազգած ճշմարտութեանցն զօրոց  
ճառէ, և զիզձս քաջ տակաւորելոյ զայնո-  
սիկ ՚ի սիրոս ունկնդրաց:

Պարտ է նմա զօդտակարաց հոգւոյ և  
զպատշաճից ունկնդրացն ճառել. մի զու-  
սումնական իրաց, մի զիմաստափրական  
մանրախոյզ քննութեանց, մի զտեսական  
խնդրոց աստուածաբանութեան, և մի  
ընդդէմ անհաւատից և անկրօնից յար-  
դարել զճառան. զի քարոզի բանին առ  
հաւատացեալս պարտ է ճառել, որոց ան-  
երկրայելի իցեն ճշմարտութիւնք կրօնից,  
և միայն պէտք իցեն խելամտազոյնս հա-  
ւանեցուցանել զնոսա և յորդորել ՚ի կա-  
տարումն այնոցիկ:

Կարեորազոյն կանոնք հոգեոր բեմա-  
սացութեան են.

Ա. Պահել զմիտութիւն. այսինքն զի բո-

գանգակ մասունք նորա 'ի մի ինչ ունիցին զդիսաւորութիւն :

Ա. Մասնաւորել դնիսթն . այսինքն դի թէսլէտ և բարւոր է և հասարակարար ճառ սել զհնաղանդութենէ, կամ զայլոց առաքինութեանց , բայց բաւազոյն ևո է ամփոփել զնոյնս , և մասնաւորարար ճառել զհնաղանդութենէ առ ծնողս , և այլն :

Պ. Աչ է պարտ ջանալ 'ի սպասել զամենայն , որ ինչ մարթ իցէ ասել զառաջարկեալ բնարանէն . այլ յամենայնէ անախ զկարենորս և զգօրաւոր բանս , զի մի յափրացեալ տաղակասցին ունկնդիրք :

Դ. Պարտ է մանաւանդ 'ի գործնականս իջանել , և ճառել զիրաց՝ որ հանապազօր զործին առ մարդիկ : Զի ոչ այնպէս օգուտ է տեսականարար ճառել զառաքինութեանց և զախարից , որպէս նկարազրել զայնս 'ի մարդիկ . որով իւրաքանչիւր որ հանգոյն նկարազրեալ սպատկերին տեսունելով զանձն , սպաւորազոյն ևո կրէ աղդումն 'ի բանիցն : Ամին իրի օգնեն յոյժ և պատմական օրինակը 'ի սուրբ զրոց :

Ե. Մի ձես նորահնարս կամ քերթողական տարազս բանի կամ զոն իմաստասիրական և զարամարանական 'ի կիր առնուլ . զի պարտ է ոճոյ հոգեոր բեմասցութեան լինել պարզ և ինքնազարդ , պատշաճեալ առ ամենայն ունկնդիրս , և զիւրիմաց ամենեցուն : Եւ որ որեր առեռանդեան փոխարերութիւնը և այլ ևս

ձեք ճարտասանականք 'ի ճահ գայցեն ,  
սլարտ է առանց արուեստակութեան 'ի  
կիր առնուլ զայնս . զի նողկալի է 'ի քա-  
րող բանին իզձ հաճոյ լինելոց ունկնդրաց ,  
և ցոյց պերճութեան բանից :

Զ . Զբանս սուրբ զրոց մի բռնազրօսել  
և մի դանցայտո և զգժուարիմացս ածել 'ի  
վկայութիւն . և մի դարձեալ 'ի յայտնիս և  
յանժխտելի իրս յաճախել վկայութիւնս 'ի  
սուրբ զրոց :

Հ . Զի՞նչ ինչ կարենոր է պատմազրի .

— Պատմութիւն է ճշմարտապատում  
յիշատակութիւն անցից անցելոց առ 'ի  
հրահանգ և 'ի հմտութիւն մարդկան :

Ա . Պարտ է պատմազրի չունել կողմնա-  
ւորութիւն :

Բ . Ոչ զամենայն դէպս սլարտ է նմա  
անխտիր տալ 'ի զիր . այլ զերեելիսյայն-  
ցանէ զցանկալիս 'ի զիտութիւն և զօդտա-  
կարս առ 'ի խրատ . և զայնոսիկ հանդերձ  
պատճառօքն և արգասեօք ստուգապա-  
տում առնել :

Գ . Մի հանդէս առնել հանճարոյ՝ սնո-  
տի զարդուք և կամ աւելորդ խելամտու-  
թեամբք . այլ զկարենոր խելամտութիւնս  
խել խառն ընդ սլատմութեանն անզգալի  
առնել , և մի ուրոցն 'ի զլուխս կարգել  
զայնս :

Դ . Պահել կարգ և միութիւն 'ի պատ-  
մութեանն , և մի ստեալ զրուազօք բանի  
հատուկտիր առնել զայն :

Ե. Պարզ և բացայայտ ունել ոճ, առանց գծեռթեանքանից. և քաջ նկարագրութեամբ իրեւ 'ի պատկերի ցուցանել զբարս աղջաց և դիւրաքանչիւր ուրուք, զախտո նոցա և զառաքինութիւնս, զձես քաղաքաց և զտեղեաց, զօրէնս, զկրօնս, զսվորութիւնս, այլովքն հանդերձ:

Զ. Մի կարի երկայնաբան զոլ և մի յոյժ կարճառօտ, այլ 'ի միջասահմանին կալ՝ յերկոցունցն ևս խոյս տուեալ՝ 'ի ծայրայեղ խոտորմանց, որ տաղտկալի կամ անալի առնեն զպատմութիւնն:

Վարդանանցն պատմութիւն ուսուցէ քեզ զայս ամենայն:

Հ. Զինչ կարեոր է թղթագրութեան.

— Այն ամենայն որ 'ի խօսս ընտանեկանս է կարեոր. այսինքն է պարզութիւն, ընականութիւն առանց ամենայն արուեստակութեան, ևռանդն, և համառօտոթիւն հանդերձ ընափր ոճով և կիրթ ախործակօր:

Պարտ է ամենայն ուշիւ միտ զնել՝ 'ի զրել զթուղթս, և թագուցանել ամենեին զմտագրութիւնն:

Պարտ է ըստ առաջարկութեան իրացն փոփոխել՝ 'ի սմա զտիսկս կերպարանաց բանից, առաւել քան յայլ ամենայն աղջս շարագրածոց: Առ այս վարժապետ վեհադոյն լիցին Շնորհալւոյ թուղթքն:

ԴԱՅ 1.

Սկիզբն և զարգացումն ճարտասանելու թեսն:

Հ. Ի լրումն ճարտասանական հմտութեանց ցանկալի է ինձ դիտել և զսկիզբն և զզարգացումն այնոցիկ .

— Ակիզբն ճարտասանական արուեստին եղեւ ամբապէս յԵլլադա առ աթենացիս , որոց և կարգ տեսչութեանն օժանդակեաց ՚ի զարգացումն արուեստին . դի անդ ամենայն ինչ կարեւոր սահմանէր ՚ի ժողովս . և ճարտարախօսոր՝ որոց զօրաւորագոյնք էին բանկ՝ նորա իշխէին ՚ի ժողովս :

Պիսիստրատ ժամանակակից Առղոնի , 528 ամօր նախ քան զթուականութիւն Փրկչին , առաջին ըստ Պլուտարքեայ ճարտարախօս անուանի եկաց առ Քոյնս . որ և ճարտարխօսութեամբն զօրացեալ ըլուակալեաց յԱթէնս :

Պերիկղէս , 450 ամօր նախ քան զթուարերութիւն Փրկչին , ՚ի կատարումն էած զարուեստն յԱթէնս . որ և վասն հրզօր ճարտարխօսութեանն կոչեցաւ Աղիմալեան , իբր որոտող հանգոյն Աքամազդայ : Զսմանէ առեն յօրինեալ նախ զրով զատենախօսութիւն :

Զհետ նորա յաւուրս տեղուպոնեսական մարտին յարեան կղէոն , Ալկիփիադ , Կրի-

տիաս և թերամենէս : Ի նմին ժամանակի  
եկաց և թուլիդիզէս պատմագիր :

Չետ ժամանակացն Պերիկղեայ յարեան  
իմաստակը ոմանք հոետորք անուանեալք ,  
որ աղաւաղեցին զարուեստն ճամարտա-  
կութեամբ ճառից . 'ի սոսա անուանիք էին  
գորդիաս , Առնտինոս , Պրոտագորաս ,  
Պրստիկոս և Թրասիմոս :

Սոցա հակառակ եկաց Սոկրատ , և նուրք  
և պարզ ճարտասանութեամբն տապա-  
լեաց և նշաւակեաց զիմաստակութիւն նո-  
ցա , և զարձոյց զարուեստն ՚ի սկզբնա-  
տիպն զեղեցկութիւն :

Չհետ Սոկրատայ կացին Խւսիաս , ի-  
սոկրատ և խոչոս : Բայց խոչոս առաւել  
գեմոսթենեաւ աշակերտաւն իւրով եղե  
անուանի :

Գեմոսթենէս , քաջն և վեհագոյն ՚ի հել-  
լին ճարտարախօսոս . եկաց 540 ամօք նախ  
քան զթուականութիւն Փրկչին : Ճիզն նո-  
րա ՚ի վարժու ճարտարխօսութեան , չվհա-  
տել ընդ ձախող ելս նախընծայ ճառիցն ,  
երկայնմտութիւն ՚ի յաղթել ամենայն խա-  
փանաց՝ զօրս ընութիւնն ընդգէմ եղեալ  
էր նմա , սորամուտքնակութիւննորս ընդ  
երկրաւ՝ առ ՚ի պարապել անզբազ յու-  
սումն արուեստին , արտասանութիւնք նո-  
րա բարձրագոչ ՚ի ծովեզերս ընդգէմ  
մրեկալից ալեաց՝ առ ՚ի սովորել աղմկի  
բազմամբոխ ժողովրդեան , խիճ ՚ի բերանի  
ունել՝ առ ուղղելոյ զթլուատ լեզուին թե-

բաթիւն, սուսեր 'ի մերոյ ուսոցն 'ի կախ ունել՝ առ 'ի բաց բառնալոյ զավարութիւն ընդուտ ընդուտ խաղալոյ թիկանցն յար տառանելն, այս ամենայն քաջալերեն րդ համբակս հոեւտորականին յաջողերոյ 'ի մարժս օրինակաւ այնորիկ, որ անյարմա բազոյն գոլով արուեստին՝ կրթութեամբ և ջանիւ մեջազոյն 'ի ճարտարախօսս դր տու :

Դեմոքթենի սոսիս նախանձընդդեմ ե կաց Եպինէս, ճարտարախօսս քաջ այլ ոչ եթէ հուտասար նմին : Յետ սոցա ոչ ոք ընդ ամս յիսուն անուանի եկաց մինչեւ ցՊեմեար մաղերացի . այլ և սորա ոճ պերճ և բազմազարդ՝ թափուր էր 'ի զօրութենէ :

Իսկ յետ Գեմեարի և ոչ յիշտակաց ոք արժանի եկաց, մինչեւ հոռմայեցւոց նուաճեալ զԱլլադա, ընդ զեղարտեսոս ամենայն փոխեցին և զճարտարխօսութիւն առ իւրեանս :

Ի նոցանէ ճարտարախօսոք երեւելիք կա ցին կրասսս և Անտոնիոս, և զհետ նոցա Կիկերոն, և նախանձորդ նորա Որտենս սիոս : Բայց մեջազոյն յամենեսին 'ի նոսա էր Կիկերոն, կացեալ իրը 50 ամօք նախ քան դթուականութիւն ֆրեզին . և այն պէս զերազանցեալ յարուեստին մինչեւ 'ի զուզակչիո կալ ընդ Գեմոսութենեայ :

Յետ Կիկերոնի 'ի բառնալ աղասութեան բարձաւ և պերճախօսութիւն 'ի հոռմայեցւոց . քանզի պակասեցին պէտք

ահնախօսութեանց, և ոչ ևս էր յորդոր  
զարգացման ճարտարախօսուց, Եւ՝ ի սպառ  
կործանեցաւ ՚ի յաճախել զոլրոցաց ճա-  
մարտակացն. որ զանգոյից իրաց ճառս  
արկեալ՝ պաճռճարանէին. Այս ոճ՝ ի զիրս  
Ահնեկայ սկսաւ նախ ՚ի վեր երևել, և ՚ի  
ներբողեանն Պյինիսսի ՚ի Տրայիանոս. յո-  
րում Հռոմեականն ճարտարխօսութիւն  
զօրհասականն իւր եցոյց ճիզն. Խոկ ՚ի  
տարածանել քրիստոսական կրօնից, յա-  
րեան վարդապետը եկեղեցւոյ առ լատի-  
նացիս՝ Մինուտիս Փելիքս, Լակտան-  
տիս, սուրբ Հերոնիմոս, Տերուղիանոս,  
սուրբ Ամբրոսիս, սուրբ Օգոստինոս,  
սուրբ Գրիգոր մեծն և սուրբն Լեոն. Խոկ  
առ Յոյնս՝ սուրբքն Բարսեղ, Գրիգոր նա-  
զիանցացի կամ Աստուածարանն, Գրիգոր  
նիւսացի, և վեհագոյն ամենեցուն՝ Ասկե-  
րեան, պարծանք եկեղեցւոյ, որ սրբա-  
զան ճարտարխօսութեամբ ընդ Հեթանո-  
սականին ՚ի կոիւ եկաց :

Ծնդ սոսա՝ ՚ի գէալ է յիշատակել և զմերս  
Պրովերեսիս, զորմէ Եւնարի ատէ զա-  
ստու ճարտասանութեան՝ ՚ի չորրորդ դա-  
րու կացեալ յԱթէնս, և վարժապետ սրբ-  
բոյն Գրիգորի Աստուածարանի. և այն-  
պէս Հռչակաւոր լեալ, մինչեւ կանգնել  
նմա անզրի ՚ի Հռոմ, և թագաւոր ճարտա-  
րխօսաց զնա անուանել :

Եւ ապա ընդ զարս տասն ՚ի սպառ ան-  
հետացաւ ճարտարխօսութիւն առ Յոյնս

և առ Լատինս . մինչ ՚ի Հայաստան մերքն  
յաջորդէին զհետ աշակերտացն Ասհակայ  
և Մեսրոպաց Մանդակունին , Յոհան ի-  
մաստաեր , Շնորհալին և Լամբրոնացի ,  
այլովքն հանդերձ : Որոց գրուածքը ընդ  
հրաշագուն թարգմանութիւնս շարադրա-  
ծոց սրբոց հարցն Յունաց կան մեզ առա-  
ջի օրինակք նախանձելիք ՚ի նմանութիւն ,  
և վարժապետը վեհագոյն ճարտարիսուտ-  
թեան :

Ճամանակ առաջ պատմած է ուղարկութեան մասի-  
ն պատմութեան . ուղարկութեան պատմութեան . ուղա-  
րկութեան պատմութեան . ուղարկութեան . ուղա-  
րկութեան . ուղարկութեան . ուղարկութեան . ուղա-

---

րկութեան . ուղարկութեան . ուղարկութեան . ուղա-  
րկութեան . ուղարկութեան . ուղարկութեան . ուղա-  
րկութեան . ուղարկութեան . ուղարկութեան . ուղա-



## ՑԱՐՆԻ

Ազերանք	.	.	.	.	.	59
Այլաբանութիւն	.	.	.	.	.	51
Անդամք պարբերութեան	.	.	.	.	.	97
Անձք	.	.	.	.	.	60
Անհմանութիւն	.	.	.	.	.	21
Անուանաստեղծութիւն	.	.	.	.	.	52
Անցումն	.	.	.	.	.	84
Առաջարկութիւն	.	.	.	.	.	12
Արտիճանք	.	.	.	.	.	90
Առենական հանգէս	.	.	.	.	.	10
Արտասանութիւն	.	.	.	.	.	99
Արտաքին ակղքք	.	.	.	.	.	28
Արտուղութիւն	.	.	.	.	.	85
Առելազրութիւն	.	.	.	.	.	40
Բազմոյեզանակ ձե	.	.	.	.	.	81
Բաժանորդութիւն	.	.	.	.	.	82
Բաժանումն սեսի	.	.	.	.	.	13
Բազզատութիւն	.	.	.	.	.	23
Բաղնուհական հանգէս	.	.	.	.	.	10
Բացագանցութիւն	.	.	.	.	.	56
Բացադարձութիւն	.	.	.	.	.	68
Գործք և պատճառք	.	.	.	.	.	20
Դերանունութիւն	.	.	.	.	.	53

Դիմառնութիւն	.	.	.	.	.	69
Դորովանք	.	.	.	.	.	47
Երդիծանութիւն	.	.	.	.	.	49
Երկայրաբանութիւն	.	.	.	.	.	132
Զանցառութիւն	.	.	.	.	.	65
Զեղումն	.	.	.	.	.	41
Ընդայնումն բառիք	.	.	.	.	.	88
— իմաստիք	.	.	.	.	.	90
Թարգմանութիւն	.	.	.	.	.	119
Թուումն մասանց	.	.	.	.	.	16
Թղթագրութիւն	.	.	.	.	.	137
Լծորդք	.	.	.	.	.	18
Լոռութիւն	.	.	.	.	.	64
Խելամառութիւն	.	.	.	.	.	46
Կախումն	.	.	.	.	.	77
Կացրդական հանդէս	.	.	.	.	.	10
Կիրք	.	.	.	.	.	29
Հակաղրութիւն	.	.	.	.	.	24
Հակաղրութեան ձև	.	.	.	.	.	75
Հաղորդակցութիւն	.	.	.	.	.	63
Համարարդութիւն	.	.	.	.	.	130
Հարցումն	.	.	.	.	.	62
Հաւաքարանութիւն	.	.	.	.	.	122
Հեղնութիւն	.	.	.	.	.	47
Հնարք	.	.	.	.	.	124
Զեք բառից	.	.	.	.	.	40
— իմաստից	.	.	.	.	.	43
Շարտասանութեան սահման	.	.	.	.	.	7
— սկիզբն և զարգացումն	.	.	.	.	.	138
Շարտասանութիւն ազգի ազգի	.	.	.	.	.	10
Մակագանչութիւն	.	.	.	.	.	56

Մակածութիւն	.	.	.	.	.	126
Յառաջարանութիւն	.	.	.	.	.	11
Յարակից հանգամանք	.	.	.	.	.	26
Յարացոյց	.	.	.	.	.	129
Յիշողութեան կրթութիւն	.	.	.	.	.	120
Յոդնահոլովք	.	.	.	.	.	42
Յորդոր	.	.	.	.	.	28
Յուզումն կրից	.	.	.	.	.	29
Նախասպաշարումն	.	.	.	.	.	80
Նախընթաց և հետեւորդ	.	.	.	.	.	26
Ներքին տեղիք	.	.	.	.	.	15
Նկարագրութիւն	.	.	.	.	.	70
Նմանաձայնութիւն	.	.	.	.	.	42
Նմանութիւն	.	.	.	.	.	21
Ըարժուածոց կանոնք	.	.	.	.	.	100
Ընորհումն	.	.	.	.	.	66
Ըրջարանութիւն	.	.	.	.	.	53
Ո՞չ բարեխառն	.	.	.	.	.	109
— լակոնական	.	.	.	.	.	115
— ուսումնական	.	.	.	.	.	112
— պատմական	.	.	.	.	.	113
— պարզ	.	.	.	.	.	106
— վաերմ	.	.	.	.	.	103
Ո՞չ ընտրութիւն	.	.	.	.	.	112
— կրթութիւն	.	.	.	.	.	117
Ուղղութիւն	.	.	.	.	.	83
Չափազանցութիւն	.	.	.	.	.	54
Պատճառք և գործք	.	.	.	.	.	20
Պատմագրութիւն	.	.	.	.	.	136
Պատմութիւն	.	.	.	.	.	14
Պարբերութիւն	.	.	.	.	.	97

Պարզութիւն՝ ի խօսք	.	.	.	.	.	7
Սահման	.	.	.	.	.	15
— ստորագրական	.	.	.	.	.	15
Սեռ և տեսակ	.	.	.	.	.	19
Ստուդանութիւն	.	.	.	.	.	17
Վերջաբան	.	.	.	.	.	32
Վասահութիւն	.	.	.	.	.	67
Տարակուսութիւն	.	.	.	.	.	57
Տեղիք առենական հանդիսին	.	.	.	.	.	37
— սեփական	.	.	.	.	.	33
— ներքինք	.	.	.	.	.	15
Տեսակ և սեռ	.	.	.	.	.	19
Տրոհումն	.	.	.	.	.	106
Յուցումն	.	.	.	.	.	15
Փակագիծ	.	.	.	.	.	86
Փաստ	.	.	.	.	.	15
Փոխարերութիւն	.	.	.	.	.	43
Փոխանունութիւն	.	.	.	.	.	45
Փոխառութիւն	.	.	.	.	.	50
Քարտզ	.	.	.	.	.	134

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ

ԱԿԱԴԵՄԻԱՑ



